



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. Ա. ՃԱՌԱՍ. ԿԱՆԻ ՄԸ
ՈՒՂԵՑՈՅՅԸ

ԿՐԵՑ
ՓԱՍՏԱԲԱՆ
ԿԱՐՍՊԵՏ ՍՈՂԱԿԵԱՆ

ՄԱՍՆ Ա.



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԵՐԸՆԱՆ ԵՒ ԸՅԻ.

Պատր ալի նաստիպ, Թիւ 38

1903

347.7

u-66

9.15.

6



1877. 2d ed. - 1st
Lond. 1877. 10s.

01 MAR 2010

LIBRAIRIE S. H. WEISS
E. MEYER Propriétaire
vis-à-vis le Consulat de Russie
CONSTANTINOPLE

347.7 Վ.Ա.ՃԱՌԱՌԱԿԱՆԻ ՄԸ

Ա-66

ԱԿՈՒՂԵՑՈՅՑԸ

630

154-00



ՓԱՍՏԱԲԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՍՈՒՆԵԱՆ



ՄԱՍՆ

Handwritten signature and date '1903' in blue ink.

10901
10903

معارف نظارت جلیله سنک و مطبوعات داخله اداره علیه سنک ۳۴۰
نومروى رخصتيله طبع اولمشدر .



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊՈՂԲ. Մ. ՍԱՐԸՆԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պայք Այի հաստակի, Թիւ 38

1903

01 AUG 2013

17452

36.115

Յ Ա Ռ Ա Չ Ա Ր Ա Ն

Բնութեան մեջ գոյութիւն ունեցող ամեն բան՝ իր պատշտօնը եւ իր օրէնքն ունի, մարդիկ ալ ճիշտ այս կերպով կեանքի կռուանին վրայ՝ իրենց զանազան գործ եւ դերերն ունին: Ի՞նչ է այս գոյացութեանց պատճառը եւ նպատակը. ասոնց պատճառը հեղինակին գոյութիւնը ապացուցանելն՝ եւ նպատակը հեղինակն ու հեղինակեալը իրարու հետ կապելն է. ինչպէս որ երբ ձեռքերնիս նիւթ մը առնենք եւ սկսինք անոր պատճառները որոնել, շատ մը պատճառներ երեւան կուգան, եւ երբ հետզհետէ այդ պատճառներու շարքը ջնջելով առաջ երթանք, բուն պատճառի մը կը յանգիմք որ էն: Ուստի ըսել է թէ, պատճառողի եւ պատճառեղինաց մեջ՝ որ աւելի ճիշտ հեղինակի եւ հեղինակեալի մեջ՝ յարաբերական պատշտօն եւ օրէնք մը կայ, որոյ առթիւ ամեն բան կանոնաւոր առանցքի մը վրայ կը դառնայ: Այդ յարաբերական թելը՝ մարդուն իմացականութիւնը եւ բնագոյնն է, որուն միջոցաւ մարդ կ'իմանայ թէ ո՞ր կէտէ բխած է ինք, ի՞նչ է ինք եւ ի՞նչ պիտի ըլլայ ինք: Ինչպէս նաեւ իմացականութեամբ կ'որոշէ գէտը աղէկէն, չարը բարիէն. կը սկսի խորժիլ չարէն եւ գեշէն. կը սիրէ միտիլ դէպ ի գեղեցիկն ու բարին: Թեպէտէ իմացականութիւնը միեւակ մարդուն մեծաւորհեալ չէ, բովանդակ կենդանական մարմիններ՝ նուազ կամ առաւել իրենց բաժինը ունին. սակայն մարդ՝ ասոնց գերագոյն տեղը եւ բուն իսկ բովանդակ գոյացութիւններու հիւրի եւ նիւթի շաղախէն կազմուած փոքրիկ տիեզերք մը ըլլալով, անոնցմէ շատ աւելին ունի. ասոր համար է որ մարդուն կոչումը

բարձր եւ վսեմ է: Քանի որ ամեն բան մարդուն ենթա կայ ստեղծուած է, բնականաբար անոնց վրայ սիրապե տելու պարսկանութիւն մըն ալ դրուուած է իր վրայ, որով մարդ իր այս սիրապետական պատասխանատու քիւններով օժտուած՝ համարատուութեան պարսկանու քիւն մըն ալ ստացած է առ իր Տէրը, այն է խղճի ձայնը:

Ճշմարիտ է քէ խիղճը բնածին է մարդուն մէջ՝ ա մեն դասակարգի մարդ նուազ կամ առաւել բան մը ունի. բայց սա անուրանալի է որ մարդուն ստացած կրթութիւնը խղճին վրայ մեծ տալուորութիւն կը գործէ, կամ աւելի կը մեակէ, կ'ազնուացնէ եւ կամ քէ իս պառ կ'ընդարմացնէ: Վայրենի ժողովուրդ մը բնակա նաբար խղճի նոյնչափ նուրբ գիտակցութիւն չունի, ինչ որ ունի քաղաքակրթեալ ժողովուրդ մը. բայց պէտք է գիտնալ որ, մարդ որչափ որ ալ զարգանայ, խղճի բն բնուածը իրարմէ կրնայ տարբերիլ: Զոր օրինակ, պահ մը ենթագրեմք քէ բովանդակ մարդիկ՝ զինուորական դրու քեամք՝ ամենն ալ առանց ո եւ է արտաքին նշեման ինքնակի զգան պարտք իրաւանց գիտակցութիւնը, երբեք իրարու վնաս չը հասցնեն՝ խաղաղ, հաւասար ապրին. բայց սա ալ անկարելի է, վասնզի նախ որ բնութիւնը արդէն մարդոց յատկապէս անհաւասար ձիւրք եւ բնոյթ, ձեւ եւ հասակ տուած է, որպէսզի մարդիկ իրարու պէտք եւ առնչութիւն ունենան, սխալուին ընկերակցութեամք ապրիլ, ձգտիլ եւ յառաջդիմել. արդէն բուն հաւա սարութիւն այս անհաւասարութեան մէջ կը կայանայ: Երկրորդ՝ որովհետեւ մարդոց բնութեան խմորը միտ երկրայինին հակամտ է. հետեւաբար մարդ աւելի հե տամուտ է հանգիստ եւ առատ ապրելու, եւ չունեցածն ունենալու եւ ունեցածն ալ աւելցնել ձգտելու. անոր

համար անկարելի է որ չնախանձի իր ընկերի վիճակին եւ տարբեր խիղճով չը դատէ զայն. միքե՞ նոյն իսկ զին նուրականութեան մէջ անհաւասարութիւն չկայ, մէկը սպայ՝ միւսը զինուոր չէ՞ն, եւ կամ քէ ո՞ր զինուորը չը փափախիր սպայ ըլլալ: Երբ այս սպան չըլլայ ո՞վ որին պիտի կառավարէ. արդ ըսել է որ՝ մարդ առանց խղճի մարմնացում եղող Կառավարութեան եւ անոր Օրէնքին՝ ինքզինք չի կրնար կառավարել, եւ ամբողջ մարդկութիւն հաւասար չափով չի կրնար ձեւուիլ: Ատոր համար մարդիկ մտածեցին խղճի հիման վրայ Կառավարութիւն եւ Օրէնք հաստատել, խիղճը պարտաւորութեան տակ ղենել. սանձ մը ղենել մարդոց յեզուին, սահման մը գծել մարդոց արտաքին եւ չափ մը սահմանել մարդոց իրաւանց, որուն պատճառաւ մարդկութիւնը աւելի խաղաղ եւ հանդարտ վիճակ մը ունեցաւ եւ աւելի զարգանալ սկսաւ:

Որով մարդ ստիպուած է ընկերականութեամբ ապրիլ, եւ անոր պայմանները գիտնալ, եւ անոր համեմատ վարել իր գործառնութեանց ղէկը: Ապա քէ ոչ՝ պիտի նմանի անուղեցոյց եւ անղէկ նաւուն, որ ինքզինքը կը ձգէ փշոջ հովին:

Օրէնքները գլխաւորապէս երկու կարգի կը բաժ նուին. Ա. *Գերբնական օրէնք*, որ է խղճի ձայնը, եւ անկէ բոլորած հնաւանդ սովորութիւնները, որոնք ժա մանակի օրէնսգիրներ հաւաքելով Օրէնք կազմած են. Բ. *Իրական օրէնքներ*՝ որ ժամանակի պէտքին համեմատ օրէնսգիրներ՝ նոր նոր օրէնքներ սահմանելու պէտք զգացած են: Գերբնական օրինայ պարագաներու վրայ խօսիլը մեր նիւրբն դուրս ըլլալով, զանց կ'առնենք: Այլ գալով դրական օրինաց. ամեն ոք գիտէ քէ մարդոց քիւր որ աստիճան դր անցաւ, ապրուտ հայրապետ

լու գործն ալ այնչափ դժուարացաւ . պէտքեր բազմապատկեցան . մեցումը, ձգտումը նոյն համեմատութեամբ աւելցան : Նախնի մարդը՝ արդի մարդուն հետ բաղդատեցելով՝ ապրուստ հայրայրեղու գործին մեջ այնչափ դժուարութիւններ չէր փառեր եւ եղածն ալ շատ նախնական վիճակի մեջ էր, սակայն յաջորդական անումը յառաջ բերաւ յաջորդական զարգացում եւ յաջորդական դժուարութիւն :

Ճիշդ միեւնոյն կերպով վաճառականութեան կերպ եղանակն ալ զգալի փոփոխութիւն եւ բարեօճում կրեց . նախնի ժամանակներու մեջ՝ ուր հաղորդակցութեանց աննպաստաւորութեան պատճառաւ վաճառականութիւնն իրիս սահմանափակ վիճակի մեջ էր, այն ասեմ իւրաքանչիւր ժողովուրդ տեղական ընկալեալ սովորութեամբ կը կառավարուէր, բայց յորմէնտէ հաղորդակցութեան միջոցները ընդարձակուեցան եւ մարդիկ սկսան աշխարհի մէկ ծայրէն միւս ծայր իրարու հետ առեւտուր եւ յարաբերութիւն ունենալ . բնականաբար ալ եւս չէին կրնար իրենց մասնաւոր սովորութեամբ եւ օրէնքով մնալ, այլ օրէնքները իրենց դրացիներու սովորութեանց եւ օրէնքներու ալ համակերպիլ . որով աշխարհի ամբողջ առեւտրական սովորութիւնները եւ օրէնքները հետզհետէ իրարու հետ խառնուելով՝ ընդհանուր զանգում մը կազմեցին եւ ամէնուն համար ալ ընդունելի դարձան :

Վաճառականութիւնը բնականաբար պէտք չէ բնականաբար կերպսի եւ կամ մեծաքանակ ներքերու վրայ եղած գործառնութիւնէ . այլ ինչպէս *Վաճառական* բառնին մեջ ընդ արձակօրէն խօսած ենք, այսօր բազմատեսակ դարձած է . միով բանիւ այն ամէն գործառնութիւնն որ ներքապէս շահելու դիտումով հաստատուած են՝ վաճառականութիւն կը համարուին :

Փորձառութեամբ տեսած եմ որ վաճառականութեամբ եւ առեւտուրով զբաղողներէն շատերը՝ սակաւին չեն գիտեր իրենց գործին վերաբերեալ օրէնքները եւ պայմանները, անոր համար շատ պարագաներու մեջ կը տատանուին եւ կը վեհերին գործելու, եւ կամ մեծ վեհերու եւ դժուարութեանց կ'ենթարկուին . մեղադրելի չէ այս, վասնզի իր գործի բնոյթն եւ պայմանը չգիտցող մէկը՝ բերի գործի ունեցող տէր վարպետի մը կը նմանի, զոր կատարեալ գործ չի կրնար արագրել : Երբ ոմանք հաւակնին քէ դպրոցին մեջ ուսած են կարգ մը ուսումներ . բայց պէտք է գիտնալ որ, այս ամէնը՝ դպրոցի սեմէն ներս կը մնայ . զի յորմէնտէ առեւտրական հրապարակի վրայ կ'իջնայ, իր տեսածը լսածէն շատ քիչեր կը գտնայ . իւրաքանչիւր շարժումին օրէնքի մը քիչին կը հպի եւ ամէն մէկ փայլափոխին օրէնք գիտնալու նոր պէտքին կը հանդիպի, ուսի երբ կ'ուզէ դժուարութիւն ջնջել, ուրեմն պէտք է գիտնալ շարժելուն ձեւը, փայլուն եղանակը եւ համբուն ընթացքը :

Յաւալի է որ այս ուսումը մեր դպրոցներուն մեջ դեռ լիովին մուտք չէ գտած եւ այս նիւթին վրայ հրապարակի վրայ կարելուր երկասիրութիւններ չէ եղած, վարած ուսուցչական եւ այժմեան փաստաբանական պատճօնիս բերմամբ, սա գաղափար կազմած եմ քէ օրէնքագիտութեան ծարաւ մը կայ մեր մեջ, որուն համար ես ալ ջանայի պզտիկ գաւաթով մը ջուրը մատուցանելու ծառայութիւնը ընել :

Քեզ շնորհիւ Բարեխնամ Ուսումնասէր եւ Հպարտական Վեհաօրհմ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ ԽԱՆ ՂԱԶԻ ԿԱՅՍԵՐ, օրէնքի ուսումը ժողովրդեան ամէն դասակարգի մասշնչի ընելու համար, ամէն միջոցներ ընձեռնուած են . սակայն անոնք՝ օրինաց զանազան

նիւղեռու բոլոր մանրամասնութիւններով խտացեալ ըլ-
լալով՝ այնչսփ բնդարձակութիւնէն բուն վանառականի
մը պէտք եղած կէտերը երեւան բերել խիստ դժուար
գործ մըն է, որուն համար ես ալ ջանացի անոնցմէ,
գործի սիրոջ մը համար պէտք եղած հրահանգները հա-
ւաքելով այս ՈՒՂԵՑՈՅՑը պատրաստել:

Յուսալով թէ յարգոյ հասարակութեան կրնայ օգ-
տակար ըլլալ:

Կ. Գ. ՍՕԼՆԻԵԱՆ



Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ի Մ Ը

Ո Ւ Ղ Ե Ց Ո Յ Ց Ը



Ա.

Օտմ. Կառավարութեան դատարանները եւ անոնց
յարակից Օրէնքները վեց բաժանում ունին:

Ա. ՄԱՀՔԷՄԷԻ ՇԷՐԻՅԷ (Կրօնական Դատարան). —
Այս դատարանը Մանմետականներու թէ՛ ամուսնու-
թեան, թէ՛ ամուսնալուծութեան և թէ՛ ամուսնալու-
ծութենէ վերջ կնոջ և զաւակաց տրուելիք ապրուստի
(նաճագա) վերաբերեալ խնդիրները կը նայի:

Ընդհանուր հպատակաց որբերու (եքթիմ), ցնորած-
ներու (մաքուհ), չափազանց մօխող և անմիտներու
(սեփիհ), և ուրիշ այս կերպ անձանց՝ (որոնք խնամա-
կալութեան կարօտ են) գործերը կը անօրինէ, անոնց
պատկանած կալուածներն ու ստացուածները կը կա-
ռավարէ:

Եթէ այս կերպ անձանց մասին, « ինքզինքնին կա-
ռավարելու անբաւական են » ըսելով, ու է կողմէ մը՝
բողոք ըլլայ, զայն նկատողութեան կ'առնէ. եթէ ի-
րաւացի գտնէ, զանոնք արարքի ու խօսքի վաւերա-
կանութենէ (զավլ վէ քեսարրուֆտան հաճր հոտեր) կը
զրկէ. այսինքն այլ ևս անոնց ո՛չ խօսքերը և ո՛չ ա-
րարքները վաւերական չեն կրնար ըլլալ:

Նոյնպէս այս դատարանը՝ վիժածի մը , սպանեալի մը ժառանգորդներուն վճարուելիք արեան գինը (տի- յիք) և կամ սպաննողին գլխատման (իտամ) վերա- բերեալ գործերը կը նալի : Ինչպէս նաև ի կորուստ եղող ժառանգորդներու (վարխի դայիպ) պատկանած բաժինը կը պահպանէ , մինչև անոնց երեւան ելլալը : Մեռնողի մը ստացուածքը կը գրէ (քահրիթ քերէքէ հտեր) , որբերուն խնամակալ (վիլի , վասի) կը կարգէ , անոր պարտքերը ստուգելէ վերջ կը վճարէ , և ապա մնացեալ մասը ժառանգորդաց վրայ կը բաժնէ : Մեռ- նողին ըրած կտակի (վասիթ) տրամադրութիւնները կը գործադրէ :

Վազըֆ կալուածներու և գետիններու (ագարաք վե արազիի մեվգուֆե) վերաբերեալ բովանդակ դատերը (ի բաց առեալ վարձու տրուած կալուածի վարձքէն) և անոնց բաժանման (քագաիմ) , և բաժնետէրերու մէջ փոփոխակի գործածուելու (մուհայթե , կետիկ վե ճիհեթ) (բարեպաշտական հաստատութեան մը մէջ , որգւոց որ- զի յաջորդաբար , թոշակաւոր ծառայելու պայմանաւ , հիմնարկողին կողմանէ տո՛մի մը յատկացուած պաշ- տոն) ու ասոնցմէ ծագած գործերն ու վէճերը կը նայի . ինչպէս նաև մզկիթի (ճամիի շերիֆ) և ուրիշ բարե- պաշտական հաստատութեանց մատակարարութիւնները կ'ընէ և անոնց պահանջները կը դանձէ :

Ասոնցմէ զատ որբերու և այլ հաստատութեանց իր քով գտնուած ստակները , հարիւրին մէկ շահով և հաստատուն երաշխաւորութեամբ , տոկոսի կուտայ , և ի հարկին երաշխաւորներէն կը դանձէ :

Իւրաքանչիւր Գաւառի և Նահանգի մէջ , մէկ Մահ- քեմէի Շերիէ կայ , բայց միայն կուսակալանիստ քա-

ղաքները մէջ՝ մէկ ալ էվգաֆ տաիրեսի (Բարեպաշ- տական հաստատութեանց վարչութիւն) կայ :

Իսկ Մայրաքաղաքիս մէջ՝ Ըստամպոյ գատըլըղի և Մանուտ փաշա , Տալուտ փաշա և Թահթա գալի ան- ուամբ քանի մը կեդրոնական Մահքեմէի շերիէ ըլլալէն զատ , երեք արուարձաններու (պիլատը սիւլիստե) մէջ , որք են՝ Իւսկիւտար , Ղալաթիա , և էյուպ մէկ մէկ Մահքեմէի շերիէներ կան :

Ասոնցմէ գերագոյնը՝ Պոլսոյ մէջ մէկ Ֆեթվանագէ և ասկէ գերիվեր՝ մէկ ալ Թեքիգաքը շերիէի տեսաններ կան , որոնք քաղաքական (ճիգամիի) տեսակէտով՝ Ֆէթվանանէն քեմիլզի (վճռաբեկութեան) և Թէտգի- գաթն ալ խսրիմաֆի (վերաքննութեան) պաշտօնները ունին . վասնզի Շերիէի մէջ՝ թէմիզը իսթիմաֆէն առաջ է , իսկ իսթիմաֆը վերջ :

Գաւառներու մէջ՝ (դաշրատա) Մահքեմէի շերիէնե- րէն , ինչպէս նաև Պոլսոյ և Արուարձաններու շերիէի դատարաններէն տրուած վճիռներու տրամադրութիւնը չընդունող անձը , իրեն աննպաստ տրուած վճռագրի օրինակը իրեն հաղորդուելէն մինչև երեք ամիս , վերո- յիշեալ Ֆէթվանանէն կրնայ դիմել և իր առարկութիւն- ները ընել :

Ֆէթվանանէն՝ առանց դատավարութեան մտնելու , այլ միայն երկու կողմէ ներկայացուած թուղթերու վը- բայ՝ օրինական պրպտումներ կատարելէ վերջ , եթէ տրուած վճիռը օրինաւոր գտնէ , կը վաւերացնէ . իսկ եթէ սպօրէն գտնէ , կը բեկանէ , և զայն նախկին վը- ճիւռ տուող դատարանին կը վերադարձնէ ամբողջացնե- լու համար : Բայց եթէ հարկ տեսնայ , կրնայ իրմէ վեր գտնուած Թետգիգաքը շերիէին յանձնել :

Ֆեթվանագէն՝ վճիռ մը բեկած պարագային , երկու

հակառակորդ կողմերը , դատէն առաջ եղած նախկին վիճակը կը վերստանան . անոնցմէ ո՛վ որ պէտք զգայ վերստին դատի ելլալու , առանց որոշ պարտա- նաժամ մը ունենալու , կրնայ Թէտգիգաթը շէրիէն դիմել և իր առարկութիւնները մէջ բերելով՝ Ֆէթվաճանէի որոշման դէմ բողոքել :

Թէտգիգաթը շէրիէն՝ եղած բողոքը եթէ բանաւոր գտնէ , Շէրիէի տուած վճռագիրը (իլամ) կը վաւերա- ցընէ . իսկ եթէ ջնջելու պէտք տեսնայ , գործը եթէ հինգ հազար զրուշ արժողութենէ պակաս է , վերաքննու- թիւն կատարելու համար (իւտեքեկ րույեք) նախկին վճիռ տուող դատարանին կը վերադարձնէ . իսկ եթէ հինգ հազար զրուշ արժողութենէ բարձր է , այն պա- րագային՝ այդ գաւառին մօտ եղող ուրիշ գաւառի մը Մահճէի շէրիէին կը յանձնարարէ :

Մահճէի շէրիէի մէջ՝ Գործադիր պաշտօնութիւն (Շերիէե իճրա) մըն ալ կայ , որ Շէրիէի վճռագիրները կը գործադրէ . իսկ գաւառներու մէջ՝ այս պաշտօնը քաղաքական իճրային (ցիգամիյե իճրա տայրեսի) արուած է :

Շէրիէի մէջ՝ վճռագրի մը մինչև որ առարկութեան (իյրիրագ) ժամանակամիջոցը չըրանայ , չի կրնար գործա- դրութեան դրուիլ : Իսկ որբերու , խնամակալութեան և ապրուստի վերաբերեալ վճիռները , ասոնցմէ բացառիկ ըլլալով , կրնայ անմիջապէս գործադրութեան դրուիլ :

Այս կերպ բացառիկ իրաւասութիւն վայելող անձե- րու պարտք ունեցող մէկը , եթէ դժկամակի իր պարտ- քը վճարել , պահանջատէրը առանց պարտապանին կարողութեան տէր ըլլալը հաստատելու և առանց օրա- կան հինգ դահեկան ապրուստի ծախս վճարելու , իննը- սուն և մէկ օր կրնայ զայն բանտարկել տալ :

Բ. ՄԱՀՔԵՄԷԻ ՀՈՒԳՈՒԳ (Պարզ Իրաւանց դաս- օրան) . — Այս դատարանը՝ վաճառական չեղող անձերու և այրնետաւորներու մէջ կատարուած առուծախի (պէյուշերա) , երաշխաւորութեան (քեֆայեք) , աւանդի (եմանեք) , գրաւի (րեհիկ) , ընկերութիւն հաստատելու (ագուք շիրքեք) , պայմանակցութիւններ կատարելու (ագուք մուգալիյե) , վնասի հատուցման (գարարը գի- էան) , ստանձնութեան (քեանհիւտ , իյրիգամ) , չար- ժական և անշարժ կալուածներու , մինչև իսկ վագրքի կալուածներու վարձակալութեան (իճար , իյրիճար) , ինչպէս նաև զուտ միւլք (եմիագը սըրֆե) և վագրքի չե- ղող գետիններ և արտերու (ագարաք վե արագիլի դայրը մեկլուֆե) , վերաբերեալ ամէն կերպ դատերը և ասոնց յարակից բաժանման (քագսիմ) , փոփոխակի գործածու- թեան (մուհայեկ) , արգելում (հաճգ) դնել և վերցը- նելու (Ֆեքքի հաճգ) պատկանող գործերը կը նայի :

Իւրաքանչիւր գաւառի և նահանգի մէջ մէկ մէկ Հուգուգի դատարան կայ , որ կը բաղկանայ նախա- գահէ մը , և երկու անդամներէ :

Միայն Կուսակալանիստ քաղաքներու մէջ (միլիայեք) , վերաքննութեան դատարան (իյրիհաճ) մըն ալ կայ , որ կը բաղկանայ նախագահէ մը և չորս անդամներէ :

Գաւառակներու (զագա) և Գաւառներու մէջ (տան- ճագ) , գտնուած Հուգուգի դատարաններէն տրուած հինգ հազար դահեկան արժողութենէ վեր վճիռները չընդունող կողմը , կրնայ իսթիհաֆին դիմել և վերա- քննութիւն պահանջել :

Իսկ հինգ հազար զրուշն պակաս արժողութիւն ու- նեցող վճիռները , հոն՝ իսթիհաֆ չեն կրնար ըլլալ , այլ Պոլիս , Վճռարեկ աստանին (քեմիկ) կրնայ դիմուիլ :

Գալով Պոլսոյ Հուգուգի դատարաններուն , տեղին

մեծութեան և գործերու բազմազանութեան պատճառաւ, երկու ճիւղի բաժնուած են՝ Ա. ՊԻՐԻՆՃԻ ՀՈՒԳՈՒԳ (Ա. Իրաւանց դասարան) և Բ. ԻՔԻՆՃԻ ՀՈՒԳՈՒԳ (Բ. Իրաւանց դասարան): Երկուքն ալ միեւնոյն պաշտօնը ունին, բողոքողը՝ որուն որ ուզէ, անոր կրնայ դիմել: Աստօնցմէ զատ՝ Արուարձաններու մէջ, մէկ մէկ հատ ալ Հուզուզի դատարան կայ. բացառիկ ըլլալով՝ Բերայի կողմը, իր գիւղերով, աւելի բազմամարդ ըլլալուն համար, երկու դատարան կայ. Առաջին հուզուզ և Երկրորդ հուզուզ անուաներով, որոնք դարձեալ մի և նոյն պաշտօնը ունին և բողոքողը որուն որ ուզէ անոր կրնայ դիմել:

Իսկ Պոլսոյ մէջ Իսթիլմաճ հուզուզի դատարանը մէկ հատ մըն է. գաւառներու վերաքննութեան դատերը հոս չեն իդար, այլ միայն՝ Պոլսոյ եւ Արուարձաններու վերաքննութեան դատերը հոս կը քննուին: Պոլսոյ մէջ՝ Վճռաբեկ ատեան (րեմիզ) մըն ալ կայ, ուր Գաւառներու և Պոլսոյ բովանդակ մեծ և փոքր դատերը կըրնան քննուիլ:

Գ. ՃԵԶԱ ՄԱՀՔԵՄԷՍԻ (Պատմական դասարան) - Այս դատարանը՝ զուտ պատժական գործերը կը նայի և ճիշտ Հուզուզի բաժանումը ունի:

Տեվայիրը սույնի (Իրաւարար սեւան). Այս ժողովը գիւղական եւ թաղային իխթեար մէճլիսներէ կը բաղկանայ, որոնք երկու կողմանէ եղած դիմումին վրայ և երկուքին հաւանութեամբ կրնան իրաւանց վերաբերեալ շատ մը խնդիրները համաձայնութեամբ կարգադրել. բայց հարիւր յիսուն զրուշ արժողութենէ պակաս խնդիրները կրնան առանց մէկ կողմի հաւանութեան՝ բացարձակապէս վճուել, այս որոշումները կըրնան թէմիզ ըլլալ: (Այս դատարանը այժմ ջնջուած է):

Գ. ՄԷՀԱՔԻՄԻ ԻՏԱՐԷ (Վարչական դասարան). Այս դատարանը յատկապէս պաշտօնէից գործած ղեղձմանց (իքթիքեապ) և կամ անոնց կառավարական դրամ իւրացման (իխթիլաս), կաշառակերութեան (րիւշլեք) և ասոնց վերաբերեալ դատերը կը նայի:

Նահանգներու և Գաւառներու մէջ՝ Գաւառական վարչային ժողովը (Մեճլիսը իտաքեն) կը կատարէ այս պաշտօնը:

Իսկ մայրաքաղաքիս մէջ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ (Շուրայի Տեվլեք) այս դերը կը կատարէ որ բաժնուած է պիտայեքի (նախնական), իսթիլմաճի (վերաքննութեան) և րեմիզի (վճռաբեկութեան) ճիւղերու, և դատերը տեղի կ'ունենան միւս դատարաններու դրութեամբ:

Ե. ՄԷՀԱՔԻՄԸ ԱՍՔԷԻՐՅԷ (Զինուորական Ատեան) — Այս ատեանը՝ զինուորական շրջանակի մէջ կատարուած ոճիրները, գործերը և ոչ-զինուորականի մը զինուորականի մը պաշտօնին մասին եղած բողոքները կը նայի:

Այս ալ ճիշտ Վարչական ժողովի (մեհաքիմը իտաքեն) ի բաժանումը ունի:

Զ. ԲԱՐԻՐԻՔԵՍԱՆԷ ՄԷՃԼԻՍԻ (Պատրիարքութեան ժողով). — Այս ժողովները Պատրիարքութեանց մենաշնորհ եղող՝ ներքին կրօնական, դպրոցական, ամուսնութեան, ամուսնալուծութեան, դրամօժիտի, կտակի, յետ ամուսնալուծութեան կնոջ և զաւակաց տրուելիք սպորուտի վերաբերեալ գործերը կը նայի. մէյմըն ալ՝ երկու կողմէն եղած դիմումին վրայ, երկու կողմի համահաճութեամբ՝ իրաւարարութիւն կրնայ ընել:

Այս կերպ խնդրոց մասին տրուած որոշմագիրը Շէրիէի իճրային մէջ ընդունելի և գործադրելի է:

Եթէ ո ե է մէկը , արուած որոշումին դէմ առարկութիւն մը ընէ , Իճրան զայն Պատրիարքարանի ժողովին կը վերադարձնէ , հոն վերստին քննութիւն կատարուելու համար : Ժողովը կրնայ նախկին որոշումը կամ բարեփոխել և կամ վերահաստատել . և անկէ յետոյ , Իճրան առանց ո ե է առարկութիւն մը ընդունելու բացարձակապէս զայն կը գործադրէ :

Է. ՔՕՆՍՈՒԼԱԹՕ ՄԷՃԼԻՍԼԵՐԻ (Հիւպատոսարանի ժողովներ) . — Այս ժողովը իրեն պատկանող հպատակներուն մէջ եղած առեւտրական վէճերը և ոչ-կալուածական վէճերը կը նայի : Իսկ կալուածական դատերը Օսմ. դատարանի մէջ կը նայուին :

Ը. ԹԻՃԱՐԷԹ ՄԱԼՔԷՄԷՍԻ (Առեւտրական դատարան) . — Այս դատարանը երեք բաժանում ունի . Ա. Պիքիցնի քիմարէք վե Էս մեհլիսի մուխթիլդ (Առաջին Առեւտրական դատարան և կամ Օտարախառն ժողով) . Բ. Իքիցնի քիմարէք (Երկրորդ Առեւտրական դատարան) . Գ. Մահքեմեի պահրիէ (Մովային Առեւտրական դատարան) :

Ա. Պիքիցնի քիմարէք . — Այս դատարանը Օսմ. հըպատակ և ոչ Օսմ. հպատակներու մէջ ծագած ոչ-կալուածական ամէն կերպ առեւտուրի խնդիրները , պայմանները և ամէն կերպ դատերը կը նայի : (Բացառեալ սնանկացնելու և կալուածներու վրայ արդելում [հաճը] դնելու իրաւասութիւններ կը վայելէ) : Այս ժողովը նախագահէ մը և չորս անդամներէ կը բաղկանայ , որոնց երկուքը Օսմ. հպատակ և երկուքն ալ ոչ Օսմ. հպատակներէ կ'ընտրուին : Ըստ միջազգային օրինաց՝ իւրաքանչիւր կառավարութիւն , այս ժողովին՝ երկու անգամ

ներկայացնելու իրաւունք ունի , որոնք մի միայն իրենց հպատակներու դատին առթիւ ներկայ գտնուելու իրաւունք ունին , իսկ միւս հպատակներու դատին ո՛չ , ինչպէս նաև իրենց թարգմանը . բայց թարգմանը քուէ տալու իրաւունք չունի :

Այս դատարանին վերաքննիչ և վճռարեկ ատեանները չկան : Ինչպէս նաև դատի չեկող բողոքեալին համար վեքիլի միւսախար (բացակայութեան փոխանորդ) կարգելու օրէնք չկայ :

Պաշտօնական լեզուն թուրքերէն է , սակայն Փրանսերէն լեզուով ալ դատավարութիւն կրնայ ըլլալ . բայց արուելիք վճռագիրը թուրքերէն լեզուով կը գրուի :

Այս դատարանին տուած բացակայութեան (դիւեայի) վճիռը չընդունող անձը , վճռագիրը իրեն հաղորդուելէն (քեպլիդ) մինչև 15 օր , միեւնոյն դատարանի մէջ իր առարկութիւնը (իյքիրազ) կրնայ ընել :

Իսկ ի ներկայութեան արուած վճիռը (հիւֆի վիճահի) չընդունող անձը , նոյնպէս վճռագիրը իրեն հաղորդուելէն մինչև 121 օր , կրնայ միեւնոյն դատարանին խնդրագիր մը տալով , վերագատութիւն (իյատիլի մուհաքեմ) պահանջել : Ասկէ վերջը ալ ուրիշ ո ե է դիմում ընդունելի չէ :

Այս դատարանին վճիռը , Թիճարէթի Իճրան կը գործադրէ . միայն թէ հիւպատոսարանի աջակցութիւնը պարտաւոր է խնդրել :

Բ. Իքիցնի քիմարէք . — Այս դատարանը՝ վաճառականներու , մեծաքանակ դործ ընող արհեստաւորներու և սեղանաւորներու մէջ եղած առեւտուրի , ընկերութեան , յանձնարարութեան (սիբարիլ) , գործակատարութեան (գումիսիցնըլդ) , սնանկութեան , վընասու հատուցման , հրամանի մուրհակներու վերաբեր-

եալ դատերը կը նայի : Ինչպէս նաև բողոքեալ կողմ՝ (միւտուայիւն այիյն) եթէ վաճառական է (այս պարագային խնդիր չէ թէ բողոքողը վաճառական մը չէ , բաւական է որ գործառնութիւնը վաճառականութեան տեսակէտէն բղխած է .) ասոր վրայ բողոքուած այս կերպ դատերը կը նայի . միայն շարժական ասորանքներու վրայ արգելում (նստօր) կը դնէ , կը վերցնէ (վասն զի կալուածներուն վրայ արգելում դնել ու վերցնելու իրաւասութիւնը բացարձակապէս Հուգուզին կը պատկանի) :

Այս դատարանը նախագահէ մը և երկու անդամէ կը բաղկանայ :

Գ. Թիւրքի պահրիե (Ծովային առեւտրական դատարան . — Այս դատարանը ծովային բովանդակ առեւտրական գործերու , այսինքն շոգենաւերու , նաւերու , ծովային շինուածքներու վերաբերեալ դատերը կը նայի :

Վերջերս կայս. Բարձր. հրամանով մը՝ զուտ սնանկութեան վերաբերեալ գործերն ալ աւելցուեցան իր պաշտօնին վրայ , այնպէս որ՝ վաճառական մը երբ իր ձեռին ունեցած հրամանի մուրհակին յենած՝ վաճառականի մը վրայ բողոքէ , և անոր անմիջական վճարում և կամ հակառակ պարագային սնանկութիւն պահանջէ , այն ժամանակ՝ դատարանը , առանց խնդրոյ էութեան թափանցելու , այսինքն թէ՛ բողոքողն իրաւունք ունի՞ թէ ո՛չ , միայն խնդրոյն օրինական ձեւակերպութիւնները ու ստորագրութեան ճշդութիւնը պրպտելէն և ոտուգելէն յետոյ , բողոքեալ վաճառականին կ'առաջարկէ , կամ իր ի կարողութեան ըլլալը իրապէս հաստատելու համար բողոքուած գումարը բերէ դատարանի ստուկը աւանդ [տեխոզիթ] ձգէ և կամ սնանկանայ : Բողոքեալ պար-

տապանը (միւտուայիւն այիյն) եթէ այդ պարտքի վճարած ըլլալը կամ ուրիշ առարկութիւնները հաստատող թուղթեր երեւան հանէ , դատարանը այն ատեն խնդրոյ էութեան կրնայ թափանցել , ապա թէ ո՛չ կամ աւանդ կ'ուղէ և կամ սնանկ կը հռչակէ : Աւանդ ձգելու համար դատարանը 2-3 օր ժամանակ կուտայ : Եթէ որոշեալ օրին բողոքեալը՝ որոշուած գումարը բերէ աւանդ յանձնէ , դատարանը այն ատեն « բողոքեալ . . . էֆ. աւանդը ձգելով , իր ի կարողութեան ըլլալը կրցաւ հաստատել , որուն պատճառաւ բողոքողի խնդրագիրը մերժուեցաւ . » ըսելով այլ ևս խնդրոյ էութեան առանց թափանցելու դատը կը մերժէ , ու այն պարագային՝ բողոքարկուն (միւտուայի) կը պարտաւորի Իքինճի Թիւճարէթին դիմել , բողոքեալ վաճառականը հոն դատի հրաւիրել . յետ դատավարութեան՝ եթէ պահանջը իրաւացի ըլլայ , ծովային դատարանի մէջ ի պահեստի եղած գումարը բողոքարկուն տալու կ'որոշուի , իսկ եթէ անիրաւ ըլլայ՝ վերստին բողոքեալին վերադարձնել կ'որոշուի :

Սակայն Թիւճարէթը Պահրիէի մէջ բողոքեալ մը իր ի կարողութեան ըլլալը (աւանդ ձգելու եղանակով) հաստատել չկրցած պարագային , սնանկ կը հռչակուի : Դատարանը այլ ևս այս մասին պէտք եղած գործողութիւնները մինչև խնդրոյն վախճանը կը վարէ :

Այս դատարանը նախագահէ մը և երկու Օամ. հպատակ անդամներէ կը բաղկանայ . իսկ եթէ ծովային խնդիրներու մէջ մէկ կողմը օտարահպատակ ըլլայ , այն ատեն պատկանող կառավարութեան կողմէ երկու ալ օտարահպատակ անդամներ կուգան , որով անդամներու թիւը չորսի կը բարձրանայ : (Հոս ալ Պիրինճի Թիւճարէթի օրէնքին համեմատ թարգմանները քուէ չունին) :

Գ. Յանձնակատարութիւն ընողները (գօմխիօնօնըբգ հոտեկիբ), այսինքն անոնք՝ որոնք երկու հեռաւոր վաճառականներու և կամ թէ վաճառականի մը և գործարանատիրոջ մը մէջ, եղած ապրանայ գնման, ուղարկման և արժէքը գանձելու, վճարելու և այլ այս կերպ յարաբերութեանց միջնորդութիւնները կ'ընեն :

Ե. Ծովու, գետի և ցամաքի վրայէն՝ ապրանքի և մարդու փոխադրութեամբ զբաղողները, որք են նաւերով, շոգենաւերով, թրամվայով, երկաթուղիով, հեռաւոր քաղաքներ, գրաստով կամ կառքով ու սայլով ապրանք փոխադրողները (քիրաճի) և այլն :

Զ. Տեղ մը պարէն (գեխայիբ), ապրանք (հմվայ) և գոյք (եշեա) տալու յանձնարարութիւն ստանձնողները (բացառութիւն ըլլալով կառավարութենէ իլթիլամ լըստանձնում) ընողները, ինչպէս նաև որոշեալ ժամանակին ապրանք հասցնելու և յանձնելու պալման ընող երկրագործը վաճառական չեն կրնար համարուիլ :

Է. Ծահու նպատակաւ վաճառականութեան մէջ, ասոր անոր գործ կատարողները, այսինքն վաճառականներու գործին դիւրութիւն մը ընծայելու համար գրագիր, ծառայ, գործակատար և գանձողներ մատակարարելու նպատակաւ հաստատուած գործակալութիւններ և միջնորդութիւն և այլն ընողները :

Ը. Աճուրդի (միբգայետե) համար յատուկ տեղ մը հաստատողները : Այս կերպ աճուրդի և տօնավաճառի (բագար) մէջ առեւտուր և գործ ընող խանութպան և վաճառողն ալ վաճառական կը համարուին :

Թ. Թատրոն ներկայացնելու և ցուցադրութեամբ (նիւմայիշճիլիբ) զբաղողները :

Ր. Գամպիօ, սեղանաւորութիւն (սարաֆըբ) և միջնորդութիւն եւ մոնետիկութիւն (սըմսարըբ վիքիլայըբ) ընողները :

Միջնորդ - վաճառականական գործաւնութիւնք բաւական ընդարձակ ըլլալով, ներածելի և արտածելի ապրանքները մաքսէն հանելու և այս առթիւ մաքսին մէջ պէտք եղած գործողութիւններ կատարելու, և վաճառականներուն յաճախորդ ճարելու, և նոր ձեռնարկութեանց, ապահովագրական այլևայլ ընկերութեանց և շոգենաւերու յաճախորդ գտնելու համար ծառայող անձանց կ'ըսուի :

Կալուածներ գրաւ զնել և ծախելու համար, վկայականով սահմանուած միջնորդները (տեյլայ) և պարզ մոնետիկները (միւնատի) և շրջուն բերեղակները (գօլքուգճի վի բագարճի) վաճառական կրնան համարուիլ :

ՃԱ. Դրամատան (պանգա) և սյօսայի գործաւնութիւնք և ասոնց ծառայող ամէն կարգի պաշտօնեաները :

ՃԲ. Վաճառականի, արհեստաւորի (հսնաճ) և սեղանաւորի (սայրաճ) մէջ փոխանակուած պայմանագիրներէ յառաջ եկած վէճերը : (Բացառութիւն ըլլալով՝ եթէ գնող և կամ ստանձնող կողմը պարզ անհատ մըն է, այսինքն՝ խանութպան մը չէ, կամ տեղի ունեցած գործողութիւնը, տան պիտոյից վերաբերեալ և կամ կալուածական և կամ ժառանգական ինդիլ մըն է, վաճառականական օրինօք չի կրնար դատուիլ) :

ՃԳ. Վաճառական համարուող ամէն կարգի անձանց մէջ (նեք շախա պեյնիմտե), առնուած տրուած պարտաւորակներու, վճարուելիք փոխանակագիրներու եւ զան իրարու փոխանցելու (ճիլթո էքմեք), և ամբողջ հրամանի մուրհակներու առթիւ ծագած վէճերը եւ գործերը վաճառականական օրինօք կը դատուին :

Վերոյիշեալ գործաւնութիւններէ բոլորով անհրաժեշտները թիճարէթի դատարանին մէջ կը նայուին : Իսկ անոնց յարակից եղող՝ յետագայ գործերն ալ, թիճարէ-

կանոն տոմարները, թէպէտեւ բոլորովին անկարեւոր չեն նկատուիր, բայց ի նպաստ զայն ներկայացնողին իբրեւ ապացոյց չեն կրնար համարուիլ :

Վաճառական մը, յիշեալ պաշտօնական տոմարներէն զատ, պէտքին համեմատ այլ և այլ տոմարներ ալ կըրնայ ունենալ, առանց վաւերացնել տալու :

Դատարանը՝ անվաւեր տոմարներու հանդէպ օրէնքի ընթացքին կը հետեւի, այսինքն զանոնք չեղեալ նկատելով, խնդիրը լուսաբանելու համար օրէնքի միւս սրամագրութիւններուն համաձայն կը վարուի :

Ը Ն Կ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն (Շիրիք)

Վաճառականական ընկերութիւնները, գլխաւորաբար երեք տեսակի կը բաժնուին : Ա. — Հաւաքական (Գոյլէքքիճ), Բ. — Շահակցական (Գոմագտիքի) և Գ. Անանուն (Անոնիմ) :

Ա. — Գոյլէքքիճ այն ընկերութիւնն է, ուր մէկէ աւելի ընկերներ կը միանան, հաւասար կամ անհաւասար դրամագլուխներ դնելով, և իրենցմէ մէկի կամ երկուքի անունը իրենց մակդիր (խնվան) ընելով առևտրական կամ արհեստական գործ մը կը հաստատեն :

Այս կերպ ընկերութիւն մը կամ անպատճառ մակդիր մը ունենալու է, որպէսզի թուղթերը ըստ այնմ ստորագրեն և կամ թէ բոլոր գործերուն մէջ ամբողջ ընկերներ միասին ստորագրելու են :

Ընկերութեան մակդիրը, որոնց անունն որ յատկացուած է՝ անոնք ընկերութեան վերին վարիչ մարմին (միւտի) կը համարուին. որոնց ստորագրութիւններէ

բղխած պատասխանատուութիւնները և բոլոր գործառնութիւնները, անխտիր կերպով, միւս անդամներուն ալ կը պատկանի : Ամէն մէկ անդամ՝ ամէն կերպ պատասխանատուութեան և վնասի մէջ, իրարու փոխադարձաբար երաշխաւոր են. այսինքն դրամագլխէն դուրս անդամներու միւս ապրանքները և կալուածներն ալ իրարու երաշխաւոր են :

Ընկերութեան անդամներէն մին մեռած առեւն՝ ընկերութիւնը կը լուծուի, սակայն մնացեալ անդամները կրնան շարունակել :

Այս կերպ ընկերութիւն մը հաստատուած պարագային, անպատճառ պայմանագրութիւն պէտք է խմբագրել եւ յետագայ պայմանները՝ աւելի ընդլայնեալ կերպով յիշատակել :

Ա. — Անդամներու անունները և ընկերութեան տեղերը :

Բ. — Անդամներու դրած դրամագլուխը և անդամներու կատարելիք պաշտօնը :

Գ. — Ընկերութեան նպատակը և տեսակը :

Դ. — Դրամագլխի քանակը. եթէ ասիկայ ապրանքէ կը բաղկանայ անոր տեսակը :

Ե. — Ընկերութեան մակդիրը (խնվան), որ է տընտրէնին անունը (միւտիքն իսմի) :

Զ. — Շահու և վնասի բաժինը :

Է. — Տեղութեան ժամանակամիջոցը :

Ը. — Իւրաքանչիւր անդամին շաքաթական առնելիք կերման ծախսը :

Թ. — Ժամանակամիջոցը լրանալէն առաջ՝ ի՞նչպիսի պատահարի մը առթիւ՝ ընկերութիւնը լուծելի կարելի ըլլալը :

Ճ. — Գործառնութեանց մէջ՝ ընկերներուն հա-

մամտութեամբ պէտք է գործել, թէ ո՛չ :

ԺԱ. — Ընկերութեան կեդրոնատեղին (քիմարեք-կեան) :

Ընկերութեան անդամները, վերոյիշեալ պայմաններէն դուրս, երկրի օրինաց և բարոյականի չը դպչող ուրիշ պայմաններ ալ կրնան աւելցնել. սակայն այդ պարագային՝ աւելի խոհեմութիւն ըրած կ'ըլլան, երբ օրինաց տրամադրութեան նեակին, որպէսզի պայմաններէն մին՝ գործին ընթացքը տարբեր օրինաց ընթացքի մը առաջնորդելու առիթ չ'տայ :

Ընկերութեան պայմանները, թէ ինչ որ ալ ըլլան, Ընկ. պարտաւոր է լրագրաց և կամ աղդերու միջոցաւ զայն ուրիշներուն ծանուցանել. վասն զի ուրիշները պէտք է զխնայն անոնց զիրքն ու կացութիւնը, որպէսզի անոր համեմատ գործեն անոնց հետ :

Աւելի կանոնաւոր ըլլալու համար՝ պէտք է որ տեղւոյն նօտարին (մուգալիքաք մուհարրիքի) ներկայացնեն և անոր վաւերացնել տան : Թէև չը վաւերացած պայմանագիրները սնկարեւոր չեն համարուիր. բայց այս հանգամանքներէն զուրկ եղող՝ այսինքն չի նրատարակուած ու չի վաւերացուած պայմանի մը յնդուով, գործ ընող երկու կողմեր (առնող ու տուող), ապագային մեծ վէճի մը կրնան ենթարկուիլ :

Ընկերութեան շրջանը լրացած միջոցին՝ կրնայ վերանորոգուիլ. սակայն բարեփոխեալ պայմանները պէտք է դարձեալ ըստ առաջնոյն հրատարակել :

Բ. Գումանտիք. — Գումանտիք (չահակցական) ընկերութիւնը՝ Քօլլէքթիֆ ընկերութեան քիչ մը ընդլայնեալ տեսակն է, տարբերութիւնը սա է որ, Քօլլէքթիֆ ձեւով արդէն կանխաւ կազմուած ընկերութեան մը հետ, դուրսէն քանի մը դրամատէր բաժնկերներ

ալ միանալով՝ տեղի ունեցած շա՛ր գումարի համեմատութեամբ լրաժնելու պայմանաւ կամ արդէն ի շաքունակութեան եղած գործը կ'ընդլայնեն, և կամ անկէ տարբեր յանձնակատարութեան (սիբարիդ), գործարանական, հանքային և կամ ուրիշ մեծաշնորհեալ նոր գործի մը կը ձեռնարկեն : Չոր օրինակ, երեք հոգիէ բաղկացած Քօլլէքթիֆ ընկերութիւն մը՝ առեւտուքով և կամ գործարանով զբաղած պարագային, դուրսէն քանի մը հոգի ալ հաւասար կամ անհաւասար դրամագումար զնեղով՝ հետերնին կ'ընկերանան, որոնց Գումանտիք կ'ըսուի :

Այս ձև ընկերութեան մակդիրը, Քօլլէքթիֆ ընկերութեան մէջ դանուած անդամներու անուան միայն կրնայ յատկանալ, ապա թէ ոչ դուրսի գումանտիքէն անդամներու անուան երեք չի կրնար յատկանալ, կամ թէ առանց մէկու մը անուան յատկանալու, սոսկ գործի անուան կրնայ յատկանալ :

Մակդիրը եթէ գործի անուան իսկ յատկացած ըլլայ, դարձեալ ընկերութեան անդամներ հաւաքուելով՝ Քօլլէքթիֆ ընկերութեան անդամներէն մէկը անօրէն (սիբարիդ) ընտրելու պարտաւոր են :

Այս ընկերութեան միացող գումանտիքէր բաժնեկերները՝ ընկերութիւնը վնասած և կամ սնանկացած պարագային՝ իրենց դրամ դրամազլխէն զատ աւելի քան մը տուժելու պարտաւոր չեն. այսինքն Քօլլէքթիֆ ընկերութեան անդամներու երաշխաւորներ չեն :

Շահակցական (Գումանտիքի) անդամներ՝ ընկերութեան գործին ո՛չ էապէս (հսայեքին) և ո՛չ ալ փոխանորդաբար չեն կրնար գործածուիլ : Հակառակ պարագային՝ շահակցական իրաւասութենէն կ'ըլլով, ընկերութեան երաշխաւոր եղած կ'ըլլան :

Այս ընկերութիւնը՝ իր գործի մեծութեան համեմատ , բաժնեթղթեր կրնայ հանել հրապարակ :

Ու է անդամի մը պատահած մահը, ընկերութեան լուծման առիթ չի կրնար ըլլալ , այլ մեռնողին բաժինը հանուելէն ետքը , մնացեալներու մէջ շարունակելի է իսկ եթէ ժառանգորդները ուզեն՝ կրնան միեւնոյն կերպով իրենք ալ շարունակութեան մասնակցիլ :

Այս կերպ ընկերութիւն մը կազմելու համար՝ պէտք է որ յետագայ ձեւով պայմանագիր մը գրուի . աւելի աղէկ կ'ըլլայ որ Մուգավիպք Մուհարրիբին ալ վաւերացնել տրուի Զորօրինակ .

« Ստորագրեալքս մէկ կողմէն Պօղոս էֆ. . . . եան և Պետրոս էֆ. . . . եան , Գօլլէքթիֆ անդամներ . իսկ միւս կողմանէ Վարդան էֆ. . . . եան և Վահան էֆ. . . . եան և Տիգրան էֆ. . . . եան Գումանտիէթ (շահակցական) անդամներ , այս անգամ գործ ընելու համար՝ յետագայ պայմաններով մէջերնիս Գումանտիէթ ընկերութիւն մը կազմեցինք :

Յօդ. Ա. — Գօլլէքթիֆ անդամները եղող Պօղոս եան և Պետրոս եան էֆէնտիններ , իւրաքանչիւրը երկու հարիւրական Օսմ. լիւրայի դրամագլուխ պիտի դնեն :

Բ. — Շահակցական անդամներէն Վարդան էֆ. . . . եան հարիւր . իսկ Վահան եան և Տիգրան եան էֆէնտիններ երեքական հարիւրէն , վեց հարիւր լիւրա , դրամագլուխ պիտի դնեն :

Գ. — Ընկերութեան գործը պիտի ըլլայ :

Դ. — Գործերու բովանդակ վարչութիւնը և պատասխանատուութիւնը յիշեալ Պօղոս և Պետրոս էֆէնտիններու վրայ ըլլալով , անոնցմէ Պետրոս էֆ. միւտիբ պիտի ըլլայ , որով ընկերութեան մակդիրը՝ Պետրոս

. . . եան և Ընկ. ըլլալու է , և ըստ այնմ ստորագրուելու է :

Ե. — Շահակցական ընկերները՝ գործի տնօրէնութեան երբեք միջամտելու իրաւունք չունին . ինչպէս նաև իրենց դրած դրամագլխէն զատ՝ ընկերութեան վնասին առթիւ միւս անդամներու երաշխաւորներ չեն :

Զ. — Գօլլէքթիֆ անդամները բովանդակ վնասին իրարու երաշխաւոր են :

Է. — Ընկերութեան տեւողութիւնը տարի ըլլալու է :

Ը. — Այս ընթացքի մէջ՝ ամէն տարի հաշիւ տեսնուելով , տեղի ունեցած ծախքերը և վնասը հանելէն ետքը, գոյացած շահէն հարիւրին Պօղոս և Պետրոս էֆէնտիններուն , իսկ մնացեալ գումարի համեմատութեամբ միւս շահակից ընկերներուն բաշխուելու է :

Թ. — Իւրաքանչիւր տարի հաշիւ տեսնուելով՝ գոյացած արդիւնքը շահակից ընկերներուն հաղորդուելու է ընկերներէն մէկը՝ եթէ ասոր դէմ ու է առարկութիւն մը ունենայ , մինչև 15 օր ծանուցանելու է , եթէ իրեն առարկութիւնը բանաւոր ըլլայ , պէտք եղած տնօրէնութիւնը կ'ըլլուի :

Ժ. — Շահակից ընկերները իրենց բաժինը ուրիշներուն կրնան ծախել :

ԺԱ. — Գործը՝ դրամագլխի հարիւրին երեսունի չափ վնասուելու երեւոյթ մը ներկայացուցած պարագային , տնօրէնը ամբողջ անդամները ի նիստ հրաւիրելու և զարժանը տնօրինել տալու է :

ԺԲ. — Ընկերութեան ու է կողմի անդամներուն մահ պատահած պարագային , միայն հանգուցելոյն մասը լուծեալ ըլլալով , մնացեալներու մէջ ընկերութիւնը դարձեալ շարունակելի է :

ԺԳ. Բօլլէքթիֆ անդամները սոյն գործէն դուրս
» և է գործի մը զբաղելու չեն :

ԺԿ. — Իբրև կերման ծախս շարժական . . .
դուրուշէն աւելի սնտուկէն քաշելու չեն » :

Գ. Անօնիւմ (անանուն) ընկերութիւնը , հանրային
օգտին համար շատ մը անձանց մէջ՝ մեծ դրամագլխով
կազմուած գործերն են . ինչպէս Պանքայի , Բէֆի , Եր-
կաթուղւոյ , Շոգենաւի և այլն , այս կերպ ընկերու-
թիւնները :

Այս կերպ ընկերութեան մը դրամագլուխը բաժնե-
թղթերէ կը կազմուի . հիմնական բաժնետէրերը հրա-
պարակի վրայ կարգ մը բաժնետէրեր շրջաբերութեան
կը հանեն շահաբաժինով և պարգեւով . շրջաբերութեան
հանուած այս թուղթերը որու ձեռք որ գտնուին՝ տէրը
անիկա է . իսկ հիմնական բաժնետէրերը որոշապէս կ'ար-
ձանագրուին ընկերութեան տոմարին մէջ : Վարչական
անօրէնութիւնը և պատասխանատուութիւնը բաժնետէ-
րերուն կը պատկանի , ի պահանջել հարկին ընդհանուր
ժողով կազմելով՝ պէտք եղած անօրինութիւնները կը-
նեն և վարչական մնայուն պաշտօնեաներ կ'ընտրեն :
Բաժնետէրերու մասին սառ ու ծախսը ընկերութեան ծա-
նօթութեամբ կըլլայ :

Անօնիւմ ընկերութիւնը՝ յատուկ մակդիր (իսկվան)
մը չունի , այլ իր ձեռնարկած գործին անունով կ'ան-
ուանուի :

Ընկերութեան անօրէնը ընդհ. բաժնետէրերու ժո-
ղովէն կ'ընտրուի , որուն գործած շահը և վնասը ըն-
կերութեան կը պատկանի :

Այս կերպ ընկերութիւնները՝ Կայս . Կառավարու-
թեան արտօնութեամբ միայն կարելի է հաստատել :

Այս երեք տեսակ վաճառականական ընկերութիւն-
ներէ ի զսա , մէյ մ'ալ պարզ ընկերութիւն (շիրքերի

աւտիեէ) այսինքն Մէճէլէի օրինօք ընկերութիւն մը կայ ,
որ այն ալ քանի մը տեսակներու բաժնուած է . թէև
այս տեսակ ընկերութեանց վրայ խօսիլը մեր նպա-
տակազբած նիւթէն դուրս է , սակայն վաճառական-
ները շատ անգամ ուրիշներու հետ փոքր ընկերութիւն-
ներ կազմելու պէտք զգալուն և ի մասնաւորի շատ
անգամ էսնաֆներու դէմ բողոք բրած պարագային ի-
րենց դէմ այս տեսակ առարկութիւններ ելլելուն հա-
մար , յարմար կը տեսնեմ այդ ընկերութեանց վրայ
մասնաւոր դազափար մը տալ մեր յարգոյ ընթերցողաց :

Ա. Եիրքերի մուճալեգէ (Հաւասար ընկերութիւն) :

Բ. Եիրքերի ինան (Անհաւասար ընկերութիւն) :

Ա. Եիրքերի մուճալեգէ . — Դրամագլխով , շահով ,
և գործով հաւասար եղած ընկերութեան կ'ըսուի .
այս ընկերութիւնը կազմող ընկերները , իրարու երաշ-
խաւոր են , որ գրեթէ գօլլէքթիֆ ընկերութեան յար-
ւումանն է :

Բ. Եիրքեր ինան . — Դրամագլխով , շահով և
գործով անհաւասար եղած ընկերութեան կ'ըսուի , եթէ
գործերն հաւասար ըլլան նոյն իսկ , բնաւ տարբերու-
թիւն չընեն և ընկերներն իրարու երաշխաւոր չեն , բայց
իրարու փոխանորդներ են . իսկ եթէ կանխաւ իրարու
երաշխաւորութիւնը պայմանած են , յայնժամ իրարու
երաշխաւոր կ'ըլլան :

Այս երկու կերպ ընկերութիւններէն իւրաքանչիւրը
երեք բաժանում ունի :

Ա. Եիրքերի եմվալ , ապրանայ ընկերութիւն . —

Բ. Եիրքերի սանայի և կամ քեզապիսլ , արուեստական
ընկերութիւն . — Գ. Եիրքերի վիճուհի , վարկով ըն-
կերութիւն :

Ա. Եիրքերի եմվալ , քանի մը անձանց մէջ հաւա-

սար և կամ անհաւասար դրամագլխով և կամ ապրանքով կազմուած ընկերութեան կ'ըսուի :

Բ. Շիրքեթի քեգապիսի վե եա սեմայի . — Երկու գործաւորներու , արհեստաւորներու մէջ՝ առանց դրամագլխի գործ գտնալու յոյսով՝ կազմուած ընկերութեան կ'ըսուի :

Գ. Շիրքեթի վիւճուհի . — Քանի մը անձանց մէջ առանց դրամագլխի՝ այլ միայն հրապարակի վրայ վայելած իրենց վարկերուն շնորհիւ , ասկէ անկէ ապրանք առնելով ծախելու յոյսով՝ կազմուած ընկերութեան կ'ըսուի :

Շիրքեթի եմվայ . — Դարձեալ երեք տեսակէ կը բազկանայ .

Ա. Շիրքեթք միւտարեպե . — Մէկ կողմէն դրամագլուխ՝ և միւս կողմէն ալ աշխատութիւն դնելով , գոյացած շահը հաւասարապէս բաժնելու պայմանաւ կազմուած ընկերութեան կ'ըսուի :

Այս ընկերութիւնը երկու կերպ է , մէկը չափաւոր (միւտարեպեյի միւգայետե) այսինքն դրամատիրոջ և գործողին մէջ , դրամագլխէն աւելի , որոշեալ տեսակ ապրանքէն ի զատ առեւտուր չընելու , պայմանուած տեղէն դուրս՝ ուրիշ տեղ մը չերթալու և ապառիկ չը տալու մասին հաստատուած պայմանն է :

Գործող ընկերը՝ եթէ վերոյիշեալ պայմաններէն դուրս գործէ , գործին արտադրած շահը և վնասը միւսակ իրեն կը պատկանի :

Բ. Բացարձակ արտօնութեամբ ընկ . (մուտարեպեյի մուդլարա) . — Հոս դրամատէրը բացարձակ իրաւունք կուտայ գործողին ըստ կամս գործելու , այսինքն ուզած ապրանքը առնելու , ուղած տեղը երթալու . այս պարագային մէջ՝ գոյացած շահ և վնասը երկուքին կը

պատկանի և օտարին հանդէպ եիկուքն ալ իրարու երաշխաւոր են :

Բ. (Շիրքեթք Գարգ) փոխատու ընկերութիւն . — Դրամատէր մը՝ գործող մէկուն մաս մը ստակ կուտայ փոխ , շահը և վնասը գործողին պատկանելու պայմանաւ :

Գ. (Շիրքեթի պեգաս) . — Աշխատութեան նուիրման ընկերութիւն : Դրամատէր մը՝ գործող մէկու մը մաս մը ստակ կուտայ և կամ գործող մէկը դրամատէրէ մը ստակ կ'առնէ , կը շահագործէ , գոյացած շահ վնասը բացարձակ դրամատիրոջ պատկանելու պայմանաւ : Երբ այս ընկերութեան մէջ շահու մասին վէճ մը ծագի , ընկերութիւնը չեղեալ նկատուելով՝ գործող ընկերը իր աշխատութեան իրաւունքը ըստ արժանւոյն (եճր միսլի) պահանջելու իրաւունք կ'ունենայ :

Վերոյիշեալ ընկերութիւնները եթէ իրենց սահմանեալ օրէնքէն տարբեր ձեւերով պայմանուած ըլլան , այն պարագային՝ ընկերութիւնը անվաւեր (Շիրքեթք Ֆասիսե) նկատուելով , իւրաքանչիւր կողմ իր դրամի և աշխատութեանց համեմատ շահ և վնաս պահանջելու իրաւունք կ'ունենայ :

Այս ընկերութիւններէն զատ կայ նաև քանի մը տեսակ ընկերութիւններ ալ : Զորօրինակ .

(Շիրքեթի միւգարրա) (երկրագործական ընկերութիւն) զոր մէկ կողմէն հող և սերմ կամ միւսակ հող , իսկ միւս կողմէն ալ աշխատութիւն նուիրելով , ընկերութիւն մը կը կազմեն , գոյացած արդիւնքը մէջերնին բաժնելու պայմանաւ :

Հողին տիրոջ կողմէն՝ սերմ տալ չտալու պայմանը տեղական սովորութենէն կախում ունի :

Շիրքեթի մեսարաք (պտղային ընկերութիւն) . մէկ կողմէն տեղ և ծառ , միւս կողմէն սնունդ և բուծում

տրուելով, զոյացած արդիւնքը մէջերնին բաժնելու պայմանաւ կազմուած ընկերութեան կ'ըսուի :

Երբքի միջ (կալուածական ընկերութիւն) . այս ընկերութիւնը երկու կերպ է . Ա. Խիսթիւայի (կամաւոր) այսինքն քանի մը անձինք իրենց զանազան կալուածները իրարու վրայ դարձնելով՝ (Ֆերադ Կոնքիք) արդիւնքը ըստ բաժնի բաժնելու պայմանաւ հաստատած ընկերութիւնն է . Բ. ճեպրի (պարտաւորեալ ընկերութիւն) . այս ալ ժառանգութենէ մնացած և կամ բաժնեխառն կալուածի մը մասերէն մաս մը ուրիշի մը տիրապետութեան անցնելով՝ այսպէս քանի մը անձերու մէջ՝ ակամայից առաջ եկած ընկերութիւնն է :

Այս կերպ ընկերութեանց մասին՝ թիճարէթի օրինաց մէջ ունէ արամադրոթիւն մը չգտնուելուն և ի մասնաւորի Մեճեյի արամադրութեամբ եղած ընկերութիւններ ըլլալուն համար, երկու կողմէն մին եթէ նոյն իսկ վաճառական ըլլայ, դարձեալ այս առթիւ ծագած վէճերը Պիտայէթ Հուզուգի մէջ կը նայուին :

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԸՆԿԵՐՑ ՄԷՋ ԾԱԳԱԾ ՎԷՃԵՐ

(Պէյն ԷՉՉիւրեկեա վազը օրակ մարագաս հազրեսս)

Հոս վաճառականական ընկերաց մէջ ըսելով՝ բնականաբար պէտք է հասկնալ թէ, Հուզուգի տեսակետով կազմուած ընկերութիւններու նեա՝ վերաբերութիւն մը չունի :

Վաճառական ընկերներու մէջ ծագած ներքին վէ-

ճերու առթիւ՝ ընկերներէն մին դատարանի դիմած պարագային, դատարանը երբ տեսնէ թէ գործը քիչ մը կնճռոտ և հաշուական խնդիրներով լեցուն է, այն ատեն երկու կողմին կը պարտաւորեցնէ որ խրաքանչիւրը 1—2 հոգի հաշուեյարդարներ (միւսիք) ընտրեն :

Հաշուեյարդար յանձնաժողովոյ անդամներէն մին՝ կամ երկուքը՝ բողոքող կողմը (միւստայի) կ'ընտրէ իսկ միւս մէկ կամ երկուքն ալ բողոքեալ (միւստայիսն ալիյն) կողմը կ'ընտրեն :

Յետոյ երկու կողմերը միանալով համահաճութեամբ՝ երրորդ մը կամ հինգերորդ մը կ'ընտրեն :

Իսկ եթէ երրորդի մը կամ հինգերորդի մը ընտրութեան մասին իրենք չհամաձայնին, դատարանը յարմար մէկը ինք կ'ընտրէ :

Հակառակորդ երկու կողմեր կրնան համաձայնութեամբ սոյն երրորդին կամ հինգերորդին ընտրութեան իրաւասութիւնը հաշուեյարդար յանձնաժողովին ձգել, պայմանաւ որ, եթէ անոնց մէջ կարծեաց հաւասարութիւն ծագի, յայնժամ անոնք յարմար մէկն ընտրելու իրաւունք ունենան, իսկ երբ կարծեաց անհաւասարութիւն ըլլայ՝ այն ատեն պէտք չմնայ :

Այս երրորդին կամ հինգերորդին պաշտօնը թէ՛ գործի ընթացքը վարկ և թէ՛ կարծեաց հաւասարութիւն տեղի ունեցած պարագային՝ իրեն ունէ կողմին հակիւն է, որով անոր հակած կողմը մեծամասնութիւն շահած կըլլայ :

Հակառակորդ կողմերը՝ հաշուեյարդարներու ընտրութեան մէջ եթէ չը համաձայնին (վասն զի անդամներու դէմ փոխադարձաբար դիտողութիւն կրնայ ըլլալ, զորօրինակ. միւս կողմի ապացուցեալ թշնամին, ինչպէս նաև շատ մօտ ազգական պէտք չէ որ ըլլայ), և կամ

Թէ դժկամակին ընտրել, այն ատեն դատարանը յարմար անձինք ինք կ'ընտրէ :

Ինչպէս նաև հաշուեյարդարներուն գործի լուծման համար յատկանալիք ժամանակամիջոցի մէջ՝ եթէ երկուստեք համաձայնին աղէկ, ապա Թէ ոչ՝ դատարանը ինք կորոչէ, այսինքն Թէ որչափ ժամանակի մէջ պէտք է իրենց պաշտօնը աւարտեն :

Յանձնաժողով կազմուած ատեն, երկուստեք հաշուակորդներ՝ պէտք է որ իրենց աւարկութիւնները և զայն հաստատող ի ձեռին ունեցած թուղթերը, տոմարները և այլն բերեն յանձնաժողովին ներկայացնեն :

Յանձնաժողովը իրաւունք ունի զանոնք բերել յանձնելու դժկամակող կողմին՝ մինչ տասն օր բերել յանձնելու համար ծանուցագիր մը զրկել, եթէ ան՝ ասոր դժկամակի, այն ատեն յանձնաժողովը իւր ի ձեռին ունեցած թուղթերուն յենլով, որոշում մը տալու իրաւունք ունի . իսկ եթէ յանձնելու համար ժամանակ ինդրէ . յայնժամ յանձնաժողովը եթէ պատշաճ դատէ, մասնաւոր ժամանակ մը կրնայ տալ :

Հաշուեյարդար յանձնաժողովը իր որոշումը գրաւորապէս երկու կողմին կը հաղորդէ, երկու կողմէն մին՝ սոյն որոշմագիրը դատարանին կը ներկայացնէ, անոր վաւերացում կը ինդրէ :

Միւս կողմն՝ կրնայ անոր դէմ աւարկութիւններ ընել . դատարանը եթէ բանաւոր գտնայ անոր աւարկութիւնները, կրնայ ուրիշ հաշուեյարդարներ ընտրելով ինդրոյ լուծումը անոնց յանձնել և կամ ինք դատել . իսկ եթէ բանաւոր չը գտնայ, արուած որոշումը կը վաւերացնէ :

Հաշուեյարդարներու ընտրութեան միջոցին՝ եթէ երկուստեք նախապէս պայման ըրած են որ, հաշուեյար-

դարներու տուած որոշումը առանց խթինաֆ և Թէմիզ ընելու, երկու կողմին համար ալ անմիջապէս ընդունելի և գործադրելի ըլլայ, այն ատեն դատարանը ըստ իրենց պայմանին կը վաւերացնէ :

Յանձնաժողովի այս պաշտօնավարութեան միջոցին եթէ ընկերութեան անդամներէն մէկը մեռնի, ընկերութիւնը կը լուծուի, յանձնաժողովը կը բեկանի և գործը դարձեալ դատարանին կը վերադառնայ :

Երկու ընկերներու և կամ երկու վաճառականներու մէջ ծագած վէճի մը առթիւ ընտրուելիք հաշուեյարդարներու (միւսմէիզ) պաշտօնը և անոնց տուած որոշումը, այն ատեն վաւերական կ'ըլլայ, երբ դատի մը առթիւ դատարանի վաւերացմամբ եղած ըլլայ, ապա Թէ ոչ դատէն առաջ ընտրուած հաշուեյարդարները վաւերական չեն կրնար ըլլալ, ինչպէս նաև իրենց տուած որոշումը :

Այս հաշուեյարդարութեան սկզբունքէն զատ, Մէճէլլէի մէջ մէյ մըն ալ իրաւարարի (հաքիմ) սկզբունք մը կայ, որ հաշուեյարդարութեան տեսակէն բաւական տարբեր է . սոյն իրաւարարութեան սկզբունքը՝ առեւտրական դատարանի մէջ մերթ գործածելի և միւս պարզ գործառնութեանց մէջ աւելի ստէպ գործածելի ըլլալուն համար, աւելորդ չենք համարիր մասնաւոր գաղափար մը տալ մեր յարգոյ ընթերցողաց :

Հուգուգի մէջ մինակ առնելիք տալիքէն ըզլսած ապրանքի (մալ) դատերու մէջ, իրաւարար (հաքիմ) կարգելը ներելի է, բայց դատարանի կողմէն պարտաւորիչ չէ, այլ երկու կողմի կամքէն կախում ունի :

Իսկ թիճարէթին մէջ հաշուեյարդար կարգելը անպատճառ պարտաւորիչ է :

Իրաւարարները հաշուեյարդարներու պէս 2-4 հոգի

կրնան ըլլալ , բայց տալիք որոշումը պէտք է միաձայնութեամբ եղած ըլլայ :

Իրաւարարներու տուած որոշումը եթէ օրինաւոր չըջանակի մէջ տրուած է , առանց առարկութիւն մը ընդունելու բացարձակապէս ընդունելի և գործադրելի է :

Իրաւարարի ընտրութեան եղանակը և միւս պայմանները՝ հաշուեյարդար պաշտօնեաներ կարգելու եղանակին պէս են :

ԻՐԱՒԱՐԱՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿ

(Թահիփնաւե)

Մենք Կ. Պոլիս Չաքմաքճիներու մէջ վաճառակաւորութիւն ընող . . . և ան Պետրոս էֆ. և ի Մարութճիւնոց վաճառակաւորութիւն ընող . . . և ան Պօղոս էֆ. մեր մէջ տեղի ունեցած մեր հաշուական խնդիրները լուծելու և ըստ այնմ որոշում մը տալու համար , այս անգամ երկուստեք համաձայնութեամբ . . . և ան Պետրոսի կողմանէ . . . և ան էֆ. և . . . և ան Պօղոսի կողմանէ . . . և ան էֆ. և դարձեալ երկուքի համահաճութեամբ . . . էֆ. երրորդ իրաւարարներ կարգելինք սա պայմանաւ որ .

Ա. թուէս մինչ տասն օր , իւրաքանչիւր կողմ իւր ի ձեռին ունեցած թուղթերը յիշեալ իրարաւարարներուն բերել յանձնելու է , հակառակ պարագային՝ այլևս թուղթ մը ներկայացնելու և ո եւ է առարկութիւն մը ընելու իրաւունք չպիտի ունենայ :

Բ. յիշեալ իրաւարարները՝ թուէս առ առաւելն մինչև մէկ ամիս , իրենց յանձնուած խնդիրները լուծելով՝ ո եւ է որոշում մը տալու պարտաւոր են :

Գ. յիշեալ իրաւարարներուն տուած թէ՛ նպաստաւոր թէ՛ աննպաստ որոշումները մեր երկու կողմի համար ալ վճռապէս ընդունելի և գործադրելի է , ու մեզմէ մէկը անոր դէմ ո եւ է առարկութիւն (իյթիրագ) եւ վերաքննութիւն (իյթինաֆ) եւ վճառքելութիւն (թեմիզ) ընելու իրաւունք չունենալով՝ անոր տրամադրութիւնները կէտ առ կէտ գործադրելու պարտաւոր պիտի ըլլանք :

Որով սոյն իրաւարարադիրը մէկ օրինակ ըլլալով , և երկուստեք ստորագրուելով՝ յիշեալ իրաւարարներու քով յանձնուեցաւ :

Թռալիսն Ստրագրուքիւն Ստրագրուքիւն

(Այս տեսակ պայմանները 10 զուրուշնոց զլ ոչմաթղթի վրայ պէտք է գրել) :

Իրաւարարի (հաքեմ) ընտրութիւնը (միւսմեիզ) հաշուեյարդարներու ընտրութեան պէս չէ . հաշուեյարդարները անպատճառ դատի մը առթիւ , և դատարանի վաւերացմամբ պէտք է ըլլայ , մինչդեռ իրաւարարներու ընտրութիւնը երկուստեք դատի դիմելէն առաջ իրենց մէջ ալ կրնայ ըլլալ , միայն թէ՛ իրաւարարներու որոշումը եթէ միւս կողմը չը յարգէ , զայն յարգող կողմը կրնայ դատարան դիմել , չյարգողը դատի կոչել և յարգել տալ :

Այս իրաւարարութեան կազմութիւնը՝ եթէ դատէն առաջ տեղի ունեցած է , միւս հակառակորդ կողմը տրուած որոշումը եթէ չը յարգէ , այն ատեն զայն յար-

գողը կրնայ իրաւարարներու տուած որոշմնագիրը տեղական դատարանին ներկայացնել, հակառակորդ կողմը հոն հրաւիրել և դատարանէն անոր վաւերացումն ու գործադրութիւնը պահանջել:

ՅԱՆՉՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

(Գովիսիօնօնը)

Վաճառականութեան մէջ յանձնակատար (գովիսիօնօնը) կ'ըսուի, անոր՝ որ ապրանք առնել զրկելու համար ուրիշ երկրէ մը, իրեն յանձնարարութիւն մը կ'ըլլայ. ինքն ալ այդ յանձնարարութիւնը ընդունելով, անոր հաշուոյն ապրանք կ'առնէ կը զրկէ:

Այս պարագային՝ յանձնակատարը (գովիսիօնօնը) յանձնարարողին փոխանորդ կը համարուի:

Անոնք ալ՝ վաճառականական օրինօք, երեք տոմարներ ունենալու պարտաւոր են:

Յանձնարարող վաճառականը՝ եթէ սնանկանայ, յանձնակատարը՝ իր զրկած ապրանք դիւր (եթէ զըրկուած ապրանքը տակաւին պատրաստ է և կամ սնանկը զայն ոչնցուցած չէ), միւս պահանջատէրերէն առաւելութեան իրաւունք (նագրք իմքիս) մը ունենալով, կրնայ այդ զրկած ապրանքը գրաւել և կամ դիւր ամբողջովին պահանջել. իսկ եթէ պատրաստ չէ, միւս պարզ առնելիքուորներու ընթացքին կը հետեւի:

Յանձնակատարութիւնը երկու կերպ է. Ա. Ուրիշի մը յանձնարարութեան վրայ անոր հաշուոյն ապրանք գնող ու զրկող. Բ. Չայն փոխադրող և կամ փոխադ-

րելու համար ուրիշի մը յանձնող, որուն փոխադրող և կամ աւանդաւոր (եմանքթի) կ'ըսուի:

Փոխադրողը (եմանքթի)՝ փոխադրութեան համար իրեն յանձնուած ապրանքը, կրնայ փոխադրելու համար ուրիշի մը յանձնել, բայց տեղի ունեցած վնասը և պատասխանատուութիւնը իրեն կը պատկանի:

Փոխադրողը պարտաւոր է, պայմանեալ ժամանակին մէջ ապրանքը իր յանձնարարուած տեղը հասցնել. օրին չը հասցուցած պարագային՝ եթէ այս յայտարարը իր կամքէն անկախ պատճառէ մը բղխած է, ապրանքի տիրոջ տեղի ունեցած վնասը տուժելու պարտաւոր չէ. իսկ եթէ կամքէն կախում ունեցող պարագայէ մը բղխած է, այն ատեն տուժելու պարտաւոր է, վնասի քանակը՝ եթէ կանխաւ որոշուած է անոր համեմատ՝ իսկ եթէ որոշուած չէ, ըստ արժանւոյն վնասը տուժելու պարտաւոր է:

Ինչպէս նաև փոխադրութեան միջոցին՝ ճամբու վրայ տեղի ունեցած վնասի տուժը, կանխաւ պայմանուած ըլլայ թէ ո՛չ, բացարձակապէս փոխադրողին կը պատկանի, իսկ եթէ ընդհակառակը պայման եղած է որ վնասը փոխադրողին չը վերաբերի, այն ատեն փոխադրողը տուժելու պարտաւոր չ'ըլլար:

Եթէ վնասը փոխադրողի կամքէն անկախ պատճառէ մը բղխած է. ինչպէս, բնական պատճառէ մը և կառավարական արգելքէ մը և կամ պատերազմէ, և այս կերպ ծանրակշիւ պարագաներէ բղխած է, փոխադրողը տեղի ունեցած վնասը ըլլայ, կանխաւ պայմանեալ, կամ ո՛չ, երբեք տուժելու պարտաւոր չէ:

Փոխադրելի ապրանքներ փոխադրողին յանձնուած միջոցին փոխադրագիր մը (նագրի գայմեօսի) պէտք է գրել, որուն մէջ պէտք է արձանագրել ապրանքներու

տեսակը , որակը և քանակը , փոխադրելիք տեղին ա-
նունը , հասցնելիք պայմանաժամին չափը , յանձնողի
փոխադրողի և յանձնուելիք անձանց անունները և իրենց
մականունը եւ ընակութեան տեղը , փոխադրութեան
վարձքը , ճամբուն տեղի ունենալիք վեասի պայմանը ,
յանձնուելիք վաճառականի յատկանիշը (մարգա) և այլ
պէտք եղած կէտերը :

Այս փոխադրագիրը պէտք է երկու օրինակ պատ-
րաստել , և ստորագրելով իրարու փոխանակել :

(Այս կերպ պայմաններուն ընդհանրապէս 20 փա-
րանց փուլ պէտք է փակցնել) :

Ապրանքը հասած միջոցին՝ ստանալիք վաճառա-
կանը՝ երբ ապրանաց մէջ վեաս մը նշմարէ , պէտք է
որ ապրանքը առանց վերցնելու և առանց փոխադրողի
վարձք վճարելու , անմիջապէս տեղական Առևտրական
Դատարանին դիմէ և փոխադրողը հոն դատի կոչելով
իր վեասը պահանջէ :

Իսկ երբ զայս տեսնելով հանդերձ՝ փոխադրողի
վարձքը վճարէ , անկէ յետոյ վեասի պահանջում ընելու
իրաւունք չ'ունենար . վաճառականը թէև այս դատը իր
բացակայութիւն և անգիտակցութիւն առարկելով մինչ
մէկ տարի վերջ ալ կրնայ վարել , բայց սմէնէն սպա-
հով միջոցը անմիջապէս դատի դիմելն է :

ՓՈՒԳԻՐ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ

ԵՒ ԻՐ ՍԵՋՐՈՒՆԲ

(Փօղիա վէ հեղաղէ)

Վաճառականութիւնը՝ այլ և այլ երկիրներ ի յա-
րաբերութեան դրած ըլլալով , փոխգիրը , անոր զիւրա-

ցընելու , վարկը ընդլայնելու , և երկրէ երկիր ստակ
փոխադրելու , մանաւանդ փոխադրութեան ծախսերէ ,
գժուարութիւններէ և ճամբու վտանգներէ ազատուե-
լու համար՝ դարկրէ ի վեր հաստատուած սովորութիւն
մըն է :

Փոխգիրը տեսակ մը յանձնարարութիւն (հեղաղէ)
է , զոր մէկ երկրի մէջ մէկէ մը առնուած ստակին և
կամ ապրանքին փոխարէն , ուրիշ երկրի մը մէջ , ուրիշի
մը կողմէն , ուրիշի մը վճարուելու համար կը յանձնա-
րարուի : (Այսինքն Կարին գտնուած ընկերութիւն մը ,
հոն գտնուած ընկերութենէ մը ստակ և կամ ապրանք
առնելով , արժէքը Կ. Պոլիս գտնուած իրենց ընկերը ,
միւս ընկերութեան անդամին վճարելու համար Կարի-
նէն փոխգիր մը կուտայ և կամ փոխադարձաբար :)
Ինչպէս նաև տեղէ տեղ ստակ փոխադրելու զիւրու-
թիւն մը ըլլալու համար հնարուած միջոց մըն է :

Փոխգրի նպատակը թէև սկզբմամբ տեսակ մը յանձ-
նարարութիւն (հեղաղէ) է , սակայն օրինական պայ-
մանները անկէ շատ տարբեր են :

Վաճառական մը իր գործառնութեանց մէջ շատ
անգամ յանձնարարութեան օրինաց (հեղաղէ) հանդի-
պելուն համար , աւելորդ չենք համարիր՝ այս մասին
յարգոյ ընթերցողաց մասնաւոր գաղափար մը տալ :

Ա. — Յանձնարարութիւնը տեղէ տեղ ալ կրնայ
ըլլալ , միեւնոյն միջավայրի մէջ ալ կրնայ ըլլալ , մինչ-
գեւ փոխգիրը միեւնոյն երկրի մէջ չի կրնար ըլլալ :

Բ. — Յանձնարարութիւնը՝ մարդ մը իր պարտքը
վճարելու համար , իր պահանջատէրը ուրիշ երրորդի
մը վրայ կը յանձնարարէ և երեք հոգիի մէջ կը դառ-
նայ , մինչգեւ փոխգիրը չորս հոգիի մէջ կը դառնայ
և աւելի :

Գ. — Յանձնարարութեան մէջ՝ յանձնարարեալ երկու կողմերն որոնք են պահանջատէր և յանձնարար եալ, իրենք հաւանած միջոցին, յանձնարարողը որ է պարտատէր, այլ ևս իր պարտքէն կ'ազատուի. եթէ գումարին երաշխաւոր կայ, ան ալ կ'ազատուի: Իսկ փոխգիրի մէջ փոխանցողները (ձրքանքա) միշտ պատասխանատու կը մնան:

Դ. — Յանձնարարողը՝ յանձնարարեալին քով պարանքի զինէն պահանջ մը ունեցած պարագային, երբ իրեն պահանջատէրը (տայիճ, ալաճագլը) անոր վրայ յանձնարարէ, և երկուքն ալ անոր հաւանին, յետոյ յանձնարարեալը (որ է գնող)՝ եթէ իր գնած ապրանքը ինչ ինչ առարկութեամբ յանձնարարողին (այսինքն ծախողին) վերագարձնէ, իր ընդունած և ստանձնած յանձնարարութիւնը աւելի վաւերական ըլլալով, ստանձնած գումարը վճարելու պարտաւոր է. յետոյ ինք այդ գումարը վճարելէն վերջ ետ տուած ապրանքի տիրոջ կրնայ դիմել ու արժէքը պահանջել:

Իսկ եթէ գնուած ապրանքին ուրիշ տէր մը երեւան ելնելով բողոքէ և յանձնարարեալի ձեռքէն առնէ, այն պարագային իր ստանձնած պարտքը (որ է ապրանքին արժէքը), վճարելու պարտաւոր չ'ըլլար:

Գալով փոխգրի օրինաց.

Փոխգիրը օրինական ըլլալու համար, պէտք է որ գումարին քանակութիւնը, վճարաժամը, փոխարէն տուողի և վճարելու պարտաւոր եղող անձերու անունները, փոխգրին փոխարէն ինչ բան առնուած ըլլալը, որ տեղէն ուր տեղ քաշուած ըլլալը, հրամանի ըլլալը չըլլալը և քանի օրինակէ բաղկացած ըլլալը գրուի:

Ձոր օրինակ.

Օսմ. լիրա
150

Վճարածամ
Յետ տեսնելէ 15 օր

Փոխանակագիրս տեսնելէդ 15 օր վերջ, հաճեցէք վերոյիշեալ հարիւր յիսուն օսմ. լիրան վճարել ի հրամանի Տեարք. . . եանի, որոյ փոխարէն տեղս հաւանութեամբ ապրանք առած եմ, արժէքը անյուցէք մեր հաշուոյն: Երկրորդ, երրորդ օրինակներ չկան:

1899 Յունիս 5
Կարին

Ստորագրութիւն
.

Մեծապատիւ

. . . էֆ. ի Կ. Պոլիս . . . վաճառական

Վերոյիշեալ պայմաններէն զուրկ եղած փոխգիր մը իր անմիջական առաւելութիւնները (հազը մեգեթի) կորսնցնելով պարզ մուրհակի մը հանգամանք կատանայ: Այս աւթիւ ծագած դատերը դարձեալ Առևտրական Դատարանին մէջ կը նայուին:

(Փոխգիրը քանի մը օրինակ գրելու նպատակը, եթէ դիպուածաւ բուն օրինակը կորսուի, միւս օրինակներէն մէկով պահանջելու դիւրութիւն ըլլայ, ասոնցմէ մէկին արժէքը վճարուելով միւսներու արժէքներն ալ վճարուած կ'ըլլայ): Քաշուած փոխգրին արժէքը թէ դրամ առնուած ըլլայ, թէ ապրանք, պէտք է որ փոխգիր քաշողը, փոխգրին փոխարէնը՝ վճարող անձին (մուխարապ) հասուցած ըլլայ, այսինքն քաշած փոխգրին փոխարէն անոր հաշուոյն բան մը գնած և կամ անոր յանձնարարութեան վրայ տեղ մը ստակ վճարած ըլլայ, ապա թէ ոչ եթէ փոխարժէքը հասուցած չէ և կամ թէ քաշող և վճարելիք (քեշիտեճի վե մուխարապ)

անձերու մէջ ընկերութիւն մը չկայ, վճարելիք անձը փոխգրիւր չընդունելու և չվճարելու մէջ պատասխանատու չ'ըլլար :

Փոխգրիւր քաշողը, եթէ վճարելիք անձէն փոխգրիւր քաշելու մասին կանխաւ արտօնութիւն առած չէ և կամ թէ ինչպէս վերը ըսուեցաւ, անոր հաշուոյն գնում և կամ թէ վճարում մը ըրած չէ, քաշուող անձը փոխգրիւրն արժ.քը վճարելուն մէջ պատասխանատու չէ: Ասոնք ապացոյցանելու պարտքը քաշող անձին կը պատկանի :

Փոխգրիւրը եթէ հրամանի, այսինքն « . . . էՖ. ին և կամ իւր հրամանին » գրուած է, կրողը (համիլ) ուրիշի մը կրնայ փոխանձել (ձիրս իրմէք) : (Այս մասին ճիրոյի բաժնին մէջ յետոյ պիտի խօսիմ) :

Փոխգրիւր քաշողը և քաշուողը և զայն իրարու փոխանցողները՝ վճարածամին օրը փոխգրիւրն արժէքը չը վճարուած պարտգային ամէնքն ալ իրարու երաշխաւոր կը նկատուին . եթէ կրողը (համիլ) ամէնուն վրայ ալ մնասի հատուցում (փրօքստ) ըրած է, այս պարտգային ամէնքն ալ իրարու երաշխաւոր են :

Իսկ եթէ կրողը վճարածամը անցընելով մնասի հատուցման պահանջ (փրօքստ) ըրած չէ, փոխանցողները (ձիրսնքայալ) երաշխաւորութենէ և միանգամայն պարտքէ կ'ազատուին, մինակ քաշող և քաշուողը իրարու երաշխաւոր կը մնան :

Փոխգրիւր՝ բուն քաշուած անձին (մուխարապ) ներկայացուած միջոցին, Ձէ ժամուան մէջ ընդունիլը և կամ չընդունիլը պատասխանելու է :

Եթէ ընդունի, փոխգրիւրն վրայ « ընդունեցի կը վճարեմ, » պարբերութիւնը և թուականը գրելու և ստորագրելու է :

Իսկ եթէ չընդունի՝ այն ատեն ներկայացնող (համիլ) պէտք է որ անմիջապէս տեղական Առեւտրական Դատարանին դիմելով չընդունող անձի (մուխարապ) և իրեն փոխանձողի (ձիրսնքա) և քաշողի (քէլիտեձի) վրայ փրօթէստ մը քաշէ, որուն չընդունման (ատեմք քէհտլիյէ փրօքստի) փրօթէստ կ'ըսուի :

Սոյն փոխգրիւրը եթէ քանի մը անձեր իրարու փոխանցած են, այն ատեն փոխանցուողը զայն իրեն փոխանցողին վրայ, այն ալ իրեն փոխանցողին և այսպէս մինչև բուն փոխգրիւր քաշողը՝ դէպի ետ ետ երթալով, իրարու վրայ փրօթէստ ընելու պարտաւոր են, և իրարմէ երաշխաւոր պահանջելու իրաւունք ունին :

Փոխգրիւր մը վճարածամը եթէ « տեսնելէդ յետոյ » գրուած է, քաշուող անձ (մուխարապ), արժէքը խսկոյն վճարելու պարտաւոր է :

Եթէ « տեսնելէդ . . . օր յետոյ » գրուած է, վճարածամը ընդունուած օրէն կը սկսի բանիլ :

Փոխգրիւրը բնաւ ներելի չէ պայմանաւ ընդունիլ եւ կամ քաշողին և քաշուողին մէջ պայման մը կնքել, և կամ վճարածամը երկարածգել. հակառակ պարտգային, փոխանցողները պատասխանատուութենէ կ'ազատուին :

Փոխգրիւրն արժէքը եթէ մաս մը գանձուի, մնացեալ մասին համար դարձեալ փրօթէստ ընել անհրաժեշտ է :

Դրոշմաթուղթ (փուլ) չը կրող փոխգրիւրները իրարու փոխանցած պարտգային, եթէ անոնց արժէքը չը վճարուի, փոխանցողներ (ձիրսնքա) այլեւս պատասխանատուութենէ կ'ելլան . (այս օրէնքը դրոշմաթուղթի օրինաց տրամադրութիւնն է) խնդիր կը մնայ վերջինս կրողի և փոխգրիւր քաշող և քաշուողին մէջ :

Փոխգիրը՝ քաշուողի կողմէն չընդունուած պարագային, չընդունման պատճառը՝ քաշուած փրօթէստին վրայ նշանակելու է: Գործին հետ երբեք առնչութիւն չունեցող մէկը կրնայ միջնորդել և փոխգրին արժէքը վճարել, որով պահանջի իրաւունքը իրեն կը փոխանցի, սակայն որու համար որ միջնորդած է անկէ առաջ փոխանցողներէն միայն կրնայ պահանջել, իսկ միջնորդածէն վերջ եկող փոխանցողներէն բան մը պահանջելու իրաւունք չունենար:

Մէկ մըն ալ յետադարձ (րեքրիք) ի փոխգիր մը կայ, զոր փոխգիր կրողը (համիլ) քաշուողին ներկայացուցած ատեն, անոր չընդունած և կամ ընդունելով չը վճարած պարագային, այն ատեն կրողը փոխգրին արժէքը և տեղի ունեցած ծախսերը միացնելով իւր գըրանուած տեղէն քաշողին (րեշետեմի) և կամ ճիրանթային վրայ նոր փոխգիր մը կը քաշէ:

Զոր օրինակ

Մեծ. . . . էֆ. յիգմիր

Փոխանակագիրս տեսնելէդ 15 օր վերջ, հաճեցէք վերոյիշեալ գումարը վճարել տեղդ ի հրամանի . . . էֆ. ին, որոյ փոխարէնը Զեր ի Կ. Պոլիս . . . էֆ. ին վրայ քաշած, բայց անոր չընդունած (կամ չը վճարած) փոխգրի յետադարձն (րեքրիք) է:

Թուական

Ստորագրութիւն

ՀՐԱՄՍՆԻ ԵՒ ՊԱՐԶ ՄՈՒՐՀԱԿՆԵՐ

(Էմրե մուհարրեյր վէ աշի սէնէսար)

Մարդիկ իրարու հետ առնչութիւն ունենալուն համար անկարելի է որ իրարմէ փոխ և ապառիկ խնդրել և տալու պէտք չունենան: Այս պատճառաւ մարդիկ մտածեր են, մէկ կողմէն տուողին և առնողին շահ մը ըլլալու և միւս կողմէն տրուած փոխ և ապառիկի գոյութիւնը ապագային ու է վէճի մը չենթարկելու հեռատեսութեամբ՝ իրենց տուածնուն փոխարէն գէթ գրաւոր հաւաստիք մը առնել, որմէ ժամանակի հոլովմամբ՝ յառաջ եկած է զանազան կերպ մուրհակներու և պայմանագրերու դրութիւնները:

Վաճառականութեան մէջ այս պէտքը աւելի խիստ զգալի ըլլալով և մանաւանդ գործել և գործը ընդլայնելու համար անհրաժեշտ կերպով վարկի պէտք լինելուն և վարկով դարձած գործառնութիւններէն նուազ կանխիկ ստակ գոյանալուն պատճառաւ, մարդիկները մտածեցին ի դիրութիւն վաճառականութեան՝ իրենց ուրիշին ընծայած վարկը, այսինքն պարտամուրհակը իրենց երաշխաւորութեան տակ ուրիշի մը ծախել, յորմէ գոյացաւ պարտամուրհակներու շրջաբերութիւնը:

Պարտամուրհակները երկու կերպ են, վաճառականական և պարզ:

Վաճառականական մուրհակները, վաճառականներու մէջ իրարու տուած հրամանի և ոչ հրամանի մուրհակներ են: (Որոնցմէ ըզլիսած դատերը Առեւտրական դատարանին մէջ կը նայուին):

Պարզ մուրհակները, ոչ վաճառականներու մէջ տրուած մուրհակներ են: (Ասոնցմէ ծագած դատերը Հուգուգի մէջ կը նայուին):

Ոչ վաճառականներու մէջ փոխանակուած հրամանի մուրհակներէ բղխած դատերն ալ՝ Թիճարէթը կը նայի։ Հրամանի մուրհակ ըսելով պիտի հասկնանք այն կերպ մուրհակը որ ստորագրողը՝ զայն ուրիշի մը ծախելու արտօնութիւն տուած է, այսինքն « հրամանի » գրած է։ Զորօրինակ .

Լիբա Օսմ.

100

Վճարածամ

61 օր

Թուականէս մինչ (61) վաթսուն և մէկ օր վերջ պարտիմ վճարել վերոյիշեալ հարիւր հատ Օսմ. ոսկին ի հրամանի . . . էֆէնտի . . . եանի, որոյ փոխարէն կանխիկ ստակ (կամ ապրանք) առած եմ :

Թուական

Ստորագրութիւն

Պարզ մուրհակները շրջաբերութեան չեն կրնար ելնել, Մէճէլէի օրէնքով մէկէ մը ուրիշի մը կրնայ անցնիլ, սակայն անկէ ալ ուրիշի մը չի կրնար անցնիլ :

Ոչ հրամանի մուրհակ մը ուրիշի մը փոխանցելու համար յետագայ կանոնը պէտք է գրել : Զորօրինակ .

« Մուրհակիս ներքոյ գրեալ գումարը որչափ որ իմ անուանս գրուած է, սակայն իմ անունս հոս փոխանուն (նամի միսրաար) ըլլալով, ինձ հետ երբեք վերաբերութիւն չունի և առնելիքը . . . էֆէնտիին կը պատկանի » :

Հրամանի մուրհակի օրէնքը գրեթէ փոխգրի օրինաց ընթացքին կը հետեւի, միայն սա տարբերութեամբ որ, փոխգրի երկրէ երկր կը քաշուի և չորս հոգիի (քեշիտեճի, մուխարապ, նամիլ, վե միւպրիգ եախօտ քանսիլ խոեհ) մէջ կը դառնայ, իսկ հրամանի մուր-

հակը նոյն երկրի մէջ երկու հոգիի՝ այսինքն առնող և տուողի մէջ կը դառնայ, մնացեալ պարագայներու մէջ յարանմանն է :

Փրօթէստի պայմաններու մէջ՝ մուրհակ կրողը (նամի) մուրհակ ստորագրողին վրայ անպատճառ փրօթէստ քաշելու պարտաւոր չ'է, այլ եթէ ճիրանթաներ կան՝ այն պարագային ամէնուն ալ քաշելու պարտաւոր է (իսկ բուն ստորագրողին կամաւոր է) :

Հրամանի մուրհակէ ինչպէս նաև վաճառականական ամէն կերպ գործառնութիւններէ բղխած դատերը հինգ տարիէն ժամանականց (միւրիւրի գեման) կըլլան, իսկ ոչ վաճառականական գործողութիւնք. 15 տարիէն ժամանականց (միւրիւրի գեման) կըլլան :

Վաճառականութեան մէջ ասոնցմէ ի զատ՝ քանի մը կերպ մուրհակներ ալ կան. Ա. Բնակավայրի մուրհակ (իգամեքիեան սեհետի) : Բ. Բաց մուրհակ (աջըգ պօնօ) : Գ. Հրամայագիր (քեետիյե կմրի) : Դ. Չէք :

Ա. — Բնակավայրի մուրհակ (իգամեքիեան սեհետի) մուրհակին արժէքը անպատճառ որոշեալ տեղւոյ մէջ վճարուելու պայմանաւ՝ տրուած պարտամուրհակն է, որով անկէ զատ պարտապանին ուրիշ տեղ վճարում ընել չի կրնար ստիպուիլ :

Զոր օրինակ .

Մի միայն (50) Օսմ. լիբա է :

Յիզմիր բնակող վաճառական . . . էֆ. էն այս անգամ իբրև փոխ յիսուն հատ Օսմ. լիբա առնելով՝ Թուականէս վաթսուն և մէկ օր վերջ 'ի Կ. Պոլիս . . . խանի մէջ յիշեալ էֆ. ին և կամ իր հրամանին վճարելու պարտաւոր եմ :

Թուական և տեղի անուն Ստորագրութիւն

Վերոգրեալ, ձեռն ինչպէս որ արդէն կըհասկցուի, մէկը Իզմիրի մէջ մէկէն ստակ կ'առնէ, Պոլիս գալու վճարելու պայմանաւ՝ պարտամուրհակ մը կ'ուտայ :

Բ. Բաց մուրհակ (աջբգ պօնօ) ներկայացնողին վճարելու պայմանաւ տրուած մուրհակն է, բայց այս դրութիւնը կարգ մը զեղծմանց առիթ տալուն համար իսպառ ջնջուած է, արժէքը իբրև պարզ առնելիք մը կը ճանչցուի :

Գ. Հրամայագիր (քետիյէ եմրի) և չէք. այս երկու մուրհակները գրեթէ իրարու յարեւմտան են նուազ տարբերութեամբ: Ինչպէս մէկը՝ սեղանաւորի մը և կամ դրամատան մը քով կամ ստակ և կամ վարկ մը կ'ուսնենայ, իրեն ուրիշի մը ունեցած պարտքին փոխարէն պարտապանին ձեռք չէք մը կուտայ յանձնարարած տեղէն գանձելու պայմանաւ :

Զոր օրինակ .

Ի Կ. Պոլիս Պաղչէ գարու դրամատէր . . . էֆ.

Մուրհակս ներկայացնողին (և կամ . . . էֆ. և իւր հրամանին) հաճեցէք յիսուն հատ Օսմ. լիրա վճարելով մեր հաշւոյն անցընել :

Թուական

Ստորագրութիւն

ՓՐՕԹԷՍՏ ԵՒ ՎՆԱՍՍՊԱՀԱՆՁ

ՍԻ ԻՐ ՍԵՂՐՈՒՆԲ

(Փրօթէս վէ գարար գիւտակ)

Վաճառականութան գլխաւոր պայմաններէն մին ալ ձեղապահութիւնն է, ինչպէս որ մեքենայի մը գործիքներէն մէկուն անուղղութիւնը կազդէ միւսներուն ,

և յանկէ յառաջ կուգայ ամբողջ մեքենային անուղղութիւն և խանգարումը . նոյնպէս ալ մէկու մը միւսին հանդէպ ըլլած խոստումը օրին չի կատարելը անոր ալ ուրիշի մը հանդէպ եղած խոստումը չի կատարելու առիթ կ'ըլլայ, որով անկէ կը ծագի անձեղապահութիւն և առեւտրական գործի խանգարում և անկում : Ասոր համար մարդիկ պէտք զգացած են, մարդը բռնադատել ձեղապահութեան օրինաց և վլասի հատուցման ենթարկել զանոնք, որոնք կը խոստանան ու չեն կատարեր : Բնական է որ բացառիկ ներում պիտի չնորհէին անոնց՝ որոնք կը փափաքէին թէպէտև խոստումին կատարել, բայց իրենց կամքէն բոլորովին անկախ՝ հզօր պատճառի մը առթիւ կարգիլուին կատարել իրենց խոստումը . այս պատճառներու արդարացուցիչ ըլլալու ու չըլլալու առարկութեանց գնահատութիւնն ալ դատաւորին ձգած են :

Դիմացինին խոստումը չի կատարելուն առթիւ վլասի ենթակայ եղող և դատ վարել ուղող անձը պէտք է զիտնայ որ եթէ կանխաւ դիմացիի հետ գրաւորապէս եթէ օրին չի յանձնեմ (կամ չընեմ) տեղի ունեցած վլասը և ծախսերը տուժելու պարտաւոր եմ, և կամ եթէ օրին չի յանձնեմ (կամ չընեմ) . . . էֆ. ին այս առթիւ ենթակայ եղած . . . օսմ. լիրա վլասը տուժելու պարտաւոր եմ.» եթէ այսպէս պայման ըրած ունի, իր վլասը պահանջելու իրաւունք կ'ունենայ . իսկ եթէ ոչ, անլսելի կըլլայ իր բողբը :

Եթէ պայմանին մէջ մի միայն « տեղի ունեցած վլասը » յիշատակուած է, քանակը որոշուած չ'է, դատարանը յետ քննութեան՝ եթէ վլասի գոյութիւնը վրձուէ, յայնժամ վլասին քանակը որոշելու համար գործի հմուտներուն (երպսպը վուգուֆ) կը յանձնարարէ, ա-

անք ինչ որ որոշեն, դատարանն ալ ըստ այնմ կը հաստատէ :

Եթէ պայմանին մէջ տեղի ունեցած վնասի քանակը յիշատակուած է, այս պարագային դատարանը ըստ այնմ կը վճռէ :

Ամէն կերպ առեւտուրի և այլ կերպ գործողութեանց մէջ, հակառակ պարագային տեղի ունեցած վնասը տուժելու պայմանը կրնայ ըլլուիլ, և դատարանն ալ եթէ արժանի տեսնէ, կրնայ վճռել :

Իսկ ստակի վճարման պայմաններու մէջ, ենթադրենք թէ երկուստեք նոյն իսկ տուգանք մըն ալ պայմանած ըլլան, այս պայմանին կարեւորութիւն չըլլալով՝ օրինական տոկոսէն անդին ո ե է վնաս մը չի կրնար պահանջուիլ :

Գնուած ապրանքը եթէ բուն օրինակին համեմատ չըլլայ, և կամ վնասուած ըլլայ, այս պարագային վնասի հատուցման պայման ալ չըլլայ անգամ, դարձեալ տեղի ունեցած վնասը կրնայ պահանջուիլ :

Խոստմնադրուժ անձը՝ եթէ իր խոստումը իր կամօքէն բոլորովին անկախ և արգելիչ պատճառի մը առթիւ չէ կրցեր կատարել, վնասի հատուցման պարտաւոր չ'ըլլար :

Փոխգրի և հրամանի մուրհակներու մէջ, օրին չը վճարուած պարագային՝ անմիջապէս փրօթէստ ընելու պարտաւորութեան նպատակը, Ա. փոխգրիը քաջուողին (մոխարապ) կողմէ չընդունիլը և կամ ընդունելով չի վճարելը պաշտօնապէս ապացուցանելն է . երկրորդ՝ փոխգրին և կամ հրամանի մուրհակին մէջ եթէ (ճրարանք) փոխանցողներ կան, զանոնք ալ պատասխանատուութենէ չը փախցնելն է : Իսկ հրամանի մուրհակին մէջ եթէ փոխանցում չի կայ, փրօթէստ ընելը պարտաւորիչ չէ :

Փրօթէստի գործողութիւնը տեղական նօտարի (մոսգավէյաք մոսհարիրի) միջոցաւ կ'ըլլայ, իսկ նօտար չը գտնուած տեղ, այն տեղի դատարանը կ'ընէ, ապա թէ ոչ՝ ուրիշ ձեւով ընելը անվաւեր է :

Փրօթէստի թուղթը քաջուողներուն ղեկուցանելէն (թիպիդ իթմիք) 15 օր, քաջողը՝ տեղական դատարանին գիմելով զանոնք դատավարութեան կողել տալու պարտաւոր է . ապա թէ ոչ՝ փրօթէստը իր կարեւորութիւնը կորսնցնելով չեղեալ կը նկատուի :

Փրօթէստ եղող անձը եթէ անհետացած է, քաջուած փրօթէստը լրագրաց միջոցաւ պէտք է հրատարակել :

ՓՈՍԱՆՁՈՒՄ ԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ԻՐ ՍԱԶՅՈՒՆՔԸ

(ձիւրօ յիէ ֆեժալէր)

Վաճառականութեան մէջ՝ վարկը անհրաժեշտ պէտք ըլլալուն պատճառաւ, ընական է որ ապառիկ գործառնութեանց մէջ կանխիկ առեւտուրի չափ պատրաստ ստակ չը գոյանար, որով մարդ թէև ի ձեռին կարգ մը առնելիքներու պարտամուրհակներ կ'ունենայ, բայց զանոնք գանձելու և իր պէտքերը ընձեռելու մէջ խիստ դժուարութիւններ կը զգայ . հետեւաբար մարդիկ այդ դժուարութիւնները գիւրացնելու և միանգամայն իրենց պէտքերն ալ ընձեռելու միջոց մը ըլլալու համար, պէտք տեսած են իրենց ի ձեռին եղած պարտամուրհակները, իրենց երաշխաւորութեան

ներքե իրարու ծախել, յորմէ յառաջ եկած է փոխան-
ձուով (նիրո) սովորութիւն :

Փոխանձուով կերպով մը յանձնարարութիւն (նե-
վայի) է և կերպով մըն ալ ժամանակաւոր երաշխաւո-
րութիւն է :

Յանձնարարութեան կերպին և եղանակին վրայ
փոխդրի բաժնին մէջ (տես երես 36.) պէտք եղածն
արդէն խօսեցանք, այժմ հոս ալ ևս կրկնելու պէտք
չի մնար :

Գալով երաշխաւորութեան, վաճառականական օ-
րինաց մէջ (քիմարէք գալուսի) երաշխաւորութեան վե-
րաբերեալ բացորոշ տրամադրութիւն մը չկայ : Միայն
թէ փոխդրի և հրամանի մուրհակներու բաժնին մէջ՝
« Փրօթէստ եղած պարագային, դուրսէն մէկը կրնայ
միջնորդել և արժէք վճարել, որուն (միրքիվեսիք, ա-
վայ) միջնորդ կ'ըսուի, որ տեսակ մը երաշխաւորու-
թիւն է » ըսուած է : Երաշխաւորութեան գործողու-
թիւնը Մէճէլլէի առնուած է : Սակայն առեւտրական
մը իր գործառնութեանց մէջ շատ անգամ երաշխա-
ւոր ըլլալու և երաշխաւոր տալ և առնելու պէտք ու-
նենալուն համար՝ աւելորդ չենք համարիր Մէճէլլէի
օրինաց պատկանող երաշխաւորութեան (քեֆայիք) օ-
րէնքի մասին, մասնաւոր գաղափար մը տալ մեր
Պատ. ընթերցողաց :

Երաշխաւորութիւնը երկու կերպ է . Ա. Անձնական
երաշխաւորութիւն (քեֆայիքի նեֆայիքի) . Բ. Դրամական
երաշխաւորութիւն (քեֆայիքի մայիքի) :

Ա. — Անձնական երաշխաւորութեան պայմանը
առեւտրական շրջանակէն բոլորովին դուրս՝ վարչական
պայման մը ըլլալուն համար, աւելորդ կը համարենք
անոր վրայ խօսիլ :

Բ. — Դրամական երաշխաւորութիւնը երկու կերպ
է . Ա. Բացարձակ երաշխաւորութիւն (քեֆայիքի մուդ-
յագա) . Բ. Պայմանաւոր և կամ չափաւոր երաշխաւո-
րութիւն (քեֆայիքի մուգաեհտե) :

Ա. — Բացարձակ երաշխաւորութիւնը այն է որ,
մէկը՝ պարտքին հատուցման կ'երաշխաւորէ, որով ցոր-
չափ պարտքը անվճար մնայ, երաշխաւորն ալ այնչափ
ատեն պատասխանատու կը մնայ, և կամ թէ « Այսինչին
որչափ ապրանք տաս, և կամ այնինչին քով որչափ առ-
նելիք որ ունենաս, և կամ այնինչ մարդը՝ ձեր ապ-
րանքը եթէ յափշտակէ (դասայ) և կամ թէ գողնայ
(սըրգաք), կամ այսինչ մարդը, այնինչ բանը չը շինէ,
և կամ վարձակալը վարձքը չը վճարէ և օրին չեղնէ,
ես երաշխաւոր եմ » ըսելով կ'երաշխաւորէ :

Երաշխաւորեալ բանի վճարածամը հասած պարա-
գային՝ առնելիքի տէրը, ուղէ բուն պարտապանէն (մե-
տիուսն) կը պահանջէ, ուղէ պարտապանը ձգելով երաշ-
խաւորէն կը պահանջէ, և ուղէ թէ՛ պարտապանէն, և
թէ՛ միանգամայն երաշխաւորէն կը պահանջէ :

Պահանջատէրը՝ եթէ իր պահանջի վճարածամը եր-
կարածդէ (քեֆիլ կըմիք), մի և նոյն բանը անուղղակի
կերպով երաշխաւորին ըրած կըլլայ, որով երաշխա-
ւորը մինչ վճարումը պատասխանատու կը մնայ :

Պայմանաւոր (քեֆայիքի մուգայիտե վի ես մեղրուդե)
երաշխաւորութիւնը, այն է որ՝ մէկը, « Այսինչ մարդու
քով եղած առնելիքիդ այսչափ մասին, և կամ թուա-
կանէս մինչ այսչափ ատեն, և կամ այնինչ մարդը՝ եթէ
քու առնելիքդ չը վճարէ, և կամ եթէ այնինչ բան
ըլլայ, և կամ եթէ ինք այնինչ բան կատարէ, ես ե-
րաշխաւոր եմ. » ըսելով երաշխաւորութիւն կ'ընէ. զոր
այն պարագային պահանջատէրը՝ մինչև նոյն թուա-

կանր՝ եթէ երաշխաւորին վրայ դիմում չընէ՝ այլեւս դիմում ընելու իրաւունք չ'ունենար : Այն պարագային պահանջատէրը՝ կը պարտաւորի նախ պարտապանին դիմում ընել , եթէ անոր վճարելու կարողութիւնը չը գտնէ , այն ատեն նորէն երաշխաւորին դիմելու իրաւունք կ'ունենայ :

Կամ թէ պահանջատէրը կը պարտաւորի սպասել՝ որ բուն պարտապանին և երաշխաւորին մէջ եղած պայմանը լրանայ , որպէս զի անկէ յետոյ երաշխաւորին դիմելու իրաւունք ստանայ :

Երաշխաւորութեան պայմանը հաստատուելէն յետոյ , երաշխաւորը այլևս առանց պահանջատիրոջ հաւանութեան երաշխաւորութենէ չի կրնար հրաժարիլ . իսկ պահանջատէրը կրնայ զայն երաշխաւորութենէ ազատել :

Բայց եթէ պահանջատէրը աակաւին երաշխաւորեալ բանը պարտապանին յանձնած չէ , երաշխաւորը իսկոյն կրնայ հրաժարիլ , հակառակ պարագային պատասխանատու չէ :

Երաշխաւոր մը՝ յապահովութիւն իր երաշխաւորութեան , պարտապանէն կրնայ ուրիշ երաշխաւոր և կամ գրաւ պահանջել :

Գործի մը քանի մը երաշխաւորներ կրնան ըլլալ , բայց եթէ ասոնք իրարու երաշխաւորութեամբ երաշխաւորած չեն (երտիկերիցե միւքերեքիլ տիլիլ տիլիեր) երաշխաւորեալ բանէն եկած վնասը հաւասարապէս կը կրեն , առանց մին միւսէն աւելի բան մը տուժելու . իսկ եթէ իրարու երաշխաւորութեամբ երաշխաւորած են , այն ատեն տեղի ունեցած վնասի ամբողջութեան , ամէն մէկը իրարու երաշխաւոր են , որով պահանջատէրը երաշխաւորներէն որն որ կարող գտնայ ամբողջ պահանջը՝ անկէ կրնայ պահանջել :

Պարտապան մը՝ վճարածամէն առաջ եթէ օտար երկիր երթայ , պահանջատէրը՝ կրնայ դատաւորին դիմել անմիջապէս պարտապանը դատի կոչելով՝ երաշխաւոր մը պահանջել անկէ :

Երաշխաւոր մը՝ իր երաշխաւորած գումարին փոխարէն պահանջատիրոջ ի՛նչ քանակ ստակ , և կամ ի՛նչ քանակ ասրանք որ տուած է , իր երաշխաւորած պարտապանէն նոյն քանակութեամբ պահանջելու իրաւունք ունի : Անկէ աւելի պահանջելու իրաւուք չունի :

Իսկ եթէ իրաւախոհութեամբ կարգադրած է , իրաւախոհութեամբ վճարած գումարը եւեթ պահանջելու իրաւունք ունի :

Երաշխաւորը եթէ մեռնի , իր երաշխաւորութիւնը տակաւին կայուն մնալով , իր ժառանգութենէն (քերեքտեց) կը պահանջուի :

Եթէ պահանջատէրի (տայից) և կամ պարտապանի (մետիւց) երկուքէն մէկը մեռնի , երաշխաւորը դարձեալ ցվերջ երաշխաւոր կը մնայ :

Պարտապանը՝ եթէ իր պահանջատէրը ուրիշի մը յանձնարարէ , և երբ պահանջատէր և յանձնարարեալ (յանձնարարութիւն ընդունող) երկուքն ալ ասոր հաւանին (գալուլ իքմեք) , այն ատեն երաշխաւորը այլևս երաշխաւորութենէ կ'ազատուի :

Որոշ ժամանակի մը համար վարձուած , կալուածի մը վարձքի մասին երաշխաւորող անձը , մինչև նոյն ժամանակին պատասխանատու է , անկէ վերջի շարունակութեան պատասխանատու չէ :

Գալով փոխանցման օրինաց , առևտրական հրապարակի վրայ փոխգիրները և հրամանի մուրհակները իբրև ստակ ձեռքէ ձեռք կրնան շրջիլ :

Հրամանի փոխգիրները՝ ինչպէս նաև հրամանի

մուրհակները իրարու կրնան փոխանցուիլ (ձիւրօ օլու-
նուրլար), իսկ ոչ հրամանիները չեն կրնար : Փոխանցու-
մը օրինական ըլլալու համար, պէտք է որ փոխանցուած
թուղթին ետեւ, փոխանցման թուականը, որու փոխան-
ցուած ըլլալը, փոխանցելու հրաման տալը ու չը տալը,
արժէքը ինչով փոխարինուած ըլլալը, բացորոշապէս
գրուի : Զորօրինակ .

« Փոխգրիս (կամ մուրհակիս) արժէքը հաճեցէք
վճարել ի հրամանի . . . եան էֆէնտիին՝ որոյ փոխարէն
կանխիկ դրամ (կամ սպրանք) ստացած եմ :

Թուական

Ստորագրութիւն

(Փոխանցման մէջ՝ առ ո՛վ ուղղեալ ըլլալը գրելու
հարկ չկայ, վասնզի արդէն մուրհակի մէջ և կամ ձի-
րօի մէջ պարտապանին ու ըլլալը յայտնի է) :

Վերոյիշեալ պայմաններէն զուրկ եղող ձիւրօ մը
անվաւեր ըլլալով՝ զայն կրողը (հաւիլ) ոչ թէ անոր
պահանջատիրութեան, այլ պարզ փոխանորդութեան
հանգամանք մը կը ստանայ, և եթէ՛ անոր յենլով դատ
վարելու ըլլայ, թէ պարտապանը և թէ փոխանցողը
անոր դէմ վճարում եղած ըլլալու, և այլ շատ մը ա-
ռարկութիւններ կրնան մէջ բերել, դատարանը եթէ
այս առարկութիւնները օրինաւոր գտնայ, ըստ այնմ
կը վճռէ :

Իսկ անթերի փոխանցումին դէմ եղած առարկու-
թիւնը, միայն այն պարագային ընդունելի է, երբ կրողին
կողմէ ստորագրեալ ընկալագիր մը տրուած է, ապա
թէ ոչ՝ ո և է առարկութիւն լսելի չըլլար : Երկրորդ-
ամէն պարագայի մէջ՝ թէ պարտապան և թէ փոխան-
ցողը, թուղթը ներկայացնողին այսինքն կրողին՝ « բուն

իրաւանց տէր (հաւիլը հագիզի) ըլլալու մասին »,
կրնան երգում առաջարկել, այսինքն թէ այն մուրհակը
ապօրէն միջոցաւ ձեռք բերած չէ :

Փոխանցումները վճարումէն առաջ պէտք է ըլլան,
հակառակ պարագային անվաւեր կ'ըլլան :

Իսկ եթէ կեղծելով վճարածամէն առաջ թուական
գրուի և փոխանցի, սոյն գործողութիւնը անվաւեր
ըլլալով հանդերձ, ընողները նենգութեան (սախքիւնար)
օրինօք պատժոյ կ'ենթարկուին :

Փոխգիր և հրամանի մուրհակները իրարու փոխան-
ցողները մինչեւ վճարածամին օրը իրարու չլթայակազ
(մխքեսխեսիկն) երաշխաւոր են. եթէ արժէքը վճարածա-
մին վճարուի՝ փոխանցողները (ձիւրանքաւար) այլեւս պա-
տասխանատուութենէ կ'ազատուին : Իսկ երբ չը վճարուի
եթէ օրին ձիրանթաներու վրայ փրօթէստ եղած և մի-
անգամայն դատի ալ ձեռնարկուած է, այն ատեն մինչև
հինգ տարի իրարու երաշխաւոր կը մնան : Ինչպէս
փոխգրի բաժնին մէջ խօսեցանք, թուղթը վերջին ան-
գամ որու ձեռք որ մնայ, նա պարտաւոր է վճարածա-
մին պարտապանին և կամ փոխանցողին ներկայացնել,
եթէ անոնք չընդունին՝ պէտք է որ ամէնուն վրայ ալ
փրօթէստ քաշէ : (Պէտք է զիտնալ որ պահանջատէր
(տայից, հաւիլ) այս պարագային մէջ ազատ է, ուզէ
մինակ պարտապանին վրայ փրօթէստ կը քաշէ, ուզէ
մինակ փոխանցողներու վրայ, և եթէ ուզէ՝ թէ բուն
պարտապանին և թէ փոխանցողին վրայ փրօթէստ կըր-
նայ քաշել) :

Եթէ օրին փոխանցողներու վրայ փրօթէստ չընէ,
զանոնք այլեւս պատասխանատուութենէ կը փախցնէ,
ու անոնցմէ ալ եւս չի կրնար պահանջել : Բայց բուն
պարտապանէն (եթէ փրօթէստ ալ չընէ), մինչև հինգ

տարի պահանջելու բացարձակ իրաւունք ունի :

Փոխանցողները առանց փրօթէստի կրնան պատասխանատու պահուիլ՝ պայմանաւ որ դուրսէն պահանջատիրոջ գրաւորապէս ապահովցնեն թէ , « Յորչափ այդ գումարը վճարուած չէ , մենք միշտ պատասխանատու ենք » : Այս ապահովութիւնը վճարաժամէն առաջ պէտք է հասցնել . փոխգրի բաժնին մէջ , ինչպէս ըսուեցաւ՝ դուրսէն մէկը փրօթէստի գործին կրնայ միջնորդել և արժէքը վճարել , զոր այն ատեն պահանջատիրոջ ամբողջ իրաւասութիւնը անոր կ'անցնի :

Փոխգիրը եթէ կորսուի , և եթէ անոր երկրորդ օրինակները չըլլան , կորսնցնողը պարտաւոր է անմիջապէս փրօթէստ քաշել և դատարանին դիմել , դատարանը երկուստեք յարարերութեան թուղթերը նկատողութեան առնելով՝ զարժանը կը անօրինէ :

Պարտապանը՝ ի դիմաց փոխգրի գումարին առ հաշիւ գումար մը վճարել ուզած պարագային , ներկայացնողը պարտաւոր է զայն ընդունիլ , իսկ մնացեալ մասին համար դարձեալ փրօթէստ քաշել :

Եւրոպայէն՝ Օսմ. երկրի մէջ բնակող վաճառականի մը վրայ և փոխադարձաբար քաշուած փոխգրիները մինչև վեց ամիս , իսկ Ամերիկայէն մինչ մէկ տարի , և այսպէս տեղի հեռուորութեան համեմատ , կրողը՝ զայն պարտապանին ներկայացնելու , չընդունած պարագային օրինական միջոցի դիմելու պարտաւոր է . ապա թէ ոչ՝ իրաւունքէ կը զրկուի :

Ինչպէս որ քաշուող պարտապանը՝ փոխգիրը չընդունած պարագային , կրողը՝ անմիջապէս փրօթէստ պէտք է ընէ , նոյնպէս ալ՝ զայն ընդունելով չը վճարած պարագային , քաշուող պարտապանին վրայ դարձեալ երկրորդ փրօթէստ մըն ալ քաշել պէտք է :

Փրօթէստ ընողը , փոխանձողը և պարտապանը եթէ միեւնոյն միջավայրին մէջ բնակին , փրօթէստ քաշողը՝ փրօթէստի պաշտօնական թուղթը՝ քաշուողին հազորթուելէն (քեսլիդ) մինչև 15 օր՝ տեղւոյն առեւտրական դատարանին և կամ ստակն ուր տեղ որ վճարուելու պայման եղած է , հոն դիմելու և քաշուողին վրայ դատ վարելով գումարը պահանջելու պարտաւոր է . հակառակ պարագային այլեւս փրօթէստը զօրութիւն չ'ունենար : Եթէ բնակավայրնին իրարմէ հեռու է , այս 15 օրուան ժամանակամիջոցը նոյն համեմատութեամբ կ'երկարաձգի :

Եթէ միայն փոխանցողին վրայ փրօթէստ եղած է՝ բայց որոշ ժամանակամիջոցի մէջ դատի դիմում եղած չէ , փոխացնողը այլեւս այդ պարտքին պատասխանատուութենէն կ'ազատի :

Փոխանցողը՝ երբ իր վրայ եղած բողոքին առթիւ , այն փոխգրին արժէքը վճարած է , այն պարագային ինքն ալ անմիջապէս միւս փոխանցողներու վրայ մինչ քաշող փրօթէստ ընելու եւ պահանջելու իրաւունք ունի :

Փոխգրի և կամ հրամանի մուրհակի արժէքը՝ եթէ բողոքեալը չվճարէ , բողոքող անձը կրնայ դատարանի դիմելով բողոքեալին ինչքը և կալուածները արգիլման (հաճգ) տակ առնել :

Փոխգիր և կամ հրամանի մուրհակը փրօթէստի տրուած միջոցին՝ պաշտօնեան ներկայացուցած մուրհակի պարունակութիւնը փրօթէստի թուղթին ետե (բրօքսքնամե) նոյնութեամբ ընդօրինակելով , մէկ օրինակը յատուկ պաշտօնեայի մը միջոցաւ , պարտապանին կը զրկէ :

Պարտապանը՝ իր առարկութիւնները , կրնայ անոր

ետեւ գրելով մէկ օրինակը պահել և միւսը վերադարձնել :

Յետափոխգիր (յեզամայիօ), փոխգիրը՝ չընդունուած պարագային , պահանջատիրոջ կողմէն փոխգիր քաշողին վրայ , նոյն գումարին վրայ տեղի ունեցած ծախսերը և դրամի տարբերութիւն աւելցնելով , հակառակ փոխգիր մը քաշելով ետ դարձնելուն կ'ըսուի :

Փոխգրի մը և կամ հրամանի մուրհակի մը տոկոսը , փրօթէստ եղած և բողոքուած թուականէն կը սկսի բանիլ : Ապա թէ ոչ՝ վճարաժամէն որչափ ատեն որ անցնի , տոկոս պահանջել պէտք չի գար :

Ս Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՒ ԻՐ ՍԵՂՈՒՆՔԸ

(ԻՇրասիեէք վէ հաճօր)

Վաճառականութիւնը և առևտուրը առաւելապէս վստահութեան առանցքին շուրջ դառնալուն համար , բնական է որ մարդիկ այդ վստահութիւնը և ուղղամտութիւնը , շատ կանոնաւոր և հաստատ հիման վրայ դնելու պէտք պիտի զգային , որպէսզի այդ փոխադարձ ներշնչուած վստահութիւնը չարաչար չգործածուի և անով վստահութեան և առևտուրի կանոնաւորութիւնը չխանգարի և գործերը չիյնան : Հետեւաբար այդ պէտքին հիմը , օրէնքի աւելի հաստատ գետնի վրայ դնել պէտք էր , որուն համար օրէնսդիրները մտածած են խիստ օրէնքներ դնել , որ վաճառականը եւ անոր յարակից խանութպանը խիստ շրջահայեցութեամբ և հեռատե-

սութեամբ վարեն իրենց գործին ղեկը , այնպէս որ եթէ անմիջական վճարումնին առաւել մինչ երեք օր չկարենան վճարել , անպատճառ պարտաւոր ըլլան իրենց անանկութիւնը յայտարարել : Կամ թէ պահանջատէր մը վճարաժամին երբ իր պահանջը չը ստանայ , իրաւունք ունենայ պարտապանին անկարողութիւնը առարկելով , անոր անանկութիւնը պահանջել , և մինչև իսկ շատ պարագաներու մէջ եթէ բողոքելու չըլլայ , այլեւս իրաւունքէ զրկուած կ'ըլլայ :

Մնանկութիւնը՝ այս պայմաններով մասամբ մը պարտաւորիչ ընելէն ետք , միանգամայն անոր հետեւ տեւելիք ընթացքն ալ խիստ ծանրակշիռ և ահարկու ըրած են . այնպէս որ անանկ մը իր անանկացեալ օրէն սկսեալ մինչև որ յաջողի պահանջատէրները գոհացնել , նոյն ժամանակամիջոցին մէջ , անչափահաս տղոց պէս ուրիշներու իրաւասութեան կ'ենթարկուի , որով այլ եւս ո՛չ իր առնելիքը կրնայ գանձել , ո՛չ պարտք վճարել և ո՛չ գործ մը ընել , ո՛չ դատ մը վարել , ո՛չ վկայութիւն մը տալ , և ո՛չ իսկ խօսք մը տալ կամ առնել և ո՛չ պաշտօնի մը ընտրել ու ընտրուիլ . մէկ խօսքով մարդկութեան իրաւունքէն բոլորովին կը դադրի : Եթէ իր գործառնութեանց մէջ ոեւէ թերութիւն և կամ նենգութիւն մը նշմարուի , անոր համեմատ ալ ծանր պատժոյ կ'ենթարկուի . իսկ երբ յաջողի իր պահանջատէրը գոհացնել , այն ատեն իր նախկին դիրքն ու պաշտօնը կը վերստանայ և կրնայ գործ մը ընել :

Այս ամէն ստիպողականութիւնը , ըլլիս թէ պարտքի և իրաւունքի նուիրական սկզբունքէն , և զայն ապահով դիրքի մէջ դնելու հարկէն :

Մնանկութիւնը՝ հին օրինաց մէջ այնչափ ձեւաւորուած չէր , այլ ժամանակի հոլովումով աւելի կանոնա-

ւոր ձեւ մը ստացաւ. սակայն այսու հանդերձ հին ժամանակներու մէջ պարտք և իրաւունք պաշտպանելու ակզբունքը, աւելի ջերմ և աւելի հաստատ էր, այնպէս որ եթէ մէկը սկսէր անուղղութեամբ ասկէ անկէ պարտք ընել և ի վերջոյ չվճարել, կառավարութիւնը ի նշանակ այլոց, զայն հրապարակաւ կը գլխատէր և անդամատելով պահանջատէրերու վրայ պահանջի համեմատութեամբ կը բաշխէր :

Յետոյ մարդոց տակաւ զարգացումը, այս վայրագ դրութիւնը յեղաշրջեց, գլխատումը՝ տանջանքի և բանտի վերածեց: Բայց ասոր ծանրութիւնն ալ երկար տանել դժուար եղաւ. մարդիկ ստիպուեցան զայն քիչ մը բարեփոխել. ու բաւ համարեցին միայն պարտապանը պարտք ընելու իրաւասութենէն դադարեցնելով, ժամանակ մը բանտարկել և ունեցած ինչքն ու ստացուածքը գրաւել, ծախել և պահանջքնին առնել. յորմէ յառաջ եկաւ արգելում իրաւանց (հաճր), արգելում ինչքի (հաճգ), համեմատական բաշխում (գուրիւմ), բանտ (հապս) և այլն :

Ասոնք վերջէն Մէճէլլէի մէջ, օրէնքի կարգ անցան և այսօր ընկալեալ դրութիւնն մը դարձած է. (անշուշտ պէտք է գիտնալ որ, ասոնք շատ անգամ նոյն իսկ վաճառականի մը համար իսկ գործադրելի են :)

Մէճէլլէի արգելումն իրաւանց (հաճր) կէտը, պարզ գործառնութեանց շատ պարագաներու մէջ, և նոյն իսկ առեւտրականութեան այլ և այլ տեսակներու մէջ, շատ զգալի ըլլալուն համար՝ աւելորդ չեմ համարիր մասնաւոր գաղափար մը տալ մեր Պատ. ընթերցողաց :

Մէճէլլէի մէջ արգելումն իրաւանց (հաճր) երկու կերպ է .

Ա. Ըստ ինքեան արգելեալ. Բ. Դատաւորի վճիռով արգելեալ :

Ա. — Ըստ ինքեան արգելեալներն են՝ անչափահասները (սաղիք վե գայր միւսմիյոգ վե գայր քեշիտ), բացարձակ խենթ յիմարները (մեճնուն մուրպլոգ), ապուշները (մարուն) :

Ասոնք՝ առանց դատաւորի վճիռի մը պէտք ունենալու, արդէն ըստ ինքեան զրկեալ են, ոչ ոք իրենց հետ գործ ընել չուզիր, և իրենց ու է կերպ գործառնութիւնը երբեք նշանակութիւն մը չ'ունենար, պատասխանատուութիւն մը չի հրաւիրեր, որոնք ընդհանրապէս հիւանդանոցներու մէջ կը պատսպարուին :

Բ. — Դատաւորի վճիռով արգելեալներն են՝ երբեմնակի խենթ յիմարները (մեճնունը գայր միւրպլոգ), չափազանց շուայները (սեճիհ, միւսրիճ), շատ պարտք ունեցողները (մետիւն, միւսիլիս), տկարամիտ և պարզամիտները (սալլա վե սաւտիտիլ), որոնք դատաւորի վճիռով կ'արգելուին, և դատաւորը անոնց ազգականներէն մին (թալլիւգարտան պիրի) խնամակալ (վասի) կը կարգէ : Այս կարգի անձանց արգելումէ առաջ ըրած գործողութիւնները վաւերական են, և իրենց վեասին պատասխանատու են (գամիւն տըրլար) :

Իսկ յետ արգելման, անվաւեր է, բայց իրենց մէկու մը հատուցած վեասը տուժելու պարտաւոր են ,

Այս կերպ անձինք՝ դատաւորի մը վճռով արգելուելուն պէս, իրենց արգելման շարժառիթը պէտք է հրատարակել :

Տգէտ բժիշկներ ալ, միայն արհեստնին ի գործ չը դնելուն համար կրնան արգելուիլ :

Այս կերպ անձինք՝ եթէ բժշկուին և կամ վիճակնին բարելաւի, իրենց վրայ դրուած արգելումը կրնայ վերցուիլ :

Պարտապան մը՝ երբ իր պարտքը վճարելու դըժ-

կամակի, եթէ ապրանք ու կալուած ունի, դատաւորը զայն կրնայ ծախել և անոր պարտքը վճարել, պայմանաւոր նախ դիւրին միջոցէն պէտք է սկսի. այսինքն՝ նախ ապրանքէ, գոյքերէ սկսելու է, եթէ անոնք չը բաւականան, յայնժամ կալուածին դիմելու է: Սակայն անհատի մը բնակարանը, արհեստաւորի մը գործիքը, երկրագործի մը կենդանին և գործիքը՝ պարտքի փոխարէն չի կրնար ծախուիլ. եթէ ասոնք պէտքէն աւելի շատ ըլլան՝ աւելին կրնայ ծախուիլ: Եթէ պարտապահանջները պահանջեն, դատաւորը՝ կրնայ պարտապանը իրաւասութենէ արգելել (հաճը):

(Իճրայի օրէնք). Պարտապանը եթէ երբեք ապրանք և կալուած չունենայ, բայց իր պարտքը վճարելու կարող ըլլայ, և պահանջատէրը կարենայ պատուաւոր վկաներով զայս հաստատել, դատաւորը այն ատեն 91 օր կրնայ զայն բանտարկել, բայց այս բանտարկութեան ժամանակամիջոցին մէջ՝ պահանջատէրը իբրև կերման ծախս՝ պարտապանին իւրաքանչիւր օր հինգ դահեկան վճարելու պարտաւոր է, եթէ չը վճարէ՝ այլևս չի կրնար բանտարկել տալ:

Պարտապանի մը համար բանտը առաւել իննսուն և մէկ օր է, անկէ անդին՝ այլևս երբեք չի կրնար բանտարկուիլ:

Պարտապան մը՝ 91 օր բանտարկութիւն կրելէն վերջը, առանց բան մը պահանջուելու կ'արձակուի. սակայն պահանջատէրը՝ անկէ մինչև 15 տարի, որ ատեն որ կարողութիւն գտնայ, իր առնելիքը հանդերձ տեղի ունեցած ծախսով և տոկոսով և վճարած օրական հինգ ղուրուչ կերակուրի ծախսով, ամբողջապէս կրնայ պահանջել:

Պահանջատէր մը՝ երբ տեսնէ որ պարտապանը, իր

ունեցած ապրանքը և կամ կալուածը ուրիշի մը վրայ փախցնել սկսեւր է, այն պարագային կրնայ դատաւորին դիմել յապահովութիւն իր պահանջին, (նոյն իսկ տակաւին վճուի ներքեւ ալ անցած չըլլայ (պա իլամ մանքիւմ օյմասսա պիլէ), դատաւորին միջոցաւ զայն արգելման (հաճ) տակ առնել, ինչպէս նաև պարտապանը արգելել (մետիւնի հաճը իքմէք):

Պարտապանի մը ինչքը ծախուած միջոցին, եթէ պարտապանը անկէ ի զտու ուրիշ միջոց չունի իր ապրուստը հայթայթելու, դատաւորը ծախուած ապրանքէն մասնաւոր բան մը պարտապանին ձգելու պարտաւոր է, զոր օրինակ. ծանրագլին հագուստ հագնող մէկու մը հագուստը թկթեւ պարտքի մը համար կրնայ ծախուիլ, բայց պարտապանը եթէ անկէ զտու ուրիշ հագուստ մը չունի, անոր գնով թեթեւ հագուստ մը կրնայ գնուիլ: Այս օրէնքին կը հետեւի նաև բնակարան և այլ բաներ:

Պարտքի փոխարէն ծախուած, ապրանքի և կալուածի գինէն գոյացած դրամէն՝ նախ պարտապանի դատական ծախսերը, սենեկի վարձքը, սպասաւորի վարձքը, ու ասոնց պէս մենաշնորհեալ (իւթիաղը ալաճագ) պարտքերը կը հանուի և ապա մնացեալը պահանջատէրերուն կը տրուի. իսկ եթէ մնացեալը իր պարտքերը ամբողջ չը գոցէ, այս պարագային պահանջատէրերու վրայ պահանջի քանակի համեմատութեամբ (դուրեմաքեմ) կը բաշխուի, և մնացեալ մասին դարձեալ պահանջող կը մնան:

Պարտապանի մը վրայ՝ եթէ (եթիւմ ալաճաղը) որբի մը իրաւունքէ, և կամ կնոջ և զաւկի ապրուստէ (նաճագա) և կառավարական պարտքէ մը բղխած է, առանց պարտապանի կարողութիւնը հաստատելու պէտք ըլլալու և առանց օրական 5 ղուրուչի կերակուրի ստակ

տալու պարտաւոր ըլլալու, անմիջապէս կը բանտարկուիս Սյս առթիւ 91 օրէն աւելի չի կրնար բանտարկուիլ :

Գալով վաճառականական սնանկութեան, վաճառական մը երբ տեսնէ որ, այլեւս չպիտի կարենայ իր վճարումները կանոնաւորապէս ընել, պէտք է որ իր վճարումները դադարեցուցած օրէն՝ մինչև 3 օր ետք հաշուեկշիռը պատրաստէ, և տեղւոյն առեւտրական դատարանին մատուցանէ, և իր սնանկութիւնը յայտարարէ :

Դատարանը՝ անոր այս յայտարարութեան վրայ, սնանկութիւնը կը վճռէ, և իսկոյն լրագրաց միջոցաւ կը հրատարակէ :

Սնանկութիւն պահանջելը՝ մինակ անկարող վաճառականին ինքնաբերաբար Առեւտրական դատարանին դիմելով պահանջելուն մենաշնորհեալ չէ, այլ հրամանի մուրհակով եղած ամէն պահանջատէր՝ երբ օրին չը կարենայ գանձել, կրնայ դատարանի դիմելով անոր սնանկութիւնը պահանջել, մանաւանդ որ եթէ պահանջը կրողինն (կրանքա) է, այն պարագային՝ պահանջատէրը՝ կամայ ակամայ ստիպեալ է դատարանին դիմել : Առանց մուրհակի և թէ տոմարով եղած առնելիքներու մասին սնանկութիւն չի կրնար պահանջուիլ, ասոնք պարզօրէն կը պահանջուին :

Պարտապանը՝ դատարանի մէջ երբ իր ստորագրութիւնը ստանայ, իսկոյն դատարանը՝ մէկ հոգի անոր կողմէն, մէկ հոգի ալ հակառակորդ կողմէն գրաքննիչ յանձնաժողով ընտրել կուտայ, դատարանի անդամներէն մէկն ալ նախագահ կ'ընտրէ, որու նախագահութեան տակ, գրաքննութեան գործին կը սկսին, ուրիշ պաշտութիւններ ալ բերել կուտան, սնանկին գրել կուտան. վերջապէս յետ քննութեան՝ եթէ պարտա-

պանին ըլլալը չը հաստատուի, այն ատեն բողոքը կը մերժուի. իսկ անոր ըլլալը ստուգուի, առանց խնդրոյ էութեան մտնելու, և առանց ուէէ առարկութիւն լսելի ըլլալու, դատարանը 3—5 օր ժամանակ կուտայ պարտապանին որ կամ բողոքուած գումարը բերէ դատարանին քով աւանդ ձգէ և կամ սնանկանայ :

Պարտապանը եթէ կարողանայ պահանջուած գումարը ներկայացնել, դատարանը այն ատեն խնդրոյ քննութեան կը մտնայ, այսինքն բողոքողին իրաւունք ունենալն ու չունենալը կը քննէ. յետ քննութեան՝ եթէ բողոքողին պահանջը անիրաւ գտնայ, բողոքը կը մերժէ և ստակն ալ տիրոջ վերադարձնել կ'որոշէ. իսկ եթէ իրաւացի գտնէ, աւանդ եղած գումարը պահանջատիրոջ տրուելը կ'որոշէ :

Բայց երբ պարտապանը չը կարենայ տիրոջ թէ տալով ապահովցնել՝ այն ատեն դատարանը սնանկութիւն կը վճռէ, պէտք եղած առժամանակեայ փոխանորդներ (սիկսիթր) կը կարգէ, և եթէ սնանկացեալը սենսակ ունի՝ անմիջապէս գոցել կուտայ :

Իսկ երբ պարտապանը՝ բողոքեալ մուրհակին ստորագրութիւնը իրեն ըլլալը խոստովանի, բայց անոր դէմ կարգ մը առարկութիւններ ընէ, դատարանը ասոնք շատ հարեւանցի մտիկ կ'ընէ՝ երբ սոյն առարկութեանց մէջ պարտքի վճարուած ըլլալը շօշափող ուէէ հաւաստիք մը չը տեսնէ, դարձեալ պարտապանին կը պարտաւորեցընէ կամ աւանդ ձգել և կամ սնանկանալ. բողոքեալը եթէ ըստ վերոյիշեալ եղանակին, պահանջուած աւանդը ձգէ, դատարանը յայնժամ խնդրոյ էութեան կը մտնէ, իրաւացին կամ անիրաւ ըլլալը կ'որոշէ, իսկ եթէ ոչ՝ սնանկ կը հռչակէ :

Սնանկ մը՝ իր սնանկութեան վճիռ արուած օրէնս

սկսեալ , այլևս գործառնութենէ կը դադրի , իր պահանջները գանձելու , պարտքերը վճարելու և իր ապրանքը ու կալուածները տիրապետելու , դատ վարելու , վկայութիւն տալու և այլ այս կերպ իրաւասութիւններէ կը զրկուի . այս ամէն իրաւասութիւնները՝ իրեն գործին համար կարգուած փոխանորդներուն (սինտիք) կ'անցնի :

Մնանկ մը , եթէ վճարաժամը չը հասած դեռ ուրիշ պարտքեր ալ ունի , սնանկանալուն պատճառաւ՝ այս վճարաժամին այլևս կարեւորութիւն չը մնալով , անմիջապէս գանձելի կ'ըլլան . միւս վճարաժամը հասած պարտքերու կարգին կ'անցնին :

Իսկ սնանկի պահանջները եթէ տակաւին վճարաժամ ունին , այս վճարաժամը յարգելի է , բայց միայն սնանկին փոխանորդները՝ այս պարտապանին չը վառահած պարագային , անկէ երաշխաւոր մը կրնան պահանջել , եթէ անիկայ դժկամակի երաշխաւոր ցուցնել , յայնժամ կրնան բողոքել և անոր սնանկութիւնը պահանջել :

Սնանկութեան օրէն սկսեալ , սնանկի ամէն կերպ պարտքերու տոկոսը կը դադրի :

Եթէ սնանկ մը արդէն անկարող եղած ըլլալով հանդերձ , տակաւին գործ շարունակէ և զայս հաստատուի (այս հարստութիւնն ալ անկէ առաջ իր վրայ փրօթէստ - բողոք եղած ըլլալով կը հաստատուի) , այն պարագային դատարանը սնանկի՝ սնանկութեան թուականը դէպի ետ տանելով՝ ա՛յն թուականին կը տանի կը ձգէ՝ ուր արդէն ստուգապէս անկարող եղած էր , որով սնանկը այն թուականէն ի վեր սնանկ կը նկատուի , եւ այս ժամանակամիջոցի մէջ սնանկին կատարած ամբողջ գործառնութիւնք անվաւեր կը դառնան .

այս առթիւ եթէ բողոքող մը ըլլայ , և բողոքեալ առարկան ալ պատրաստ ըլլայ , դատարանը կրնայ ետ կոչել :

Հոս դիտելի պարագայ մը կայ որ՝ սնանկի ծախած ապրանքը , այն պարագային ուրիշէ մը ետ կրնայ առնուիլ՝ երբ սնանկի հետ գործ ընող անձ՝ սնանկի ներքնապէս անկարող ըլլալը և կամ ապրանք փախցնելու դիտաւորութիւն ունենալը գիտցած է եղեր , որ ըսել է սնանկին հետ գիտակից գործած է . ապա թէ ո՛չ՝ անգիտակ եղած պարագային , դիւրին չէ ետ կոչել :

Սակայն ամէն պարագայի մէջ սնանկութեան պաշտուականէն տասն օր առաջ՝ եղած գործողութիւնք՝ բացարձակապէս անվաւեր ըլլալով ետ կրնայ կոչուիլ :

ՓՈՒՍՆՈՐԴՆԵՐ ԵՒ ՍԻՆՏԻՔ (Հաւուեյարդար)

ԵՒ ԻՐ ՍԿՋՐՈՒՆԻՔ

Մարդոց բնութեան մէջ բնածին չարութիւն մը կայ , անոր համար շատերու մէջ խիղճը անխիղճութիւններու մէջ նուաճուած է , և մանաւանդ մարդուն մէջ չունեցածն ունենալու , ունեցածը պահպանել և աւելցնելու բնական իղձ մը ըլլալով , բնական է որ զայն ձեռք բերելու համար պիտի ջանայ ամէն միջոց ի գործ դնել : Այս պատճառաւ շատ անգամ տեսնուած է որ առեւտրական անհատ մը , երբ տեսնէ որ իր դործը հետզհետէ իյնալու , մինչև իսկ իսպառ կործանելու վտանգին հասած է , խիղձ չէ ըրած և աւելի ջան սցած է շողշողուն միջոցներ հնարելով՝ այս ու այն պարզամիտները խաբել՝ ստակ շորթել , իր ձեռքի եղած ապրանքները

ծախել և ստակ շտկել, և կամ այլոց վրայ փախցնել, և միով բանիւ թագուն հարստութիւն մը պատրաստել : Բայց մարդիկ այս կերպ միտումի մը տեղի չը ձգելու և արդարութիւնը պահպանելու համար, մտածեր են ստիպել որ վաճառական մը՝ եթէ չը կարենայ իր վճարումները կանոնաւորապէս ընել, անմիջապէս սնանկանայ, հակառակ պարագային ծանր պատժոյ ենթարկուի : Նոյնպէս տնօրինած են որ, սնանկը՝ սնանկութեան օրէնք սկսեալ այլևս նոր պարտք ընելու, իր ինչք ու կալուածներ կառավարելու իրաւասութիւնէն զրկուի. այս ամէն իրաւասութիւնը զինք կառավարող (սինտիք) փոխանորդներուն անցնի : Հետեւաբար պէտք զգացած են սնանկին և պահանջատէրերու միջնորդաբար քանի մը անձէ բաղկացեալ հաշուեյարդար (սինտիք) փոխանորդներ կարգել՝ և գործի բովանդակ տնօրինութիւնը անոնց յանձնել : Այս պարագային աւթիւ, դատարանին կողմէ կարգուած հաշուեյարդար փոխանորդներու պաշտօնը՝ մէկ կողմէն սնանկին գործերը վարել, միւս կողմանէ սնանկի գործառնութեանց եւ սնանկութեան պարագաներու վրայ քննութիւններ կատարել, միւս կողմանէ պահանջատէրերու իրաւունքը պաշտպանել, և եթէ ստուգուի որ սնանկութեան պատճառները արդարանալի են, այն ատեն սնանկի և պահանջատէրերու մէջ միջնորդական դեր մը կատարելով՝ զանոնք իրաւախոհ ընելը՝ և սնանկը վերստին վերականգնեցնելն է :

Այս փոխանորդները, ինչպէս իր կարգին ըսինք, նախ առժամանակեայ կերպով դատարանի կողմէ կ'ընտրուին և ապա պահանջատէրերու հաճութեան կ'ենթարկուին, պահանջատէրները եթէ ուզեն՝ զանոնք վաւերացնելով մնայունի կը վերածեն, եթէ ուզեն՝ անոնց տեղ

ուրիշ մնայուններ կ'ընտրեն, ասոնք թէև երկու կողմի փոխանորդներ են, բայց ինչպէս տեսանք անոնց ընտրութեան եղանակը և գործառնութեանց կերպը, Մէճէլլէի օրինաց տրամադրութեանց չաա տարբեր է : Այս փոխանորդութեան կէտը ամէն կերպ առեւտուրի մէջ գործածելի ըլլալուն համար՝ ի դէպ է հոս Մէճէլլէի փոխանորդութեան օրէնքի մասին մասնաւոր գաղափար մը տալ մեր պատուարժան ընթերցողաց :

Փոխանորդութիւն Մեքսիկոյ օրինակ . — Փոխանորդութիւնը երկուստեք հաւանութեամբ (իճապ վե գապույ իյե) պէտք է ըլլայ :

Փոխանորդեալ (միավերի), փոխանորդի (վերի) բացակայութեան ալ զանիկա կամաւոր (գապույե մեկդուֆեկ) փոխանորդ կրնայ կարգել. փոխանորդը զայս բաւելուն պէս, կրնայ մերժել կամ ընդունիլ : Իսկ առանց այն՝ կամ ո՛չ պատասխանելու՝ եթէ փոխանորդուած գործին ձեռնարկէ, զայն գործնապէս ընդունած կը նշանակէ, ապա թէ ոչ՝ լռելը չընդունիլ կը նշանակէ :

Մէկ մը իր ուղած անձը իր ամէն կերպ գործառնութեանց, ինչպէս՝ գնելու, վաճառելու (սիյ ու շիրա) վարձելու, վարձու տալու (իյճար իսքիճար), գրաւ ընդունելու, գրաւ տալու (րեհիկ իրքիւան), աւանդ առնելու տալու (մեար, իսքիար), նուէր ընդունիլ և տալու (հիպի, իրքիհապ), բան մը առնելու և տալու (ախգ ու գապգ), իրատախոհ և անպարտ ընելու (սույն ու իպրա), կալուածական առուծախի մէջ գրացիութեան առաջնութեան իրաւունք (չուֆա տավասի) պահանջելու, ուրիշ մը իրեն փոխանորդ կարգելու (ախքրի քիվքի), ընկերութիւն կազմելու (ագուր շիրքիք), փոխառնութիւն ու փոխատուութիւն ընելու (իգրագ ու իսքիգուագ) մէջ, ինչպէս նաև ամէն տեսակ դատերու մէջ, երդումէն

դատ, բուն դատի մը տիրոջ վերաբերեալ ամէն մէկ կէտին մէջ, իբրև բուն գործին տէր նկատուելու, և հակառակ պարագային գործը իսթինաֆ, թեմիզ ընելու և այլն ամէն խնդիրներու մէջ փոխանորդ կրնայ կարգել:

Փոխանորդութիւնը երկու կերպ է, մին ընդհանուր և բացարձակ (ուսումնի վե մուքլագ) փոխանորդութիւն, միւսը մասնաւոր և չափաւոր (խուսուսի վե մուգայետ) փոխանորդութիւն:

Ընդհանուր և բացարձակը այն է որ, փոխանորդեալը իւր փոխանորդին իրաւունք կուտայ, ի դէպ ժամանակի իբրև ինք (աւլ) վերոյիշեալ ամբողջ իրաւասութիւնները ի գործ դնել, որուն պաշտօնը յարատև կը մնայ:

Միայն ընդհանուրը այնչէ որ, միայն ուէ մէկու մը վրայ դատ վարելու պէտք եղած և կամ ուրիշ ուէ մէկու մը կողմէ իր վրայ բողոք եղած պարագային՝ փոխանորդաբար դատավարութիւն կատարէ, որուն պաշտօնը դարձեալ յարատև կը մնայ:

Իսկ սահմանափակ և մասնաւոր փոխանորդութիւնն այն է որ՝ մասնաւոր գործի մը և կամ մասնաւոր դատի մը համար կը կարգուի, այդ դատը լինալէն յետոյ, փոխանորդի պաշտօնն ալ կը վերջանայ:

Մէկ մը երբ առանց պաշտօնական փոխանորդութեան հանգամանք կրելու, ուրիշի մը վերաբերեալ խնդրոյ մը միջամտէ և կարգադրէ, ի վերջոյ գործին տէրը զայդ հաւանի, անիկայ՝ անոր պաշտօնական փոխանորդ ճանցուած կ'ըլլայ, և ըրած գործողութիւնը վաւերական կը համարուի:

Փոխանորդութիւնը երբեմն պայմանաւոր (շարդա մուքլագ) կրնայ ըլլալ, ցորչափ այդ պայմանը չը կատարուի պաշտօնը շարունակելէ: Զոր օրինակ, « Այնինչ

մարդը եթէ իր տունը և կամ այնինչ բանը ծախէ կամ այնինչ մարդուն վրայ եթէ բողոքեմ և կամ թէ այնինչ մարդը եթէ վրաս բողոքէ, փոխանորդս ես, » ըսելով փոխանորդ կարգած պարագային, փոխանորդութիւնը մինչ այդ ժամանակ շարունակելի է:

Երբեմն ալ ժամանակաւոր (վագթա միւգաֆեհ) կըրնայ ըլլալ, զոր մինչ այն ատեն շարունակելի է. զոր օրինակ. այնինչ ժամանակին, այնինչ եղանակին մէջ ապրանք գնելու, ապրանք մը ծախելու, գործ մը ընելու համար կարգուած փոխանորդութիւնը՝ մինչ այն որոշեալ ժամանակ վաւերական է, անիկ վերջ ալ ո՛չ: Երբեմն ալ սահմանափակ (վեքայեթի մուգայեհտե) կըրնայ լինել. զոր օրինակ, այսինչ տեսակ և այս արժէքով ապրանք առնելու, բան մը այսչափ զրուշի գնելու և կամ ծախելու համար փոխանորդուած բանին որակն ու քանակը որոշելով կարգուած փոխանորդը՝ եթէ ըրած գործը այս պայմանին չը համապատասխանէ, գործը իր վրայ կը մնայ, արժէքը իր փոխանորդեալէն չի կրնար պահանջել:

Փոխանորդ մը երբ ըրած գործողութիւնը առանց փոխանորդեալի անունը յիշելու, իբրև իր գործը՝ իրեն վերագրէ (Գեմսիհե միւգաֆեհ), դիմացինի՝ այսինքն երրորդի հանդէպ պատասխանատուն ինքն է. երրորդը այս առթիւ՝ միայն փոխանորդին դէմ բողոքելու իրաւունք կ'ունենայ, իսկ փոխանորդ կարգողի դէմ չ'ունենար:

Իսկ եթէ փոխանորդը՝ գործողութիւնը (միւլեթի միւլե միւգաֆեհ) իւր փոխանորդեալի անուամբ ընէ, ինք հոն առաքեալ (րեսուլ) մը եղած կ'ըլլայ, զոր պատասխանատուութիւնը իր փոխանորդեալին կը պատկանի:

Մէկէ աւելի փոխանորդներ կրնան կարգուիլ, եթէ

գործի մը զիրենք կարգողը կանխաւ հաւաքարար և առանձին (միւնիքերտեմն վե միւնիքիւսյեմն) գործելու արտօնութիւն տուած է . անոնցմէ մին կրնայ անանձին գործել , իսկ եթէ ոչ՝ հաւաքարար պէտք է գործել :

Փոխանորդեալ մը եթէ իր փոխանորդին ի պահանջել հարկին՝ իրեն ուրիշ մը փոխանորդ կարգելու (ախրրք քեվրիյե) և կամ ուզածին պէս վարուելու (խքետիյիմ կիպի ե սք) արտօնած է , փոխանորդը ուրիշ մը իրեն փոխանորդ կրնայ կարգել , զոր այդ պարագային փոխանորդին փոխանորդը , բուն փոխանորդեալի փոխանորդը եղած կըլլայ , այնպէս որ եթէ առաջին փոխանորդը պաշտօնանկ ըլլայ , կամ մեռնի , միւս երկրորդի փոխանորդութիւնը վաւերական կը մնայ :

Անշափահաններու (դայր պալիդ , դայր րեշիտ) , խենթերու (մեճնուն) և այլ այս կերպ անձանց ոչ փոխանորդ կարգելը , և ոչ ալ փոխանորդ ըլլալը վաւերական չէ :

Փոխանորդին եթէ վարձք մը պայմանուած է , անոր համեմատ վարձք առնելու իրաւունք ունի . իսկ եթէ պայմանուած չէ և փոխանորդն ալ այդ տեսակ գործի միջոցաւ ապրողներէն է , ըստ արժանւոյն՝ վարձք մը պահանջելու իրաւունք ունի , ապա թէ ոչ՝ չունի :

Փոխանորդի և առաքեալի ձեռքը զանուած ապրանքը , իրենց քով իբրև աւանդ է (եմանք տիլր) , եթէ դիպուածաւ մը վնասուի , իրենք պատասխանատու չեն , բայց զանոնք փոխանորդ կարգողները երրորդին հանդէպ՝ փոխարէնը տուածելու պարտաւոր են :

Փոխանորդելիք բանին տեսակն ու քանակը , ձեւը , չափը , գինը , ժամանակը , լաւն ու գէշը և այլ պարագաներ և հանգամանքները ըստ պէտքին պէտք է յիշել , ապա թէ ոչ՝ « ինչ կուզես ան ըրէ՛ » ձեւով կարգուած

փոխանորդութիւնը անվաւեր է . եթէ փոխանորդը բան մը ըրած է իր վրայ կը մնայ :

Դատական փոխանորդը՝ երբ իր փոխանորդեալին (միւնիքքիլ) աննպաստ խոստովանութիւն մը (իգրար) ըրած է , այդ խոստովանութիւնը եթէ դատաւորի ներկայութեան տեղի ունեցած է վաւերական է , իսկ եթէ ո՛չ , վաւերական չէ :

Մինակ դատավարութեան համար կարգուած փոխանորդը , միայն դատ վարելու իրաւունք ունի , վճռեալ գումարը գանձելու և առնելու իրաւունք չունի :

Ինչպէս նաեւ մինակ գանձել և առնելու համար կարգուած փոխանորդը դատավարութեան մտնալու իրաւունք չունի :

Փոխանորդ կարգող մը (միւնիքքիլ)՝ իւր կարգած փոխանորդը կրնայ պաշտօնանկ ընել , ինչպէս նաև փոխանորդը կրնայ ինքնին հրաժարիլ , բայց եթէ փոխանորդութիւնը մէկու մը քով գրաւ դրուած բան մը առնել ծախելու , պահանջատիրոջ պարտքը վճարելու համար է , և կամ թէ ուրիշի մը հանդէպ վերաբերութիւն ունեցող տեսակէն է , ո՛չ փոխանորդը կրնայ հրաժարիլ , և ո՛չ ալ պաշտօնանկ կրնայ ըլլալ :

Հրաժարման լուրը որ ատեն որ փոխանորդեալին և կամ թէ փոխանորդին հասնի , այն ատենէն սկսեալ փոխանորդին պաշտօնը գաղարեալ կը նկատուի , սակայն անկէ առաջ եղած բոլոր գործողութիւնք վաւերական կը համարուին :

Փոխանորդուած գործը լմնալուն պէս , փոխանորդին պաշտօնն ալ լրացած կ'ըլլայ : Փոխանորդեալը եթէ մեռնի , փոխանորդի ինչպէս նաև եթէ փոխանորդին փոխանորդ մը կայ՝ անոր պաշտօնը ալ կը դադրի . բայց երբ փոխանորդութիւնը վերոյիշեալ եղանակներու

պէս մէկու մը հանդէպ պատասխանատուութիւն ունեցող տեսակէն է, այն ատեն չի դադրիր :

Փոխանորդեալին և փոխանորդին երկուքէն մին՝ եթէ խենթենայ փոխանորդութիւնը այլևս կը ջնջուի :

* * *

Ա Ռ Ա Ք Յ Ա Լ (Բէսուլ)

Առաքեալ՝ մէկու մը կողմէ՝ գործի մը և կամ յաբաբերութեան առթիւ, ուրիշ մէկու մը զրկուած մարդուն կ'ըսուի : Այս անձը թէև երկու կողմի գործի տէրերու մէջ իբրև միջնորդ մըն է, բայց երբեք և ո՛չ մէկին փոխանորդ չէ : Զոր օրինակ. մէկը՝ սեղանաւոր է և կամ խանութպան է մը՝ և կամ ուրիշ մէկէ մը ստակ, ապրանք և վերջապէս բան մը բերելու համար իւր մարդը (առաքեալ) անոր կը զրկէ, միևս կողմը զայն առաքողի (մխարխլ) յանձնարարութեան (սիվարիշ, քավսիյի) հրամանի (հմր) պատուոյն (իյրիպարբնա) վստահելով պահանջուած բանը անոր կը յանձնէ. առաքեալը հոս միայն միջնորդ մը եղած կ'ըլլայ, ոչ թէ փոխանորդ, ի վերջոյ զինք առաքողը եթէ անոր փոխարէն չի վճարէ, ապրանք զրկողը անոր արժէքը առաքեալէն չի կրնար պահանջել :

* * *

Հ Ր Ա Մ Ա Ն (Էմբ)

Հրամանը այն է որ, մէկը մէկու մը բան մը տալու համար յանձնարարութիւն կ'ընէ. զոր օրինակ. մարդ մը իր առ կառավարութիւն և կամ առ ուրիշ մը ունեցած պարտքը վճարելու համար մէկու մը հրաման կ'ընէ.

հրամայեալն ալ եթէ զայն ընդունելով վճարէ, ի վերջոյ հրամայողէն կրնայ պահանջել :

Մարդ մը իր ընտանեաց պարուստը հոգալու և կամ բան մը շինելու համար երբ մէկու մը հրաման կ'ընէ, հրամայեալն ալ զայն ընդունելով եթէ չափաւոր գումար մը ծախսէ, ի վերջոյ հրամայողէն կրնայ պահանջել, իսկ եթէ չափէն աւելի ծախսած է, աւելին չի կրնար պահանջել :

Եթէ մէկը՝ մէկու մը, «այսինչին փոխ ստակ տուր» ըսելով հրաման ընէ, բայց վերջէն «ես կուտամ» չըսէ, սուտով ի վերջոյ հրամայողէն չի կրնար պահանջել. վստիկի այս լոկ հրաման մըն է, ոչ թէ երաշխաւորութիւն :

Մէկը՝ իր պարտքը վճարելու համար, եթէ մէկու մը հրաման ընէ, և այդ հրամայեալն ալ խոստանայ տալ և ի վերջոյ չի տայ, միակ այս խոստման համար հրամայեալը վճարման չի կրնար բռնադատուիլ, վստիկի իբրև յանձնարարութիւն (հեվայի) և կամ իբրև երաշխաւորութիւն խոստացած չէ : Բայց եթէ հրամայողի հրամայեալի քով աւանդ մը կամ պահանջ մը կամ հաշիւ մը ու առնչութիւն մը կայ, այն պարագային հրամայեալը պարտաւոր է վճարելու :

Հրամայեալին քով (մեմուր ցեզուիստե) գտնուած ստակ, ապրանք, եթէ տակաւին հրամայուած տեղը յանձնուած չէ, հրամայողին ուրիշ պահանջատէրերը՝ զայս լսելով չեն կրնար դալ զայն գրաւել և իրենց վրայ բաշխել :

Հրամայեալին (մեմուր) ձեռքը գտնուած ստակ և ապրանք երբ տակաւին պահանջատիրոջ չի յանձնուած՝ հրամայողը մեռնի, այդ բաները՝ մեռնողին ժառարգորդաց պէտք է վերադարձնել :

Մէկը՝ իր մուրհակով կզած պարտք վճարելու և մուրհակին ետև գրելու կամ փոխարէն ընկալազիր առնելու պայմանաւ կրք մէկու մը հրաման ընէ, հրամայեալն ալ եթէ զայն վճարէ՝ առանց ետևը գրելու եւ ընկալազիր ստանալու, վերջոյ եթէ զրամ առնողը զայս ուրանայ, ինքն ալ հրամայողէն չի կրնար պահանջել:

Ս Ի Ն Տ Ի Ք

Գալով սնանկութեան փոխանորդութեան (սինտիք): Դատարանը՝ սնանկի մը սնանկութիւնը վճռելէն անմիջապէս յետոյ, գործին քննութեան և տնօրինութեան համար իր անդամներէն մէկը քննիչ (ժիւժ գամիսէր) և անոր տրամադրութեան տակ՝ գործի մեծութեան համեմատ փաստաբաններէն, և կամ թէ բողոքող պահանջատէրերէն և կամ զիւանատան գրագիրներէն և կամ յարմար մարդերէն 1—3 հսգի առժամանակեայ հաշուեյարդար փոխանորդներ (մուսվագգաթ սինտիքիէրի) կը կարգէ:

Առժամանակեայ սնտիքները, նոյն ժամոյն դատարանի արտօնութեամբ, իրաւունք ունին սնանկը բանտարկել, սենեակը (մաղազա) գոցել, բովանդակ տոմարները և թուղթերը գրաւել: Եթէ ուրիշ տեղ մասնաձեւեր ունին՝ անոնք ալ գոցել, անդամներու վրայ գտնուած շարժական և անշարժ կալուածները արգելման տակ (իւճգ) առնել:

Բանտարկեալ սնանկը՝ իրաւունք ունի անձին (նեճսիք) և եթէ ինքը անհետանալու ըլլայ, դատարանի որոշմամբ գումար մը տուժելու պայմանաւ, երաշխաւոր մը ներկայացնելով և իւր ի ձեռին գտնուած թուղթերը

և հաշուեկշիւը յանձնելով՝ բանտէն արձակուով խնդրել: Դատարանը զայս կրնայ ընդունիլ, իսկ եթէ սնանկը չի կարողանայ երաշխաւոր ներկայացնել և առժամանակեայ փոխանորդներն ալ զայս հաւատան, սինտիքները սնանկը իրենց ներկայութեան կանչելով իրենց հսկողութեան տակ, անոր հաշուեկշիւ (պիլանցօ) շինել կուտան, անկէ վերջ՝ կրնայ առանց երաշխաւորութեան և կամ միայն անձին երաշխաւոր մը առնուելով արձակուիլ:

Եթէ սնանկը հաշուեկշիւ հանելու զժկամակի, դատարանը անիկայ բաւական երկար ատեն կրնայ բանտարկել. եթէ ասոր դարձեալ հակառակի, այն պարագային սնտիքները իրենք հաշուեկշիւը հանելու կը պարտաւորին, իսկ եթէ տուժար չկայ, միայն հարցաքննութիւն մը (իսքիճվալցնամե) կը պատրաստեն:

Առժամանակեայ սնտիքները իրենց ի ձեռին ունեցած հաշուեկշիւին յենլով, պարտաւոր են լրագրաց միջոցաւ և զատ զատ հրաւիրազիրներով՝ ամբողջ պահանջատէրները մինչև տասնըհինգ օր վերջը, դատարան հրաւիրել, միասին ժողով ընելու, սնանկին վիճակի մասին խորհրդակցելու և առժամանակեայ փոխանորդները կամ վերահաստատելու և կամ զանոնք պաշտօնանկ ընելով ուրիշներ ընտրելու համար:

Լրագրաց այս հրատարակութենէն տասնըհինգ օր վերջ՝ դատարանին ներկայացող պահանջատէրերը, ժիւժ գոմիսարի և սնտիքներու հետ միասին ժողով մը կազմելով, սնանկի վիճակին և պատրաստուած հաշուեկշիւին վրայ խորհրդակցութիւն մը ընելէն, և եթէ դուրս մնացած պահանջատէրներ կան, զանոնք ալ հաշուեկշիւին մէջ անցընելէն զկնի, նորոգ հաշուեյարդար անալիքներու ընտրութեան գործին կը ձեռնարկեն:

Այս կէտի մէջ պահանջատէրերը ազատ են, ուզեն

գատարանի կարգած առժամանակեալ սինտիքները իրենց պաշտօնին կը վերահաստատեն (եսայիքի քանկիլ, վի էա իպգա), ուզեն զանոնք պաշտօնանկ ընելով, անոնց տեղ ուրիշներ կընտրեն. ժիւժ գումիսէրը բնաւ չի փոխուիր, նոյնը կը մնայ: Սինտիքութեան պաշտօնին պահանջատէրերէն և կամ անոնց փոխանորդներէն ալ կրնայ ընտրուիլ. ինչպէս նաև դուրսէն վըստահելի անձեր ալ կրնան ընտրուիլ:

Մտտիք ընտրուող անձինք՝ երբ փաստաբան և կամ այս տեսակ գործով զբաղողներ են, գործին համեմատ վարձք մը ստանալու իրաւունք ունին:

Պահանջատէրներէն ոմանք երբ սինտիքներու գործաւնութեանց մէջ զեղծում և կամ թերութիւն մը նշմարեն՝ դատարանին դիմելով անոնց պաշտօնանկութիւնը կրնան պահանջել: Մնանկին ամենամօտ բարեկամները այս պաշտօնին չեն կրնար ընտրուիլ:

Մնանկին սենեակը եթէ նախորդ առժամանակեայ սնտիքները գոցած չեն, ներկայ մնալուն սինտիքները (եսայիքի սնտիքիք) իսկոյն անոր սենեակը գոցելու, անանկը բանտարկելու և ամէն պէտք եղած տնօրինութիւնները ընելու պարտաւոր են. ինչպէս նաև պարտաւոր են՝ սնանկը և նորա գրագիրը, գործակալը և այլ պարագաները կանչել հարցաքննել, թէ սկիզբէն ի վեր ինչպիսի գործերով զբաղած են. որոնց հետ ընկերութիւն ըրած են. առաջին առթիւ ո՞րչափ դրամագլուխ ունեցած են. իրենց սնանկութեան շարժառիթն ի՞նչ է. ո՞ր ատենէն սկսեալ վճարման դժուարութիւններ զգացած են, ինչո՞ւ համար այս անկարողութեան պարագան դատարանին հաղորդած չեն. այս մօտ ժամանակներու մէջ իրենց վրայ բողոք կամ փրօթէստ մը եղած է թէ ո՞չ. եթէ եղած է՝ անկէ ի վեր ի՞նչ գնում ու վճարում-

ներ կատարած են. այժմ ընկեր ունի՞ն թէ ո՞չ. տարեկան ո՞րչափ շահած և ո՞րչափ ծախսած են. այժմ ո՞րչափ պարտք ունին. և պահանջնին ո՞րչափ է. պատրաստ ապրանք ունի՞ն թէ ո՞չ. ո՞ւր է. ի՞նչ ապրանք ու կալուածներ ունին. ընկերութեան մակդիրը ի՞նչ է. ընկերութիւնը ո՞ր տեսակին կը պատկանի. ընկերութեան գործատեղին (քիմարիքիէան) ո՞ւր է. տոււարներ ունի՞ն թէ ոչ և այլ պէտք եղած հարցաքննութիւնները ընել:

Մնանկը ասոնց պատասխանելու և ամէն պարագայի մէջ միշտ փոխանորդներուն ներկայանալու և պէտք եղած տեղեկութիւնները տալու ու ծառայութիւնները ընելու պարտաւոր է:

Ինչպէս որ վերը յիշեցինք, սնանկ մը սնանկանալէն զկնի, այլ ևս իր ապրանքներն ու կալուածները տիրապետելու, նոր պարտք ընելու և նոր վճարում ընելու և գանձում կատարելու իրաւասութեանէն կը զրկուի. մինչև իսկ ո և է խնդրոյ մը առթիւ դատ վարելու և իր վրայ բացուած դատին պատասխանելու, վկայութիւն տալու, այս կերպ գործեր ընելու իրաւասութիւններէ կը զրկուի, այս ամէն իրաւասութիւնները իր սինտիքներուն կանցնի: Անոնք այս իրաւասութիւններէ զատ՝ նաև այլ և այլ տեղերէ սնանկին հասցէին եկած նամակները՝ նամակատունէն առնելով բանալու, կարդալու, 1500 դրչէն պակաս վէճեր բացարձակապէս վճռելու և կարգադրելու, և այլ շատ մը իրաւասութիւններ ունին:

Մնանկին պատրաստ ապրանքները եթէ դիւրաւ վնասելի տեսակէն են՝ փոխանորդները կրնան զանոնք դատարանի արտօնութեամբ իսկոյն ծախել, արժէքը դատարանին սնտուկին մէջ պահել:

Վաճառական մը եթէ նախ քան զսնանկութիւն և

կամ յետ սնանկութեան մեռնի, յիշեալ պարտականութիւնք իրեն ժառանգորդներուն կ'անցնին :

Մնանկ մը եթէ մեռնի և կամ անյայտանայ, սինտիքներու պաշտօնը չի փոխուիր, այլ դարձեալ մինչև վերջ շարունակելի կը մնայ :

Եթէ սնանկի մը անմեղութիւնը ստուգուի, այսինքն սնանկութեան պատճառներուն արդարացուցիչ ըլլալը հաստատուի, սնանկը իրաւունք ունի իւր ապրանքէն ժամանակի մը համար իրեն ապրուստ պահանջել :

* * *

Ա.ՊՐԱՆԱՅ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

(Թահրիի Էմլալ)

Մնանկի մը մազազան գոցուելէն մինչև երեք օր վերջ՝ սինտիքները պարտաւոր են սնանկը իրենց ներկայութեանը կոչելով՝ անոր սենեակը բանալ և մէջը գտնուած ապրանքները գրել, սակայն սնանկի տան վերաբերեալ իրերը, ինչպէս նաև այլոց աւանդները դուրս պէտք է հանել :

Սինտիքները՝ ի պահանջեալ հարկին այդ ապրանայ հմուտ անձինք, իրենց օժանդակութեան կրնան առնել :

Սնանկը եթէ բացակայ է, այս գործողութիւնք իրեն բացակայութեան կրնայ կատարուիլ :

Սինտիքները մինչև 15 օր, սնանկի հարցաքննութեան արդիւնքը և իրենց գործառնութեանց տեղեկութիւնը տեղեկագրով մը դատարանին հաղորդելու պարտաւոր են :

* * *

ՄՆԱՆԿԻ ՊԱՐՏԻՔՆԵՐՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

(Թահրիզը Տիյուն)

Սնանկի մը պահանջատէրերը՝ (առնապը մաղլուպ) ուղեն սնանկութեան հրատարակութենէն սկսեալ իրենց ի ձեռին ունեցած պահանջի և հաշուոյ թուղթերը կը տանին դատարանին և կամ սինտիքներուն կը յանձնեն ու ընկալագիր կառնեն, իսկ եթէ չուղեն՝ կրնան սպասել որ, սինտիքները զիրենք պարտքի արձանագրութեան հրաւիրեն :

Մնայուն սինտիքները՝ պարտաւոր են լրագրաց միջոցաւ և զատ զատ ծանուցագիրներով, ընդհանուր պարտուց ստուգութեան (քանգիզի տիյուն) օրը յայտարարել եւ տեղւոյն հեռաւորութեան համեմատ՝ առնուազն մինչև 20 օր (եթէ պահանջատէրէն հեռու տեղեր գտնուողներ կան, այս ժամանակամիջոցը անոր համեմատ կ'երկարաձգուի), պահանջատէրերը դատարան հրաւիրել որ գան իրենց պահանջները արձանագրել տան : Թահրիզը տիյունի օրը, պահանջատէրերը՝ եթէ իրարու պահանջներու դէմ ունենան աւարկութիւն մը ունին զայն կ'ընեն և անկէ վերջ սնանկի վիճակի մասին խորհրդակցութիւն կը կատարեն : Պահանջատէրերը կրնան անձամբ ներկայանալ, և կամ թէ փոխանորդնին զրկել, եթէ իրենց պահանջի մասին պարտամուրհակ չունին, սակայն սնանկի ցուցուցած հաշուեկշիւին մէջ արդէն արձանագրուած է, այս պարագային մինակ հաշուեթուղթով ալ կրնան իրենց առնելիքի արձանագրութիւնը պահանջել :

Սինտիքները այս 20 օրուան ընթացքին մէջ՝ իրենց ներկայացուած պահանջաթուղթերը առանց դիտողու-

Թեան կ'ընդունին. իսկ վերջընթեք երեք օրերու մէջ և գլխաւորապէս 20 րդ օր, Ժիւժ գօմիսէրի նախագահու թեան տակ և ներկայացող պահանջատէրերու և կամ անոնց պաշտօնական փոխանորդներու հետ, և սնանկի ներկայութեան ժողով մը կը կազմէ՝ ուր նախ սնանկի վիճակի մասին իրենց կատարած քննութեան տեղեկագիրը կը կարդան և զայն վաւերացնել տալէն յետոյ, ապա ներկայացող պահանջատէրերու պահանջքի խընդրոյն կը սկսին. իւրաքանչիւրի պահանջքը զատ զատ օրակարգի կը դնեն և այս մասին միւս պահանջատէրերու կարծիքն ալ կը հարցնեն, եթէ ասոր դէմ ունէ գիտողութիւն մը չըլլայ, զայն իբրև ստոյգ պարտք կ'արձանագրեն. իսկ եթէ գիտողութիւն մը ըլլայ, Ժիւժ գօմիսէրը և սխտիքներն ալ բանաւոր գտնեն, զայն վիճելի (մարագայլ) կ'արձանագրեն, որով պահանջատիրոջ կ'ազդարարեն որ դատարան դիմէ՝ խնդիրը հոն հաստատէ և ապա զա իբրև ստոյգ պարտք արձանագրել տայ (պէտք է գիտնալ որ՝ մարագայլ արձանագրուած պահանջը գրեթէ չեղեալի պէս կը նկատուի). այս տեսակ դատերու բողոքները ընդհանրապէս սխտիքներու և սնանկի վրայ կը տրուի:

Վիճելի (մարագայլ) պահանջի տէրը՝ այս առթիւ դատարանի բողոքելով հանդերձ, միանգամայն մատայի (սնանկի մասին կարգուած սխտիք, և Ժիւժ գօմիսէր), գործառնութեանց առժամանակեայ դադարումն ալ կըրնայ պահանջել: Դատարանը բողոքողի խնդիրը նկատողութեան կ'առնէ՝ եթէ բանաւոր տեսնէ, մինչև դատի վախճանը մատայի գործառնութիւնը կը կասեցնէ, իսկ եթէ ոչ, մատան առանց սպասելու իր ընթացքը կը շարունակէ. դատը ստուգուելէն յետոյ պահանջատէրը նորէն կրնայ դալ մասնակցել:

Մենաշնորհեալ պահանջատէրերն ալ (իմփիյալլը այսօճագլլար) որք են, իրենց քով գրաւ գտնուած պահանջատէրերը, գրագիրները և այլ ծառայութիւն ընողները և սենեկի (մաղագա) վարձք պահանջողները՝ անոնք ալ պէտք է որ, քանգիգի տխյիսնի օրը սխտիքներուն ներկայանան եւ իրենց առնելիքը արձանագրել տան, միւս պահանջատէրերը՝ ասոնց մասին ալ կրնան գիտողութիւններ ընել, և քննութիւնը դատարանի ձգել:

Մնանկ մը՝ երբ պահանջատէրերու հետ գործը իրաւախօսութեամբ (ագոը բօնօրտաթօ վի եա սույնեմ) կարգադրելու միտում չը ցուցնէ և կամ ձգէ անյայտանայ, սխտիքները իրաւունք ունին լրագրաց և զատ զատ ազդերու միջոցաւ պահանջատէրերը քանգիգի տխյիսնի հրաւիրել, սնանկի պատրաստ, թէ՛ շարժական և թէ՛ անշարժ կալուածները ծախել, գոյացած ստակէն նախ սխտիքներու վարձքը, դատական ծախսերը և այլ մենաշնորհեալ (իմփիյալլը) առնելիքներ վճարել և ապա, մնացեալը պահանջատէրերու վրայ գումարի համեմատութեամբ բաշխել:

Թանգիգը տխյիսնի օրը, իր առնելիքը արձանագրել չը տուող պահանջատէրը, այլ ևս իրաւունք չունի զայն արձանագրել տալ, ինչպէս նաև բաշխման գործողութեան մասնակցել. բայց եթէ անիկա դատարանին դիմելով՝ իրեն չ'ներկայանալը՝ բանաւոր պատճառէ մը բլխած ըլլալը հաստատէ, դատարանը անոր ևս մասնակցելու որոշում կուտայ. սակայն անկէ առաջ կատարուած բախումներէ մաս պահանջելու իրաւունք չունի, այլ միայն վերջընթեք բաշխումներէ բաժին առնելու իրաւունք կ'ունենայ:

Թանգիգի տխյիսնի մէջ չարձանագրուող պահանջատէրերը մատայի ըրած գործառնութեանց և սնանկի ընելիք կարգադրութեանց մէջ բնա՛ւ ձայն չ'ունին:

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ (Ռոմֆորսաթո)

Ե Ի

ԻՐԱՒԱԿՈՒԹՅՈՒՆ (Սուլի)

ԵՒ ԻՐԵՆՅ ՍԵՂՐՈՒՆՔԸ

Բնութիւնը քանի որ ամէն ինչ է, և տիեզերքն ա՛լ անհուն է, բնականաբար անոնց պարունակութիւններու սեռը և տեսակը, որակը և քանակը, գոյնը և ձևը և այլքն ալ ամենատեսակ կ'ըլլան։ Որով ըսել է թէ մարդս անոր մէկ հունաւոր արարածն է։ Ինչ որ մեր խելքի, մտքի և երեակայութեան տակ կ'իյնայ տիեզերքի մէջ, ամէն բան կայ։ Մարդոց ֆիզիքականը կազմող խմորը թէև բնականաբար աւելի չարին հակամէտ է. բայց բնութիւնը մարդոց մէջ ջարի և բարիի գիտակցութիւն մը դրած է, և անոր մեքենան լարած է հաւատոյ, յուսոյ և սիրոյ զօրութեամբ, և թելադրած է զայն միշտ ձգտիլ դէպ ի ճշմարիտը, բարին և գեղեցիկը։ Ճշմարիտին խմորը անխառն է, սակայն մեզի բարի և գեղեցիկ երեւցածին խմորը խառն է նաև չարութեան խմորովը. որով ամէն մէկ բարիի և գեղեցիկին մէջ մէկ չարութիւն կայ, և ամէն մէկ չարութեան մէջ մէկ բարութիւն և գեղեցկութիւն։ Ղորօրինակ մէկը կը շահի միւսը կը կորսնցնէ. մին կը կորսնցնէ, միւսը կը գտնէ. մէկը ազնուութեամբ կը շահի, վերջէն կը չփանայ ու կը չարանայ, իսկ միւսը անազնուութեամբ կը շահի ու կ'ազնուանայ։ Ինչպէս նաև ըոյսերէն ոմանք՝ մէկու մը սնունդ, միւսին թոյն կը մատակարարեն, կենդանիներէն ոմանք մարդը կը բզկտեն, ոմանք սնունդ և ծառայութիւն կը մատակարարեն. տեղւոյ մը արեւ պէտք է՝ տեղի մը անձրև, քամին տեղի մը օգուտ

ունի տեղի մը յլաս։ Անա ասոնք ամէն մէկ բարութեան մէջ մէկ չարութիւն, և ամէն մէկ չարութեան մէջ մէկ բարութիւններ են։

Արդէն ամէն բան ծայրայեղութեան դագոթնակէտը հասնելուն ոյէս՝ չարը բարիին և բարին չարին՝ յեղաշրջուելու բնոյթը կը ստանայ. ինչպէս որ պտուղը չար է՝ երբ դեռ խակ է, բարի է՝ երբ հասունութեան հասնի։ Բարի է երբ հասուն է, չար է երբ փտտելու հասնի։ Ջուրը պզղ է և մարմին է, իսկ երբ ծայրայեղ եռացնենք, ալ ևս կ'անյայտանայ. մետաղները կարծր են, երբ չափազանց տաքցնենք կը հալին՝ կը մաշին. կրակը տաք է, երբ չափազանց հոլահրենք կը սկսի մաշլլ ու վնջուիլ. ջուրը տաք է՝ կրբ չափազանց պողեցնենք սառ կը կտրիւ Այս կերպով ամէն բան կեանքի սահման մը ունի. որոնք շրջան մը ունին որ կ'ապրին, անկէ յետոյ մաշելու և կորսուելու շրջանին կ'անցնին, զոր միջոցէ մը յետոյ առանցքը զայն իբրև ձեւափոխեալ երեւան կը բերէ, թէպէտև անիկա մեղի նոր կ'երեւի, բայց նա սկիզբէն ի վեր երկրէն բղխելու և երկրին դառնալու առանձքածև շրջանը կը կատարէ, որ ըսել է թէ ամէն բան գոյ է, և ամէն բան ի հոլովի է։

Մարդիկ որչափ որ ձգտին միջոցներ խորհիլ, չարին առաջքն առնել և կամ զայն սահմանափակել, սակայն մարդոց գիտակցութեան չափը հունաւոր ըլլալուն համար, չի զօրեր որ կարենան բարութեան խմորին մէջ գտնուած չարութեան ամենամանր հիւլէնները տարրալուծել և բաժնել. արդ մարդիկ որչափ աշխատին յաջողիլ ասոր, տակաւին ամէն մէկ բարութիւն իր մէջ նուազ կամ առաւել չարութիւն կը պարունակէ։ Անոր համար մարդիկ ապագայի գուշակութիւնը իրենց կա-

բողութենէն վեր դանելով՝ միայն իրենց նպատակը յոյսի օգապարիկին հաստատած, կը ձգտին հասնիլ զէպի յաջողութիւն: Բայց երբեմն պարագայի մըրիկը իրենց առջև այնպիսի անակնկալ ձախողութիւն մը կը հանէ, ուր իրենց յոյսը կը ջախջախի և նպատակը կը տապալի:

Ահա ճիշդ այսպէս, առևտրական ըլլալու պատրաստուող ուէ անհատ մը, նախ գործի մը մասնակի՝ հըմտութիւն կը գաղափարէ, յետոյ ապագայ յաջողութեան յոյսին յենած, մասնաւոր դրամագլուխ մը ընձեռնելով հրապարակ կ'ելլայ գործելու, շահելու և յառաջդիմելու: Այս կուռանին վրայ արդարև ոմանք յուսացածէն աւելի կը յաջողին, և կ'իրագործուի իրենց նպատակը. իսկ ոմանք ալ ընդհակառակը կամ սաղմնական վիճակի մէջ և կամ քիչ մը փողփողելէն ետքը՝ կը փճանան կը կորսուին: Այս կորուստին վրայ եթէ լուրջ և ողջամիտ հայեացք մը նետենք, կրք տեսնենք թէ այդ մարդը ուրիշներ խաբելու համար չարամիտ միջոցներ նիւթած չէ, այլ պարագայի բերմամբ և կամ սխալի մը հետեւանքով զայն կորսնցուցած է, հետեւապէս պէտք չէ մեղաւոր համարենք զայն, վասնզի պարագան իր չարն ունի. ապագան Աստուծոյ միայն գիտելի է, եւ մարդը անսխալ չէ. մարդս քանի որ սպրեւելու եւ ապրեցնելու պէտք ունի, միթէ արդարութիւն է մէկ սխալին համար զայն ցվերջ անօթութեան դատապարտել և անոր նիւթականն ու բարոյականը մեռցնել. ո՛չ, յանցանքը իր ներուճն ալ ունի:

Ասոր համար օրէնսդիրները անանկութիւնը երեք տեսակի դասած են. Ա. Արդարացի անանկ (հագիգի միւֆիլիս), այսինքն մարդուս կամքէն անկախ պատճառէ մը բղխած անանկութիւն. որն որ անանկը չը դա-

տապարտեր պատժոյ, և նոյն իսկ իրաւունք կուտայ անոր, իր ապրանքէն միջոցուան մը համար տպրուստ պահանջել պահանջատէրերէն. Բ. Թերութեամբ անանկ (քազսիլաքը միւֆիլիս), այս անանկը ոչ թէ պարագայի բերմամբ՝ այլ երբեմնակի սխալմանց և աւելի ստէպ անհաշիւ ծախուց և անհաշիւ ընթացքի մը արդիւնք եղած է. որուն պատասխանատուութիւնը բաւական ծանր է, և ներողութիւնը պահանջատէրերու կամքէն կախում ունի. Գ. Խարդախ անանկ (հիլիլի միւֆիլիս), այս անանկը ասկէ անկէ ստակը շորթելու նպատակով խաբու սիկ միջոցներ ի գործ դնելով, խարդախ անանկութիւն մը կը պատրաստէ. այս կերպ անանկութիւն մը՝ առ նուազն Յ տարիէն աւելի բանտարկութիւն կը կրէ, աւոր ներողութիւն երբեք կարելի չէ: Հետեւաբար անանկ մը՝ երբ արդարացի և կամ թերութեամբ անանկացած է, իրաւունք ունի իր պահանջատէրերէն ներողութիւն խընդրել և համաձայնութեամբ և իրաւախոհութեամբ (բոնօրութաթօ իլի, սուլիէն) կարգադրելու առաջարկ ընել, անոնք ալ պարտաւոր են յանուն մարդասիրութեան և ներողամտութեան՝ անոր վիճակին կարեկցել և վերստին զայն վերականգնեցնելու աջակցիլ:

* * *

ԻՐԱՎԱԽՈՒՆՈՒԹԻՒՆ (Սալի)

Իրաւախոհութիւնը երեք կերպ է:

Ա. — Խոստովանութեամբ իրաւախոհութիւն (իգրարը սուլի), այսինքն խնդրոյ գոյութիւնը ճանչնալով հանգերձ իրաւախոհութիւն պահանջել, զոր օրինակ մէկը՝ մէկէ մը ապրանք կամ գումար մը կը պահանջէ,

այն ալ զայս խոստովանելով հանդերձ՝ իրաւախոհ ըլլալ կ'առաջարկէ, այս մասին՝ համաձայնութիւն մը չը գոյացած պարագային, վերջէն պահանջատէրը հակառակորդի խոստովանութեան յենլով՝ կրնայ զայն դատարան կոչել և զայս հաստատելով, ամբողջ առնելիքը անկէ պահանջել :

Բ. — Ուրացմամբ իրաւախոհութիւն (ինքեարի ստւիճ). այսինքն խնդրոյ էութիւնը ուրանալով հանդերձ՝ իրաւախոհութիւն պահանջել, զոր օրինակ. մէկը՝ մէկու մը հետ կնճռոտ պահանջ մը կամ խնդիր մը կ'ունենայ, և իրաւախոհութիւն մը կ'առաջարկէ, եթէ այս իրաւախոհութիւնը չը հաստ ստուի, այն առաջարկութիւնը՝ խոստովանութիւն չի կրնար համարուիլ, պահանջողը զայս իբրև փաստ բռնելով չի կրնար պահանջի ստուգութեան վրայ պնդել :

Գ. — Լուծեամբ իրաւախոհութիւն (սիւրիւրի ստւիճ), այսինքն խնդրոյ էութեան մասին՝ առանց այո՛ կամ ո՛չ պատասխանելու, իրաւախոհութիւն պահանջել, զոր օրինակ. մէկը՝ ո և է խնդրոյ մը առթիւ իրեն վիճակած երդումէն ազատուելու համար՝ փոխարէն բան մը տալով իրաւախոհ ըլլալ կ'առաջարկէ, զոր երբեք խոստովանութիւն չի նշանակեր :

* * *

ԱՆՊԱՐՏԱՅԻՆՈՒՄ (Իպրա)

Անպարտացում (իպրա)՝ այն է որ, մէկը մէկու մը քով ունեցած պահանջը կամ ամբողջովին և կամ մասամբ առնելով և կամ ամբողջովին պարտապանին նուիրելով, զայն անպարտ կը կացուցանէ :

Անպարտացումը (իպրա) երկու կերպ է. Ա. Ընդհ.

անպարտացում (իպրայի աամ) . Բ. Մասնակի անպարտացում (իպրայի խաս) :

Ա. — Ընդհ. անպարտացումը՝ (իպրայի աամ) այն է որ, մէկը՝ մէկու մը հետ ունեցած ամբողջ գործառնութեանց, այսինքն մինչ անպարտագրի թուականը տեղի ունեցած բովանդակ պահանջի և հաշուական խնդիրներու մասին, անպարտ կը կացուցանէ, որմէ վերջ այլևս երբեք բան մը պահանջելու իրաւունք չ'ունենար :

Բ. — Մասնակի անպարտացումը (իպրայի խաս) . այն է որ, մէկը՝ մէկու մը հետ ունեցած զանազան խնդիրներէն մասնառոնաբար մէկ մասին համար միայն կ'անպարտացնէ, միւսները դարձեալ կրնայ պահանջել : Իրաւախոհ եղողները՝ պէտք է խելահաս և չափահաս ըլլան, ապա թէ ոչ՝ վաւերական չ'ըլլար :

Անչափահաս որբի մը հայրը (վիլի) և խնամակալը (վասիլ), տղային վերաբերեալ ո և է գործի մը մէջ՝ իրաւախոհ կրնան ըլլալ. բայց պայմանաւ որ՝ տղային նպաստաւոր ըլլայ, այսինքն այդ իրաւունքը կորսուելու վտանգին ենթարկուիլը հաւանական ըլլալով, զայն փրկելու համար իրաւախոհ ըլլալը աւելի խոհեմութիւն եղած ըլլայ :

Դատական գործի մը առթիւ կարգուած փոխանորդին՝ եթէ իրաւախոհ ըլլալու արտօնութիւն տրուած չէ, անիկա չի կրնար հակառակորդին հետ իրաւախոհ ըլլալ :

Փոխանորդ մը՝ եթէ իրաւախոհութեան փոխարէն վճարելիք գումարը կամ թէ ապրանքը, իր կողմէ վճարելու պայմանաւ (քէնտիցէ միւզաֆէն) իրաւախոհ եղած է, այդ պարագային, ինքը այդ գործին երաշխաւոր եղած կ'ըլլայ ու տուժելու պարտաւոր կ'ըլլայ :

Իսկ եթէ փոխանորդեալի կողմէ (միւլիքքիլիցէ միւ-

զանձեմ) իրաւախոհ եղած է, փոխարէնի վճարումը իր փոխանորդեալին կը պատկանի :

Երկու անձի մէջ եղած վէճի և դատի մը առթիւ դուրսէն մէկը՝ որ գործին հետ երբեք առնչութիւն չունի, երբ ինքնաբերաբար (պիլա հմր) դայ միջնորդէ և պահանջատիրոջ հետ իրաւախոհ ըլլալով, փոխարէնն ալ վճարէ, իրաւախոհութիւնը վաւերական կ'ըլլայ . բայց միջնորդողը իր միջնորդած անձէն (այսինքն որու համար որ միջնորդած և վճարած է), բան մը պահանջելու իրաւունք չունի, վասնզի զայն՝ առանց ո և է հրամանի և պարտաւորութեան՝ իր կողմէն ինքնայօժար նուէր ըրած է (թեպէրբաւ իքմիդ), եթէ միջնորդողը տակաւին փոխարէնը վճարած չէ, վաւերական չէ, եթէ երկու կողմն ալ ուզեն կրնան դրժել :

Իրաւախոհութեան փոխան տրուած բանը, տուողի բուն ապրանքը պէտք է ըլլայ . ուրիշի մը եղած պարագային իրաւախոհութիւնը կը ջնջուի, և այդ ապրանքը՝ եթէ պատրաստ է, կրնայ ետ կոչուիլ, եթէ վնասուած է՝ արժէքը կրնայ պահանջուիլ :

Իրաւախոհութիւնը հաստատուելէն վերջ, երկու կողմէն և ոչ մէկը չի կրնար զայն դրժել, ինչպէս նաև իրենց մահուանէն յետոյ՝ իրենց ժառանգորդներն ալ չեն կրնար զայն յետս կոչել :

Իրաւախոհութիւնը՝ երբ իրարու ապրանք մը փոխանակելով (մուսավեգեթեմ) եղած է, այն ատեն երկուստեք եթէ հաւանին՝ կրնան զայն ջնջել, եւ իրարու տուածները ետ կոչել :

Մէկը՝ եթէ մէկու մը, « Այնինչին հետ երբեք դատ մը, իրաւունք մը չունիմ, կամ ունեցած իրաւունքէս և դատէս ձեւնթափ եղայ, կամ զայն ամբողջապէս առի, զանիկա անպարտ կացուցի . » ըսէ, զայն ան-

պարտ կացուցած կ'ըլլայ, զոր այլևս այդ մասին անկէ երբեք բան մը պահանջելու իրաւունք չ'ունենար . մինչև իսկ՝ եթէ ո և է բանի մը մէջ երաշխաւորութեամբ պահանջ մը ունենայ, այս առթիւ՝ երաշխաւորէն ալ բան մը չի կրնար պահանջել : Բայց անպարտացումի թուականէն վերջ տեղի ունեցած առնելիքները՝ կրնայ պահանջել :

Անպարտացումին մէջ անպարտացեալին անպատճառ հաւանիլը անհրաժեշտ պայման չէ՝ բացակայութիւն ա'լ կրնայ ըլլալ բայց, ցորչափ մերժած չէ՝ վաւերական է :

Մէկը՝ հանգուցեալի մը քով ունեցած իր առնելիքը, կրնայ հանգուցեալին նուիրելով զայն անպարտ ընել :

Հոգեւարքի մէջ եղող հիւանդ մը, եթէ իր ժառանգորդներէն մէկը՝ իր պարտքէն անպարտ ընէ՝ վաւերական չէ, իսկ նոյն վիճակին մէջ՝ եթէ օտար մը անպարտացնէ, վաւերական է :

* * *
Ք Օ Ն Ք Օ Ր Տ Ա Ք Օ

Պալով Քօնքօրտաթոյի օրինաց :
Մնանիի և պահանջատէրերու մէջ եղած կարգադրութեանց քօնքօրտաթօ կ'ըսուի :

Պահանջատէրերու հետ համաձայնելով կարգադրելու գործը, անանկի կամքէն կախում ունի :

Մնանկը՝ եթէ գործը քօնքօրտաթոյով կարգադրելու դիտաւորութիւն յայտնէ, սինտիքները օր մը կ'որոշեն, լրագրաց միջոցաւ զայն հրատարակելով՝ քանգիգ տիւիլնի օրը ներկայացող պահանջատէրերը, դատարան՝ ժողովի կը հրաւիրեն :

Որոշեալ օրին ներկայացող պահանջատէրերը, ժիւժ գօմիսէրի նախագահութեան ներքեւ, և սնանկի ներկայութեան, սինտիքներու հետ միասին ժողով կը կազմեն: Հոն սինտիքները սնանկի գործոց ընթացքի և ներկայ վիճակի, սնանկութեան շարժառիթի և տեսակի, պարտաստ պարանք և կալուածի, պարտ ու պահանջի մասին, իրենց կատարած քննութեանց արդիւնքը տեղեկագրով մը ժողովին կը հաղորդեն. սնանկին հարիւրին քանի՛ տալու կարողութիւն ունենալը կը պարզեն, և անկէ վերջ խորհրդակցութեան կը սկսին:

Մնանկը՝ կրնայ իր կրած աղէտները և վնասները մէջ բերելով, յառաջագրուած կարողութեան դէմ առաքկութիւններ ընել, ու անոր թեթեւացումը և վճարածամին ալ երկարած գումը խնդրել:

Պահանջատէրերը ուզեն, սնանկի խնդրանքը կ'ընդունին, չուզեն կը մերժեն, ինչպէս նաեւ իր թերութիւնները (քագսիրաք): Ժողովին մէջ եթէ ոմանք կարգադրութեան հաւանին ու ոմանք չը հաւանին, հաւանող կողմը անպատճառ պէտք է անձի և գումարի մեծամասնութիւն մը կազմէ, որպէս զի ընդունելի ըլլայ: Անձի և գումարի մեծամասնութիւն ըսելով պէտք է հասկնալ որ, ներկայ եղողներու չորսէն երեք անձինք, որոնք արձանագրուած (քահգիզ ախլիցի) պարտքերու գումարի չորսէն երեք բաժին կազմեն: Զորօրինակ, սնանկի մը քահգիզի տիւլիւնին օրը, վեց հոգի ներկայանալով ամբողջ 1000 լիրա պարտք արձանագրուեցաւ. քոնքորտաքոյի օրը այդ վեց հոգիէն, չորսը միայն ներկայացան, այս չորսէն մէկը քոնքորտաքոյի չհամակերպեցաւ, թէեւ ասդին զայն ընդունող երեք հոգին անձի մեծամասնութիւնը կը կազմեն, բայց եթէ իրենց առնելիքի գումարը, ամբողջ 1000 լիրա պարտ-

քի $\frac{3}{4}$ բաժինը կազմէ, որ ըսել է 750 լիրա ըլլայ. այն ատեն քոնքորտաքոյ կրնայ կազմուիլ, ապա թէ ոչ՝ առանց անձի՛ գումարի, եւ առանց գումարի՛ անձի մեծամասնութիւնը անօգուտ է: Վերջապէս քոնքորտաքոյի հաւանութիւն ցուցնողները թէ՛ անձի կողմէ և թէ՛ գումարի տէսակէտով մեծամասնութիւն մը կազմած պէտք է ըլլան:

Մենաշնորհեալ առնելիքի տէրերը (իմքիյալլը ալաճագլըյար), ինչպէս նաեւ առնելիքի տիրոջ կողմանէ՝ փոխանորդութիւն չը կրող սինտիք մը, այս ժողովին մէջ ձայն չունին, բայց եթէ մենաշնորհեալ առնելիքի տէրերը իրենց մենաշնորհութեան իրաւունքը ձգեն, այն ատեն ձայն կ'ունենան:

Պահանջատէրերը՝ թէ՛ ըլլայ միաձայնութեամբ (միւքքիֆիգեհ), թէ՛ ըլլայ մեծամասնութեամբ (եքքիքիքեհ), սնանկին հետ համաձայնութիւն մը գոյացուցած պարագային (ազտը քոնքորտաքոյ), պայմանագիր մը կը խըմբագրուի, ներկայ եղող պահանջատէրերը և կամ իրենց փոխանորդները, սնանկը, ժիւժ գօմիսէրը և սինտիքները զայն կը ոտորագրեն. որով պահանջատէրերը՝ իրենց համաձայնութեամբ ընդունած մասէն զատ մնացած ամբողջ իրաւունքն ու պահանջները, ներկայ ապրանք և կալուածները, և սնանկին այլոց քով ունեցած պահանջները ամբողջովին սնանկին կը ձգեն ու կը նստիւրեն (քեքք վի հեպի, վի իպրա իտերիք). իրեն թերութիւնն (քագսիրաք) ալ կը ներեն: Մնանկն ալ անով փոխագարձաբար կը խոստանայ իր ստանձնած պարտքը (համաձայնած գումարը), որոշեալ ժամանակին վճարել, որուն իպրախագա կ'ըսուի:

Պահանջատէրերը եթէ ուզեն, սնանկէն՝ նոր պարտքին դիմաց երաշխաւոր մը կրնան պահանջել:

Քօնքօրտաթոյի մէջ՝ որոշուած քանակէն աւելի, դուրսէն պահանջատիրոջ և մնանկի մէջ գաղտնի կարգադրութիւն մը ընելը բացարձակապէս անյնբերելի է. ով որ համարձակի զայն ընել և կամ միջնորդէ ընելու իրենց ըրած գործողութիւնը անվաւեր ըլլալով հանդերձ, բոլորն ալ ծանր պատժոյ և երկար բանտարկութեան կ'ենթարկուին :

Մնանկի մը խարդախորթիւնը երեւան ելած պարագային, ո'չ մնանկը և ո'չ ալ պահանջատէրերը չեն կրնար քօնքօրտաթօ ընել : Պէտք է սպասեն, որ Պատժական դատարանէն խնդրոյ էութեան մասին որոշուած մը տրուի. այս դատարանը եթէ անպարտութեան վճիռ տայ, այն ատեն քօնքօրտաթօ կրնայ ըլլալ, իսկ եթէ պատիժի վճիռ տրուի այն ատեն քօնքօրտաթօ չի կրնար կնքուիլ :

Պահանջատէրերէն մէկը՝ եթէ մնանկին խարդախութիւն և կամ առաջարկուած գումարէն աւելի տալու կարողութիւն և կամ ապրանք փախցուցած ըլլալը և այլ նմանօրինակ առարկութիւններ մէջ բերելով, քօնքօրտաթոյի դէմ բողոքել ուղէ, պարտաւոր է քօնքօրտաթոյի ստորագրուած օրէն մինչև ութ օր, նոյն դատարանին դիմել և բողոքել :

Դատարանը՝ յետ նկատողութեան, եթէ անոր բողոքը բանաւոր գտնայ, կազմուած համաձայնութիւնը (քօնքօրտաթօ) կը ջնջէ, և խնդիրը իր նախկին վիճակին կը վերածէ, իսկ եթէ բանաւոր չը գտնայ՝ քօնքօրտաթօն կը վաւերացնէ :

Այս կերպ դատերու մէջ, դատարանի կողմէ ընդհ. դատախազն (միւտայի ումուսի) ալ կը հրաւիրուի, երկուստեք թերուդէմ առարկութիւնները լմնալէն վերջը, դատարանը այս մասին ընդհ. դատախազի դիտո-

ղութիւնն ալ կը հարցնէ, բայց դատարանը իր կամքին մէջ ազատ է, պարտաւոր չէ անպատճառ ընդհանուր դատախազի դիտողութեան հետեւելու :

Դատարանը՝ եթէ բողոքողի փաստերը բանաւոր գտնէ, յայնժամ գործին խարդախ մնանկի (հիյեի իծալաս) գոյն տալով, խնդիրը ընդհանուր դատախազին կը յանձնէ, զոր ան ա'լ առնելով Պատժական ատենին կը տանի. հոն մնանկը և իր մեղսակիցները էն նուազ 3 տարի բանտարկութիւն կը կրեն :

Իսկ եթէ դատարանը՝ տեղի ունեցած բողոքը ո'չ-բանաւոր գտնէ և կամ սոյն 8 օրուան ընթացքին մէջ ո' և է կողմէ մը բողոքողներ չը գտնուին, յայնժամ քօնքօրտաթոյի պայմանը կը վաւերացնէ (քաստիզ Կոտր). ըստ պայմանին մնանկին սենեակը կը բանայ, իրեն ապրանքները, թուղթերը, տոմարները իրեն կը յանձնէ, եթէ մնանկին ապրանքի ու կալուածներու վրայ արգելում (հաճ) դրուած կայ, անիկա կը վերցնէ. զոր յետ այնորիկ մնանկը իր նախկին վիճակը վերստանալով իր գործը կրնայ շարունակել, իր կալուածները տիրապետել, իր պահանջները գանձել և ի հարկին դատ վարել :

Քօնքօրտաթոյի վաւերացմամբ՝ ժիւժ գոմիսէրի ինչպէս նաև մնախիքներու պաշտօնը կը վերջանայ, ասոնք՝ ըստ վերոյիշեալ յօդուածին, մնանկին կ'անցնին :

Մնանկի պարտքերու արձանագրութեան (քանգիզի տիւյիւն) չի ներկայացող բոլոր դուրսի պահանջատէրերը, կազմուած քօնքօրտաթոյի պայմանին հպատակելու պարտաւոր են, անով հարկերին քանի տալ որ որոշուած է, նոյն համեմատութեամբ իրենք ալ պահանջելու իրաւունք կ'ունենան, անկէ աւելի բան մը պահանջելու իրաւունք չունին. զոր օրինակ. ենթադրենք թէ թո՛ւէս մինչ մէկ տարի վերջ, հարկերին հինգ

($\frac{0}{10}$ ին 5) տալու որոշուած է, իրենք ալ հարիւրին հինգէն աւելի պահանջելու իրաւունք չունին:

Յիշատակութեան արժանի է նաև սա կէտը թէ, սնանկ մը՝ օրինական ծախս (մասա խարճը) եղող արձանագրուած գումարին հարիւրին 2 դրշ. և իւրաքանչիւր որոշման (գարար) 50 դրուշ և սնտիքներու վարձքը (այս վարձքի գումարին մասին, եթէ իրենք իրենց մէջ չի համաձայնին դատարանը ինք կ'որոշէ) և այլ ծախսեր մինչև որ չի վճարէ դատարանը քօնքօրտաթօն չի վաւերացներ (քաստիք իրմեզ):

* * *

ՔՕՆՔՕՐՏԱԹՅՈՒ ՋՆՋՈՒՄԸ

(Քօնքօրտաթօնըն ճէսխ ու իլգասը)

Քօնքօրտաթօն վաւերանալէն և վրան բաւական ժամանակ անցնելէն վերջն ալ կրնայ ջնջուիլ, պայմանաւ որ սնանկին խարդախութիւնը (հիլի) երեւան գայ: Ինչպէս նաև սնանկը՝ օրին եթէ իր ստանձնած պարտականութիւնները և վճարումները չը կատարէ, այն պարագային պահանջատէրերը բողոքելով անոր քօնքօրտաթոյի ջնջում և վերստին սնանկութիւնը կրնան պահանջել:

Դատարանը եթէ սոյն բողոքը բանաւոր գտնէ, քօնքօրտաթօն կը ջնջէ, խնդիրը իր նախկին վիճակին կը վերածէ, նորոգ ժիւժ գումիսէր, սնտիքներ կը կարգէ, սնանկը կը բանտարկէ, ապրանքները արգելման տակ (հաճգ) կ'առնէ, սնտիքներ փոխել և կամ վերահաստատել կուտայ, եթէ դուրս մնացած ուրիշ առնելիքի տէրեր կան, նորէն քանգիզը տիւիւնի կը հրա-

ւիրէ, եթէ կանխաւ արձանագրուած պարտքերու դէմ ո և է առաքիկութիւն մը կայ, զանոնք վերստին կը ըստուգէ և կ'արձանագրէ, միով բանիւ իբրև նոր սնանկութիւն ամէն օրինական գործողութիւնները կը կատարէ:

Այս պարագային պահանջատէրերը իրենց նախկին վիճակը վերստանալով, իրենց ամբողջ առնելիքը պահանջելու իրաւունք կ'ունենան:

Քօնքօրտաթոյի գումարին եթէ երաշխաւոր կայ, այս քօնքօրտաթօն եթէ խարդախութեան (հիլի) և խարէութեան (դապն) և այս կերպ նենգութեանց առթիւ ջնջուած է, երաշխաւորը այլևս պատասխանատու թենէ կ'ազատուի. իսկ եթէ խոստացած դրամը չը վճարուելուն առթիւ ջնջուած է, երաշխաւորը դարձեալ պատասխանատու կը մնայ: Ինչպէս նաև եթէ քօնքօրտաթոյի ջնջումը խարդախութեան, խարէութեան և ուրիշ այս կերպ նենգութեանց պատճառէ մը ծագած է, այլևս վերստին քօնքօրտաթօ չի կրնար ըլլալ. սնանկը իր օրինական պատիժը կրելու կը դատապարտուի, իսկ եթէ խոստումը չը կատարուելուն պատճառէն ծնած է, վերստին քօնքօրտաթօ կրնայ ըլլալ:

* * *

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԻՆԵԻՕՆ

(Երրիւեազ վէ եա իւնիօն)

Մնանկ մը եթէ պահանջատէրերու հետ քօնքօրտաթոյով կարգադրելու միտում չը ցուցնէ, և կամ թէ միտում ցուցնէ բայց պահանջատէրերու մեծագոյն մասին հաւանութեան չարժանանայ, այն ժամանակ ժիւժ գումիւ-

սէրը և սինտիքները թէ՛ մենաշնորհեալ (իմքիյազը) և թէ՛ պարզ առնելիքի տէրերը ինխատ կոչելով խորհրդակցութիւն մը կ'ընեն. եթէ պահանջատէրերու մեծագոյն մասը հաւանի՝ միաբանութեան (իւնիօն) որոշում կուտան, որով պահանջատէրերը իրենց նախկին վիճակը վերստանալով, իրենց առնելիքը ամբողջապէս պահանջելու իրաւունք կունենան. ուղեն սնտիքները իրենց պաշտօնին կը վերահաստատեն, ուղեն զանոնք պաշտօնանկ ընելով անոնց տեղ ուրիշներ կը կարգեն. անանկին գործոց ուղղութիւնը և տնօրէնութիւնը անոնց կը յանձնեն, անոնք ալ ինչ որ դանձին, ինչ որ ծախսն և շահին գոյացած ստակը պահանջատէրերու վրայ գումարի համեմատութեամբ կը բաժնեն : Անկէ վերջ այլ ևս քօնքօրտաթօ չի կըրնար ըլլալ : Այս իւնիօնի որոշումը, որոշուած օրէն մինչև մէկ ամիս վերջ միայն գործադրելի է :

Մնանկը և կամ իր պաշտպանները՝ եթէ դասարանի մասայի ծախսերը (սնտիքներու վարձք, դատական ծախսեր և այլք) վճարեն, միաբանութեան այս որոշումը կրնան յեղաշրջել և վերստին քօնքօրտաթօ ընել :

Մնանկը՝ եթէ թշուառ և կարեկցութեան արժանի վիճակ մը ունի, իր ստացուածքէն մասնաւոր բան մը իրեն ապրուստ կրնայ պահանջել :

Մնանկները՝ եթէ քանի մը անդամներէ բաղկացած ընկերութիւն մըն են, պահանջատէրերու մեծամասնութիւնը վասն բարեկամութեան կրնան անոնցմէ մէկ երկուքը, և իրենց վիճակած պատրաստ ապրանքաց բաժինը միւսներէ զատել դուրս հանել, և անոնց հետ համաձայնութիւն գոյացնելով քօնքօրտաթօ ընել, իսկ միւս ընկերներու մասին իւնիօնի ընթացքը բռնել : Միւս ընկերին հետ իրենց ըրած քօնքօրտաթոյէն մնացած մասը պահանջել . այսինքն եթէ մէկ կամ երկու ընկերներու

հետ հարիւրին 10 ով քօնքօրտաթօ ըրած են, մնացեալ 90 ը միւս ընկերներէն կրնան պահանջել :

Քօնքօրտաթօ ընելով զատուող ընկերը, այլ ևս միւս բովանդակ գործառնութեանց պատասխանատուութենէ զերծ կ'ըլլայ :

Պահանջատէրերը՝ տարին գէթ մէկ անգամ հաւաքուելու, փոխանորդներէն հաշիւ պահանջելու, իրաց վիճակին վրայ խորհրդակցելով, անանկին անմեղադիր (մաագոսր) ըլլալ չըլլալու որոշումը տալու պարտաւոր են :

Սինտիքները, եթէ իրենց գծուած սահմանէն դուրս, ուրիշ շահադիտական գործառնութիւններ ալ ըրած են, գոյացած շահը և վնասը պահանջատէրերուն կը պատկանի :

Այս սինտիքները՝ նախկին սինտիքներու բովանդակ իրաւասութիւնը վայելելով, կրնան անանկի ամբողջ գործերը վարել, կալուածն ու ապրանքները ծախել և միով բանիւ պէտք եղած ամէն տնօրինութիւններ ընել :

Իւնիօն եղած գործը լմնալու չպէս, սինտիքներու պաշտօնը ևս կ'աւարտի, անոնք ալ պարտաւոր են իրենց վերջին հաշուեկշիռը ներկայացնել, և անանկի անմեղադրութեան (մաագոսրիք) մասին, իրենց կարծիքը յայտնել : Եթէ կանխաւ իրենց վարձքի քանակը սակարկուած է անոր համեմատ, իսկ եթէ չէ՝ ըստ արժանւոյն վարձք ստանալու իրաւունք ունին, որով գործը այլևս բոլորովին մէջտեղէն կը վերնայ :

Մնանկի մը՝ անմեղադիր ըլլալ չըլլալու վճուական որոշումը դատարանին կամքէն կախում ունի, միայն թէ ժիւժ գումիսէրը իրաց վիճակը և պահանջատէրերու կարծիքը հաւաքելով դատարանին կը հաղորդէ, դատարանն ալ ըստ այնմ իր որոշումը կուտայ :

Դատարանը եթէ սնանկի անմեղադրութեան (մատա-
գուրիէք) որոշումը տայ, սնանկը այլ ևս ամէն կերպ
յետապնդումներէ և պատժական պատասխանատու-
թիւններէ կ'ազատի, պահանջատէրերը յետ այնորիկ
միայն իրենց առնելիքը պահանջելու իրաւունք կ'ու-
նենան :

Իսկ եթէ մեղադրութեան (ատեմ մատագուրիէք)
որոշում տայ, սնանկը ինչպէս նիւթական պատասխա-
նատուութեան մէջ, նոյնպէս ալ բարոյական պատաս-
խանատուութեան մէջ, ցմիշտ ենթակայ կը մնայ յետա-
պնդումներու և սպառնացող պատժական տագնապ-
ներու :

Դատարանը ինչ որոշում որ ալ տայ, պահանջա-
տէրերը բացարձակապէս իրաւունք ունին, երբ որ ալ
ըլլայ սնանկի կարողութիւնը գտած պարագային հա-
րիւրին հարիւր պահանջել և ստանալ :

* * *

ՍՆԱՆԿԻՆ ԵՐԱՇԵՍԱՌՈՐՆԵՐԸ ԿԱՄ

ՍՈՆՉՈՒԹԻՒՆ ՈՒՆՆՅՈՂՆԵՐԸ

(Միւլիսիս Բէլիլլէրի վէ սայիւ միւրքահիսլէրի)

Վաճառականի մը սնանկութեան առթիւ, երբ իմ
երաշխաւորները կամ փոխանցող (ծիրանրա) և կամ ա-
ռքնչութիւն ունեցողներն ալ սնանկանան, այն ատեն,
պահանջատէրը իր առնելիքը հանդերձ տօկոսով, ամ-
բողջի մատայէն ալ պահանջելու իրաւունք կ'ունենայ,
այսինքն ամբողջութեամբ ամէնուն մասային մէջ կար-
ձանադրուի և համեմատական բաշխումի (դուրեմա) և

կամ քօնքօրտաթոյի մէջ ինչ որ ստանայ, մնացեալ
մասը միւս մասայէն պահանջելու իրաւունք կ'ունենայ :

Եթէ երաշխաւորը և կամ առնչութիւն ունեցողը
սնանկացած չէ, պահանջատէրը սնանկի մասայէն իրեն
վիճակած բաժինը ստանալէն վերջ, մնացեալ մասը՝ ե-
րաշխաւորէն պահանջելու իրաւունք ունի : Այս պա-
րագային, սնանկի մասային արձանագրուած ատեն,
« երաշխաւորին դիմելու իրաւունքս վերապահելով կը
դիմեմ. (րեֆիլի գարչու հագգը միւրաճաւարըմլ մուհա-
Ֆազարէն գայտ իրաիլիլիմ) » պէտք է ըսէ, ապա թէ
ոչ, շատ աւարկութիւններու տեղի կը տրուի :

Մնանկացեալ երաշխաւորները կթէ քանի մը հոգի
ըլլան, երաշխաւորութեան առթիւ իրարու պարտքին
ինչ որ վճարին, վերջէն իրարմէ բան մը պահանջելու
իրաւունք չունին : Թէպէտ երաշխաւորութեան օրինաց
համաձայն, երաշխաւորը վերջէն բուն պարտապանէն
կրնայ պահանջել, բայց հոս երաշխաւորն ալ սնանկա-
նալու համար անկէ չի կրնար պահանջել :

* * *

ՄԵՆԱՇԵՆՈՐՉԵՍԱԼ ԱՌՆԵԼԻՔԻ ՏԷՐԵՐՈՒ ՄԱՍԻՆ

(Իմիյազը պաճագըլար հագգընսա)

Մինտիքները եթէ մասային շահաւոր նկատեն, սը-
նանկի կողմէ կանխաւ գրաւ դրուած ապրանք և կամ
կալուածները, կրնան փոխարէնը վճարելով գրաւ ըն-
դունողէն ետ առնել ու ծախել :

Այս գրաւը եթէ առնելիքի տէրը ինքնակի ծախէ,
եր առնելիքը առնելէն վերջ աւելցած մասը վերադար-
ձնելու պարտաւոր է, ինչպէս նաև պակաս մնացածը,
երբև պարզ առնելիքուոր պահանջելու իրաւունք ունի

Մնանկի մը , սնանկութենէն մէկ ամիս առաջ քո-
վը ծառայած գործաւորի անվճար մնացած վարձքը , և
գրագիրներու և այլ պաշտօնեաներու առ առաւելն մինչ
վեց ամսեայ անվճար թոշակը , մենաշնորհեալ (իմքի-
յազը) առնելիք կը համարուին :

Այս կերպ առնելիքները , եթէ մենաշնորհեալ ան-
ուամբ արձանագրուած չեն , իբրև պարզ առնելիք կը
նկատուին :

Մնանկի մը մասան երկու բաժինի կը վերածուի ,
մէկը մենաշնորհեալ առնելիքներու համար , և միւսն ալ
պարզ առնելիքներու : Ծախուած ապրանքէն գոյա-
ցած ստակը , նախ մենաշնորհեալ առնելիքներու մա-
սային կը տրուի , հոն կը բաշխուի , և ապա աւելցած
մասը , պարզ առնելիքներու մասային կը տրուի :

Թահգիգ տիւրիւնի մէջ առժամանակեայ արձա-
նագրուողներու բաժինը վար կը դրուի , մինչև անոնց
հաստատութիւն . եթէ մինչ (փրօթէստի բաժնին մէջ ըս-
ուած) ժամանակը լրանալուն երեւան չելլան , այն ա-
տեն պահանջատէրերը՝ իրենց մէջ կը բաժնեն :

Պահանջապերերը կրնան մասային գործը այլոց
ձգել (լիզիտասիօն) ընել , կամ վերստին սնանկին հետ
համաձայնութեամբ կարգադրել :

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ

ԵՒ ԻՐ ՍԵՉՐՈՒՆՔԸ

(Հուգուզը գէվեար)

Բնութեան մէջ ամէն բան աճողական պայմանին
ենթակայ է . որուն համար ամէն բան իր հակասեռն
ունի , վասն զի մինչև որ հակասեռ երկու նիւթերու

իրարու բաղխում չըլլայ , անկէ ո և է բանի մը բղխում
չ'ըլլար , ապա թէ ոչ ամէն ինչ անծնունդ մնալով իս-
պառ կ'անհետանայ :

Մարդը ասոնց գերագոյն և կատարեալը ըլլալով ,
անշուշտ այդ պայմանին աւելի ընդլայնեալը պէտք
ունէր , ինչպէս որ ալ ունեցաւ յանձին ամուսնու թեան .
Ամուսնութիւնը երկու սեռի միացմամբ կատարեալ ըլ-
լալուն համար , մարդիկ ասոր սուրբ և նուիրական կո-
չում ընծայեցին : Մարդ քանի որ այս պայմանին ենթա-
կայ է , կարելի չէ որ առանձին ապրի , բայց որովհե-
տե հետզհետէ մարդիկ շատնալուն , արուեստ ու գի-
տութիւնը յառաջդիմելուն պատճառաւ՝ մարդոց ապ-
րուստը բազմատեսակ և դժուար դարձաւ , անոր հա-
մար շատ անգամ ամէնուն և առաւելասպէս իգական
սեռի նիւթական և բարոյական վիճակը ի նպաստի չէ
ամուսնական դիրք կազմելու : Որով ծնողք՝ այս մի-
ջոցը դիւրացնելու համար փոյթ ըրած են , դրամօժիտ
տալու սովորութիւն մը հաստատել :

Կնոջ մը հարստութիւնը , անպատճառ դրամօժիտ
ունենալու վրայ կայացած չէ , այլ մերթ ժառանգու-
թեան և մերթ ալ աշխատութեան առթիւ և թերևս
երբեմն ալ գտնալով կամ բազդախաղի և այլ միջոցաւ
կրնայ հարստութիւն մը ունենալ . վերջապէս թէ ինչ մի-
ջոցաւ ալ որ ըլլայ , բացարձակապէս իրեն կը պատկանի :

Թէպէտ ոմանք ըսեն թէ , քանի որ այր և կին մէկ
անգամ կը կազմեն , պէտք է որ կնոջ ստացուածքն ալ
հաւասարապէս երկուքին պատկանի , և տան պարտքի
փոխարէն ծախուի : Բայց պէտք է գիտնալ որ ընտա-
նեկանութեան մէջ , սէր և միաբանութիւն եղած պա-
րագային հոն իրաւունք չի մտնիր , բայց սէրը դադրած
պարագային , այր ու կին իրարու և երկուքը երրորդի

մը հանդէպ դատելով, զատ զատ անհատներ կը համարուին, Հեռեւարար երբեք իրաւունք չէ որ կնոջ մը ստացուածքը, իր էրկան և կամ էրկան պահանջատիրոջ կողմէ գրաւուի, վասն զի արական սեռը, Ֆիզիքական և մտաւորական կազմութեամբ իգական սեռէն աւելի արի և գործելու տրամադիր ըլլալով, եւ իրենց վրայ ծանրացող ապրիլ ու ապրեցնելու բեռէն ստիպեալ, կը ձգտին դրամով կամ առանց դրամի ամէն տեսակ յախուուն ձեռնարկութիւններ ընել. սակայն իգական սեռը զուրկ է այդ պայմաններէ: Ամուսնութեան մէջ շատ այրեր նեղուած միջոցին իրենց կանանց դիմելով և անոնց անուշ համոզումներ ներշնչելով, կը յաջողին կանանց հարստութիւնը ձեռք բերել և իրենց գործին ծառայեցնել. բայց քանի որ մարդը հունաւոր է, չի կրնար ապագան որոշ տեսնել, յանկարծ այդ անձի ձեռնարկութեանը դէմ այնպիսի անակնկալ աղէտներ ու փոթորիկներ կը ծագին որ, կը տանին զինքը մինչև ի նիւթական կորուստ. էրիկը այդ պատճառաւ հետզհետէ կ'աղքատանայ, կամ կը սնանկանայ, մի և նոյն ժամանակ թերեւս մահը կը մօտենայ, և կամ թէ էրիկ և կնոջ մէջ անհամաձայնութիւն ծագելուն պատճառաւ զիրար կը ձգեն, և կամ էրկան կեանքը կը վտանգուի. արդ այդ պարագային ո՞վ պիտի ապրեցնէ իր կինը և իր զաւակները, պահանջատէրը իր առնելիքը կ'առնէ կը քաշուի. ահա ճիշդ այս պատճառաւ է որ կնոջ ունեցած անձնական ստացուածքը անմատչելի եղած է, որպէս զի կարենայ ապրիլ ու ապրեցնել:

Ասոր համար, օրէնսդիրները կնոջ իրաւունքը ճանչցած և զայն էրկան պարտքէն զերծ կացուցած են: Զոր օրինակ. էրիկը սնանկացած ժամանակ, կինը՝ թէ

իրբե գրամօփտ առած, կամ իբր ժառանգութիւն և կամ մնացած իր ստակով գնած կալուածները, և այս կալուածներու արդիւնքով գնած ուրիշ կալուածները պահանջելու և մասայէն ետ առնելու իրաւունք ունի, բայց պայմանաւ որ ասոնք ամէնքը պաշտօնական թուղթով մը ապացուցանէ. ապա թէ ո՛չ պահանջատէրերը զայն կը ծախեն. ինքը միայն իրեն հանդերձի գին մը և մասնաւոր բան մըն ալ ապրուստ պահանջելու իրաւունք կ'ունենայ:

Մնանկի կնոջ հազուստներէն զատ՝ իր ունեցած ստակը, ապրանքը բացարձակապէս էրկանը կը համարուի, կինը մինչև որ խիստ համոզիչ և հաստատ ապացոյցներով զայն չի կարենայ հաստատել, չի կրնար զանոնք յետս պահանջել:

Մնանկ մը՝ եթէ յառաջ քան զսնանկութիւն իր կնոջ ինչքը անոր հաւանութեամբ գրաւ դրած է, յետ սնանկութեան կինը եթէ ուղէ կրնայ այդ պարտքը վճարել և ապրանքը ետ առնել:

Կին մը իր էրկանը սնանկանալէն առաջ, երբ իր ստակով անոր պարտքերը վճարած է, էրկանը սնանկանալէն վերջ այլ ևս չի կրնար անկէ պահանջել, վասնզի այդ վճարուած ստակը էրկանը ստակը ըլլալու հաւանականութիւն կայ, բայց եթէ խիստ հաստատուն ապացոյցներով հաստատե թէ իր ստակով վճարած է, այն ատեն էրկանը մասայէն պահանջելու իրաւունք կ'ունենայ:

Ամուսնացած ժամանակին ո և է զբաղում չունեցող անձ մը՝ երբ ամուսնութենէ մինչև մէկ տարի վերջ, դրամագլխով գործի մը ձեռնարկէ, զայն կնոջ մտակն ըլլալուն մէկ աստիճան ապացոյց կրնայ համարուիլ:

ՄՆԱՆԿԻ ՄԸ ԿՍԼՈՒԱԾԻ ՎՍՃԱՌՈՒՄԸ

(Էճեայի դայր մէնգուլէնին Ճիւղիսի հագգընեա)

Մնանկի մը պահանջատէրերը , սնանկութեան թուականէն սկսեալ մինչև իննիօնի օրը , եթէ սնանկին կալուածը իրենց քով գրաւ դրուած չէ , սինտիքներէն անոր վաճառումը չեն կրնար պահանջել :

Իսկ եթէ գրաւ դրուած է և կամ շարժական ապրանքները մնալով վնասի ենթարկուելու հաւանականութիւն ըլլայ , և կամ քօնքօրտաթօ ըլլալու հաւանականութիւն չըլլայ , այն ատեն սինտիքները զայն աճուրդի հանելով կը վաճառեն :

Մնանկի մը ո և է ապրանքը մինչև 8 օր աճուրդի մէջ կը չըջի , ութերորդ օրը լմնալէն վերջ , մինչև 15 օր կրկին անգամ աճուրդի կը դրուի . սակայն այս երկրորդ աճուրդին մէջ , 100 ին տասնէն պակաս յաւելում չընդունուիր :

Ա Ի Ա Ն Դ (Էմանէթ)

ՄՆԱՆԿԻ ԳՈՎ ԳՏՆՈՒԱԾ ՍԻՍՆԵՐԻ

ՅԵՏՍԿՈՉՈՒՄ

(Իսպիտաի էճեա պէյանընեա օր)

Ուրիշի մը հաշուոյն գանձուելու համար կանխատանկի մը զրկուած պահանջաթուղթերը , և եթէ անոնց արժէքը գանձուած է՝ սոյն արժէքը , ինչպէս նաև ուրիշի մը հաշուոյն իր գնած , կամ ուրիշ մէկու մը յանձնուելու

պայմանաւ իրեն իբր աւանդ յանձնուած ապրանքները սնանկին քով իբր աւանդ կը նկատուին . ասոնց տէրիքը օրինաւորապէս իրենց պատկանիլը հաստատելէն վերջ՝ կրնան զանոնք սնանկի մասայէն ետ պահանջել . իսկ եթէ աւանդները վտանգուած են , այն ժամանակ անոր ընթացիկ արժէքը պահանջելու իրաւունք ունին , որ ըսել է մնաշնորհեալ առնելիքուոր կ'ըլլան ,

Մէկը՝ ապրանք ապսպրելէն և անոր արժէքը մասամբ և կամ ամբողջովին վճարելէն զկնի , երբ սնանկանայ , ծախողը թէև անոր արժէքը առած ըլլայ , բոյց այն ապսպրուած ապրանքը , որ չէ յանձնած տակաւին , իր քով պահելով՝ ինչիքը մասային հաղորդելու պարտաւոր է :

Աւանդ (վիտեայ , կմանէթ) և փոխաւանդ (իյարե) : Մէկը՝ մէկու մը վրայ ունեցած սէրէ , համակրութենէ և վստահութենէ ներչնչեալ իր ապրանքը վերստին ստանալու պայմանաւ վարձքով կամ առանց վարձքի պահպանելու , խնամելու և ի հարկին գործածելու և արդիւնքէն օգտուելու համար , առժամանակեայ կերպով իր վստահելիին կը յանձնէ :

Աւանդը երեք տեսակի կը բաժնուի : Ա. Գտնուած աւանդ (լուգարայ) : Բ. Յանձնուած աւանդ (վիտիեա) : Գ. Փոխաւանդ (իյարե) :

Ա. Գտնուած ապրանքը (լուգարայ) այն է որ , մէկը զիպուածաւ բան մը կը գտնէ , այս գտած բանը իր քով աւանդ եղած կըլլայ , ինք պարտաւոր է զայն յայտարարել և կառավարութեան յանձնել . ապա թէ ոչ աւանդին թէ՛ ընական , թէ՛ անընական պատճառէ մը յառաջ եկած վնասին պատասխանատու կ'ըլլայ , ամէն պարագային մէջ զինը տուժելու պարտաւոր կ'ըլլայ :

Բ. Յանձնուած աւանդը (վիտիեա) բան մը վարձ-

քով և կամ թէ առանց վարձքի պահպանելու համար մէկու մը յանձնելն է :

Գ. Փոխաւանդ (իյարե) այն է որ, աւանդատէր և աւանդառուն առանց իրարմէ վարձք մը պահանջելու , աւանդատէր բանի մը պահպանութիւնը , անոր գործածութիւնը և արդիւնքէն օգտուելու իրաւունքը աւանդառուին կը յանձնէ :

Աւանդը՝ վերոյիշեալ եղանակներէն որ տեսակին սլ որ պատկանի , բացարձակապէս աւանդ է . տէրը՝ որ ատեն որ ուզէ՝ աւանդապահը զայն անվնաս վերադարձնելու պարտաւոր է , իսկ երբ վնասուի և այս վրանաքը եթէ բնական փորձանքի մը հետեւանք եղած է , այդ պարագային՝ աւանդապահը զինը տուժելէ կ'ազատուի , իսկ եթէ իրեն հեղինակութենէն և անզգուշութենէն (տուճ վի քագսիրիլի) յառաջ եկած է , վնասին պատասխանատու կ'ըլլայ :

Մէկը՝ եթէ առանց տիրոջը հաւանութիւնը ստանալու բան մը առնէ , և կամ թէ բան մը գնելու համար սակարկութիւն ըրած միջոցին՝ զայն տանիլ ուրիշներուն ցուցնելէ վերջ գնելու պայմանաւ (սեվմի շերա) այն բանը առնէ տանի , և ի վերջոյ այդ բանը իր քով վնասուի՝ այն անձը յափշտակող (դասիպ) մը կը համարուի , զոր ամէն պարագայի մէջ տեղի ունեցած վնասը թէ բնական պատճառներէ բխած ըլլայ , և թէ արուեստակեալ պատճառներէ , վերջապէս ամբողջ վնասը տուժելու պարտաւոր է :

Մէկը՝ երբ մէկու մը քով բան մը մոռնայ , և կամ բան մը բերէ ձգէ , աւանդապահը ձայն չը հանէ , այս բանը ասոր քով աւանդ եղած կ'ըլլայ . տեղի ունեցած վնասին պատասխանատու է . բայց եթէ նոյն պահուն մերժած է , բայց ձգողը մոտիկ ըրած չէ , այն պարագային պատասխանատու չ'ըլլար :

Աւանդապահները եթէ քանի մը հոգիէ բաղկանան , և կամ անոնք յետոյ մէկիկ մէկիկ ձգեն երթան , վերջին մնացողը պատասխանատու կը մնայ :

Աւանդատունը՝ աւանդառուին աւանդի պահպանութեան և գործածութեան մասին ինչ հրահանդ որ տուած է , աւանդապահը նոյն հրահանգին համեմատ վարուելու պարտաւոր է , հակառակ պարագային վնասին պատասխանատու կ'ըլլայ :

Աւանդապահը աւանդի պահպանութիւնը իր վրատանելիին կրնայ յանձնել , բայց ամէն պարագայի մէջ պայման է որ աւանդառուն ասորանքը ուր տեղ և ինչ խնամով որ կը պահէ , աւանդն ալ նոյն տեղ և նոյն խնամով պէտք է որ պահէ . զոր օրինակ , աւանդը եթէ գոհարեղէն մըն է՝ սենեակը սնտուկին մէջ , եթէ կենդանի է՝ ախոռին մէջ կը պահուի , ապա թէ ոչ տարբեր տեղ պահելէն յառաջ եկած վնասին , պահողը պատասխանատու է :

Իսկ եթէ աւանդատունը աւանդապահին կանխաւ ապսպրած է որ , զայն իրմէ զատ ոչ ոքի չը յանձնէ , աւանդապահը միայն ինք պարտաւոր է պահել , ուրիշ ո և է մէկու մը յանձնելու իրաւունք չունի :

Աւանդ մը իւրավայել տեղ պահուած ժամանակ եթէ յանկարծ կրակ մը ծագի , աւանդապահը կարող ըլլայ զայն փրկել բայց չի ջանայ ազատել , յայնժամ տեղի ունեցած վնասին պատասխանատու է . իսկ եթէ կարող չէ եղած փրկել պատասխանատու չ'ըլլար :

Աւանդատուն եթէ երկար ժամանակէ ի վեր անյայտացած է՝ աւանդապահը կրնայ դատաւորին դիմելով զայն ծախել ու արժէքը պահել : Իսկ եթէ չը դիմէ ու չը ծախէ , ձգէ որ ասորանքը վնասուի , ինք տեղի ունեցած վնասին պատասխանատու չէ :

Աւանդը եթէ ծախսի և խնամոց կարօտի , աւանդապահը դատաւորին պէտք է դիմէ , անկէ ծախսելու հրաման ստանայ . ապա թէ ոչ եթէ ինքնաբերաբար ծախսէ , վերջոյ ըրած ծախսը աւանդատէրէն պահանջելու իրաւունք չ'ունենար :

Աւանդատէրը եթէ կանխաւ աւանդառուին արտօնած է որ աւանդը վարձու տայ , գրաւ դնէ և կամ թէ փոխ տայ , աւանդառուն կրնայ ասոնք ընել . իսկ եթէ ոչ չի կրնար :

Աւանդառուները եթէ քանի մը հոգիներէ բաղկանան , աւանդը պահելու գործին մէջ՝ աւանդը եթէ կարելի է բաժնել կը բաժնեն , իւրաքանչիւրը իր բաժինը կը պահէ , իսկ եթէ բաժնել հնար չէ , այն ատեն միասին կը պահեն . եթէ ասոնք հետզհետէ ձգեն երթան , վերջը որուն քով որ մնայ այն պատասխանատու կը մնայ :

Իսկ եթէ աւանդատէրերը քանի մը հոգիէ բաղկանան , վերջոյ անոնցմէ ոմանք զան միւսներու բացակայութեան յանձնած աւանդները ետ ուղեն , այս աւանդները եթէ կրնայ բաժնուիլ՝ կը բաժնուի , ու գողներու մասը իրենց կը տրուի , իսկ եթէ ոչ՝ բան մը չի կրնար յանձնուիլ մինչև որ ամբողջ տէրերը չի գան : Աւանդէն գոյացած արդիւնքը աւանդատիրոջ կը պատկանի :

Աւանդատէրէն և աւանդառուէն մէկը եթէ մեռնի , աւանդը ետ պէտք է դարձնել : Բայց եթէ աւանդատիրոջ շատ մը պարտքեր կան , աւանդառուն զայն դատաւորին (քերէքէ մեմուրի) պէտք է հաղորդէ . ապա թէ ոչ եթէ ժառանգորդաց յանձնէ պատասխանատու կ'ըլլայ :

Գ. — ՓՈՒՍՏԻԱՆԴԻԸ (իյարի) ապրանքի մը և կամ

թէ կալուածի մը գործածութիւնը և անոր արդիւնքէն օգտուելու իրաւունքը մէկու մը ձգելուն կ'ըսուի , որուն համար երկուստեք իրարմէ վարձք պահանջելու իրաւոնք չունին :

Փոխաւանդի հտսած վնասը և անոր տուժելու պայմանը , պահպանութեան եղանակը և այլ ամէն օրէնքները վերոյիշեալ աւանդի օրինաց կը հետեւին :

Փոխաւանդը տրուած ամսայի գետնի մը (արսա) վրայ՝ աւանդառուն եթէ չէնք չինէ , ծառ անկէ , աւանդատէրը չուզած պարագային կրնայ վրայի չէնքը և ծառը քակել տալ և գետինը ետ սաանալ :

Աւանդառուն՝ տիրոջ հաւանութեամբ կրնայ զայն գրաւ դնել , իսկ եթէ ի վերջոյ չը կարողանայ այդ պարտքը վճարելով գրաւը ազատել , եւ եթէ աւանդատէրը իր ապրանքը ետ կոչել ուզէ , պէտք է որ , ինքը փոխ առնուած գումարը վճարէ , յետոյ աւանդառուին դիմելով անկէ պահանջէ :

Աւանդը եթէ առանց տիրոջ հաւանութեան գրաւ գրուած է , այս գրաւը անվաւեր ըլլալով , ապրանքի տէրը իր ապրանքը որու քով որ գտնէ , անկէ կրնայ պահանջել :

* * *

ՍԵԱՆԿՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԴԷՄ ԲՈՂՈՒՅ

(Իճլաս հիւմի սուսուրնեսա մուղայիբիբէ սայիր)

Դատարանի տուած սնանկութեան որոշումը՝ եթէ մէկը չընդունի , և ուզէ անոր դէմ առարկութիւն մը ընել . այս առարկութիւն ընողը եթէ սնանկն է , որոշում տուած օրէն մինչև ութ օր , իսկ եթէ առարկութիւն ընողներ պահանջատէրերէն և կամ առնչութիւն ունեցողներէն մէկն է , մինչև մէկ ամիս իրենց առարկութիւնը դատարանին յայտնելու պարտաւոր են :

ԹԵՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԽԱՐԴԱԽՈՒԹԵԱՄԲ

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԻՐ ՍԿՋՅՈՒՆՔԸ

(Թագսիրարչի վե հիշելի իժշասիեր հագգրնեսա)

Բնութիւնը՝ մարդիկ գործել տալու և յառաջդիմութեան մղելու համար, անոր մէջ ապրելու պէտքը և նախանձալիր մրձումը դրաւ. որով մարդիկ այս յոյսէն թելադրեալ և իրենց օժտուած զանազան տրամադրութեանց յենլով, սկսան կեանքի ասպարէզին վրայ զանազան գործեր ընել, ու յառաջդիմել: Ներկայ յառաջդիմութեան վիճակը նախնի դարու հետ բազմատելով՝ ուր աշխարհը դեռ ամայի էր, և կեանքի պէտքերը դեռ շատ նախնական էին, յառաջդիմութիւնն ալ բոլորովին սաղմնական վիճակի մէջ էր. բայց երբ հետըզհետէ մարդիկ սկսան շատնալ, զանազան նոր դիւտեր հեղինակեցին, այն օրէն սկսեալ յառաջդիմութիւնը տակաւ զարգանալ սկսաւ. ասոր պատճառաւ ապրուստի պէտքը բազմապատկուեցաւ, ու խիստ դժուարացաւ, և թերեւս օր մըն ալ այս սաղմն աւելի ծաւալը ընդարձակելով՝ ապրուստը աւելի դժուարացնէ և մրցումը ու յառաջդիմութիւնը իր եզերքին տանի՝ հասցնէ:

Սա ևս խոստովանելի է թէ՛ չարութիւնը և բարութիւնը քանի որ իրարու հակընդդէմ զօրութիւններ են, ասոնք իրարու հաշտեցնելով անկէ ապրուստ հանելը աւելի կը դժուարանայ, վասն զի մէկ կողմէն պէտքերը աւելնալով ապրուստը կը դժուարանայ, միւս կողմէն ալ չարութիւնը յառաջդիմելով վտանգը կը բազմանայ:

Չոր օրինակ, երկու անհատ յոյսի մը յենած հրապարակ կ'ելլեն՝ գործելու և շահելու: Մին իր օժտեալ նիւթական և բարոյական կարողութեան չնորհիւ՝ ասպարէզին վրայ հակայ քայլեր կ'առնէ, կը յառաջդիմէ, իսկ միւսը՝ ենթադրենք թէ միւսնոյն կարողութիւններով օժտեալ ըլլայ, բայց իր վրայ ծանրացած ապրուստի բազմակողմանի պէտքը, և կամ պատահած ակնունելի եւ անակնկալ փորձանքը, կամ գողութիւնը, խարէութիւնը, կրակը և այլ վտանգները զինքը մրցելէ կը կասեցնեն, որուն առթիւ կամ իր ծագած տեղը կը մնայ և կամ կէս ճամբան կը մնայ: Այդ պարագային ինչ պիտի ընէ այդ մարդ՝ ապրուստը հայթայթելու համար բնականաբար այլոց օժանդակութեան պիտի դիմէ: Այլք ոմն կարեկցաբար, ոմն անզիտակցաբար՝ միայն արտաքին երեւոյթին խաբուելով կը նուիրեն իրենց նիւթական ավակցութիւնը. այսպիսի պարագայի մը մէջ ոմանք իրենց նախկին ուղղամտութիւնը պահելով կը վերաշարունակեն իրենց գործի ընթացքը, իսկ ոմանք ալ ապրուստի պէտքէն ներշնչեալ յանցելոյն կրած աղէտէն փորձեալ, և ի մասնաւորի ընչաքաղցութեան տենչով տողորեալ, կը սկսին կեղծ անանկութիւն մը պատրաստելու միտիլ:

Ահա ասոր համար օրէնսդիրները մտածեր են սնանկութիւնը երեք տեսակի բաժնել. Ա. Արդարացի սնանկութիւն (հագիգի իճյաս). Բ. Թերութեամբ սնանկութիւն (քագսիրաթիլ իճյաս), և Գ. Խարդախ սնանկութիւն (հիլիլի իճյաս): Այսինքն այն առեւտրական անհատը որ կատարեալ ուղղամտութեամբ իր գործը վարած է, սակայն վերջոյ կամքէն անկախ պատճառներ վրայ գալով սնանկացած է, անիկա արդարացի սնանկ կը նկատուի, և պատժոյ ենթակայ չէ: Իսկ այն որ՝ իր

գործառնութեանց մէջ կանոնաւորութիւն, ուղղամտութիւն և աչալըջութիւն ունեցած չէ, անիկա թերութեամբ սնանկ կը նկատուի, որուն երկու տարիէն պակաս պատիժ տնօրինած են: Գալով երրորդ տեսակին, այն անհատը որ յատկապէս հարստանալու դիտումով կեղծ սնանկութիւն կը պատրաստէ, այն ալ իբրև գող և իբրև խարդախ սնանկ կը նկատուի, զոր ծանր պատժոյ ենթարկած են, որոնց մանրամասնութիւնք վարը պիտի խօսինք:

* * *

ԱՐԳԱՐԱՅԻ ՄՆԱՆԿ (Հագիգի միւճիս)

Արդարացի սնանկի տեսակին և շարժառիթի մասին աւելորդ է գրել, զի արդէն իրաց վիճակը և սինտիքներու տեղեկագիրը զայդ կը հաստատեն:

* * *

ԹԵՐՈՒԹԵԱՄԲ ՄՆԱՆԿ (Թագսիրաթը միւճիս)

Թերութեամբ սնանկ. այն վաճառականը երբ իր ներքին և արտաքին ծախսերը իր կարողութենէն աւելի ընէ, բաղդախաղ (պախք իշի) խաղայ, սնանկութեան 3 օրուան յայտարարութիւնը ուշացնելով պակաս արժէքով ապրանք ծախէ, նոր փոխառնութիւններ ընէ, և նոր թուղթեր հրապարակ հանէ, այդ երեք օրուան մէջ ուրիշ պահանջատէրերու վրաս եղող իր բարեկամներուն վճարումներ ընէ. փոխարէն առանց ստանալու ուրիշներու յանձնարարութեան վրայ իր ոյժէն վեր ապրանք գնէ զրկէ. նախապէս կազմած քօնքօրտաթոյի արժէքը դեռ չը վճարած կրկին սնանկանայ. իր կնոջ ստացուածքը՝ իր ապրանաց հետ խառնած պատ

րագային, անոր մասին եթէ պայման մը չը հաստատէ իր անկարողութիւնը տեսնելէն մինչեւ երեք օր եթէ զայս դատարանին չը հաղորդէ. յետ սնանկութեան եթէ առանց բանաւոր պատճառի մը՝ ամէն անգամ սինտիքներուն չը ներկայանայ. տոմարներ կանոնաւոր չը բռնէ, թերութեամբ սնանկ (թագսիրաթը միւճիս) կը նկատուի:

Թերութեամբ սնանկի յանցանքը պահանջատէրերու կողմէ կրնայ ներուիլ, բայց եթէ ներել չուզող կողմը անձի եւ գումարի մեծամասնութիւն կազմէ, այն պատրագային սնանկը երկու տարիէն վար և մէկ ամիսէն վեր պատիժ կը կրէ:

* * *

ԽԱՐԳԱԽ ԿԱՄ ԿԵՂՉ ՄՆԱՆԿ (Հիլէլի միւճիս)

Կեղծ կամ խարդախ սնանկ. — Այն սնանկը՝ որ, իր տոմարները կը պահէ չի ցուցներ. իր տոմարներու մէջ իր ապրանքը դիտմամբ պակաս կը ցուցնէ. սուտ պարտքեր կը շինէ. սնանկութենէ յետոյ ապրանք կը փախցնէ և այս կերպ խարդախ միջոցներ կը յերիւրէ, այս ալ օրինօք կեղծ սնանկ կը համարուի. այն ատեն զործը առանց պահանջատէրերու կամքին ենթակայ ըլլալու ինքնակի (այսինքն այս տեսակ դատերու մէջ ընդհ. դատախազն ալ կը հրաւիրուի), Պատժական Ատենին կ'երթայ, հոն պէտք եղած քննութիւնը եւ դատավարութիւնը կը կատարուի, և առ նուազն 3—5 տարի բանտարկութեան վճիռ կը տրուի:

* * *

ՍԵՆՆԿՈՒԹԵԱՆ ՄԵՂՍՍԿԻՑԵՐ

(Ղայրիլէր քարաճընեան իրքիեկայ օլունան նիւնիս)

Ամէն անոնք՝ որոնք ուղղակի կամ անուղղակի միջնորդութիւն և մասնակցութիւն մը ունեցած են սնանկին գործած թերութեանց եւ խարդախութեանց մէջ, անոնք ալ նոյն պատժոյ կ'ենթարկուին՝ ինչ որ սնանկը կ'ենթարկուի :

Ինչպէս նաև սինտիքները՝ եթէ սնանկի հետ միանալով՝ ղեղձուններ գործեն, նոյն պատժոյն կ'ենթարկուին. նոյնպէս թէ՛ սնանկը, թէ՛ սինտիքները ու պահանջատէրերը և թէ՛ ուրիշ միջնորդողներ, եթէ քօնքօրտաթօ կազմելու համար դուրսէն պահանջատէրերէն ոմանց աւելի գումար կամ նուէր և այլն բան մը տան ու առնեն, այս աւելի գումարը ապօրէն ըլլալով ետ կ'առնուի, զոր տուողն ու առնողը և միջնորդողն ալ իբրև խարդախ (հիլիքեար) մինչև 5 տարի բանտարկութեան կը դատապարտուին :

. * .

ՊՍՏՈՒՈՅ ՎԿՐԱԿՈՉՈՒՄ

(Իյասէի իյքիպար)

Պատուոյ վերակոչումը կամաւոր է, սնանկ մը կըրնայ միայն քօնքօրտաթօ ընելով՝ իր նախկին վարկը վերստանալ. բայց աւելի պատուախնդիր եղողները՝ չեն ուզեր այլոց իրաւունքը կրճատել և իրենց պատուոյ վրայ արատ բերել, որուն համար տենչ մը կ'ուռնենան իրենց ամբողջ պարտքերը տոկոսով հանդերձ վճարել :

Պատուոյ վերակոչում ընել ուղղը, իր սնանկու-

թեան վճիռ տուող դատարանին դիմելով, իր ամբողջ հին պահանջատէրերը հոն պէտք է հրաւիրէ, դուրսը մնացածներուն կսզմէ ալ հաստատուն անդորրագրեր (իպրանամ) ներկայացնէ, հոն իր ամբողջ պարտքը՝ հանդերձ տոկոսով վճարած ըլլալը ապացուցանելով՝ պատուոյ վերակոչում խնդրէ :

Դատարանը սոյն խնդրագրերը լրագրաց մէջ կը հրատարակէ, և մէկ օրինակն ալ Սալոնին մէջ կը կախէ. յայտարարութեան թուականէն մինչև երկու ամիս ամբողջ պահանջատէրերը Դատարան կը հրաւիրէ. ասոր դէմ ու է առարկութիւն ունեցող պահանջատէր մը՝ այս նշանակեալ ժամանակամիջոցի մէջ, պէտք է ներկայանայ, իր առարկութիւնները ներկայացնէ, ապա թէ ո՛չ դատարանը պատուոյ վերակոչումը կը հաստատէ :

Խնդրարկուն՝ եթէ առաջին անգամ չը յաջողի պատուոյ վերակոչման վճիռ մը ձեռք բերել, մէկ տարի անցնելէ վերջ, մի և նոյն կերպով կրկին դիմում կրնայ ընել :

Կեղծ սնանկները, վստահութիւնը գէշ գործածողները (հմնիլիքի սուի իսքիյմայ), գողութիւն (սըրգաթ) ընողները, և այլ այս կերպ ծանր պատասխանատուութեան ենթակայ եղող անձինք, զրկուած են այս իյասէի իյքիպարի խնդրանքի իրաւատութենէն :

Թերութեամբ սնանկը (թագսիրաթլի միւֆլիս) և թեթեւ պատժապարտները իրենց օրինական պատիժը կրելէն վերջ, պատուոյ վերակոչում կրնան խնդրել :



Բ.

ԾՈՎԱՅԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՕՐԷՆՔՆԵՐ

Օսմանեան հպատակ մը՝ օտար դրոշակ կրող նաւ մը չի կրնար գնել, ինչպէս նաև փոխադարձաբար ոչ Օսմ. հպատակ մը Օսմանեան դրոշակ կրող նաւ մը չի կրնար շինել :

Ամէն նաւ անուն մը և նաւային Տեսչութենէն (յիման տախրիսի) կալուածագիր (սեմետ) պէտք է ունենայ: Նաւի մը առուծախսը վաւերական ըլլալու համար, եթէ Պոլիս տեղի ունեցած է՝ անպատճառ պէտք է նաւային Տեսչութեան ներկայանալ և հոն արձանագրել տալ. իսկ եթէ արտասահմանի մէջ տեղի ունեցեր է, տեղական Հիւպատոսարանին մէջ պէտք է արձանագրել տալ. ապա թէ ոչ անվաւեր կ'ըլլայ :

Նաւ մը իր վրայ տեղի ունեցած յետագայ պարտքերու դիմաց միշտ գրաւ կը համարուի. այսինքն՝ մինչև որ յետագայ պարտքեր չը վճարուին, նաւ մը չի կրնար ուրիշ մը ծախուիլ, սոյն պարտքերը նոյնիսկ իրարմէ ալ առաւելութիւն ունին (եկրտիկերիմտեմ միարեճճամ վե իմրիյազլի տըրյար). որք են՝

Ա. Տեղի ունեցած դատական և այլ ծախսեր (տաւլա վե սայիր մեսարիմի) :

Բ. Առաջնորդողի (քլաղուգ) վարձք, նաւամատոյցի, փալամարի, Կայանի ծախսեր և անոնց տուրքեր (յիման րեսմի, հավուգ խարճի վե րեսմի) :

Գ. Նաւու պահպանութեան վարձքը (պեքճի իւն-րեքի) :

Դ. Նաւու կազմածոներու դրուած սենեկի վարձքը (մաղագա քիրասը) :

Ե. Նաւու կազմածոներու համար տրուած պահպանութեան վարձքը :

Զ. Նաւապետի և նաւատիններու վարձքերը :

Է. Նաւը մեկնելու պատրաստուած պարագային պէտքերու համար նաւապետի և կամ նաւատէրի կողմէ եղած փոխառութիւն, և կամ թէ ուղեւորութեան մէջ (եսնայի սէյր ու սեֆերտե) նաւի պէտքերու առթիւ ստակ հայթայթելու համար՝ նաւապետի հրամանաւ ծախուած՝ օտարներու ապրանք գինը, զոր նաւը նաւահանգիստ հասած միջոցին, նաւապետը հասած տեղի ընթացիկ արժէքին համեմատ՝ ծախած ապրանք գինը ապրանքի տիրոջ վճարելու պարտաւոր է :

Ը. Նոր նաւի մը շինութեան առթիւ, գնուած պիտոյից արժէքը և անոնց վրայ կատարուած ծառայութեանց վարձքերը :

Թ. Նաւի նորոգութեան և ուտեստի մասին կատարուած փոխառութիւնը :

Ժ. Նաւուն վրայ դրուած ապահովագրութեան վարձքը (սիղուրքա) :

ԺԱ. Նաւապետի և թէ նաւատիններու թերութիւններէն՝ ապրանքին հասած վնասը (խասարաքը խուսուսիեէյի պահրիյե) : Եւ կամ թէ ծովային վտանգ (ավարիե) անուամբ ուղեւորութեան մէջ ծովու պատճառաւ տեղի ունեցած վնասը, նոյնպէս նաւ մը փոթորկի հանդիպած ժամանակին նաւի փրկութեան համար ծով նետուած ապրանք գինը :

Նաւ մը նոյն իսկ գաղտնապէս ալ ծախուած ըլլայ,

ամէն պարագայի մէջ, վերոյիշեալ առնելիքի տէրեր կրնան նաւը ձեռք բերել ծախել և իրենց պահանջքը ստանալ, եթէ բան մը աւելնայ՝ այն ալ գնողին տալ :

Նաւ մը Ծովային Դատարանի տուած վճուով ծախուելու դատապարտուած պարագային, դատարանի վճուագիրը, նաւապարին հաղորդուելէն մինչ 24 ժամ՝ եթէ պարտքը չը վճարէ, դատարանը այն ատեն իր պաշտօնեաներէն մէկը, անոր հետ մէկ ալ երկրաչափ և արուեստէն հմուտ թիւն ունեցող քանի մը անձինք ընկերացնելով յիշեալ նաւը կը զրկէ և զայն կը տիրապետէ : Դրկուած այս պաշտօնեաները այս մասին տեղեկագիր մը պատրաստելով դատարանին յանձնելու պարտաւոր են :

Ծախուելիք նաւը եթէ 400 թօնէլաթոյն (քիլի) մեծ է, անոր վաճառումը լրագրաց միջոցաւ կը յայտարարուի և անկէ ետք, երեք անգամ ալ ութակիսն օր աճուրդի կը հանուի, և այս ամէն մէկ ութ օրուան մէջ, տեղի ունեցած արդիւնքը դարձեալ լրագրաց միջոցաւ կը յայտարարուի : Վերջին օր՝ ըստ սովորութեան մոմ մը կը վառեն մէջտեղ կը դնեն և աճուրդի կը սկսին . յաւելում ընել ուզողները, մինչև մոմի շիջանիլը յաւելում կրնան ընել . մոմը շիջանելէն վերջ, այլևս յաւելում չընողունուիր, այս յաւելումը որի վրայ որ մնայ, այն անձը արժէքը վճարելով նաւին տէր կ'ըլլայ :

Ծախուելիք նաւը՝ եթէ վերոյիշեալ 400 թօնէլաթոյն փոքր է, այն ատեն նաւամատոյցին մէջ մոռնետիկի (տեյլայ) միջոցաւ միայն երեք օր՝ աճուրդի մէջ կը կանչուի, վերջին յաւելումը որին վրայ որ մնայ, այն անձ՝ արժէքը վճարելով կը տիրապետէ :

Թէ նաւի տէրը և կամ թէ ուրիշ մէկը, եթէ այս վաճառումի և կամ այլ գործի դէմ բողոք ընել ուզէ,

պէտք է մինչ երեք օր՝ այսինքն գործողութիւն վըճուապէս լինալէն առաւել մինչ երեք օր վերջ դատարանին դիմէ ու բողոք բառնայ :

Ն Ա Ւ Ո Ւ Տ Է Բ Ե Բ

Նաւու տէրերը՝ իրենց վարձած նաւապետին նիւթապէս և բարոյապէս երաշխաւոր են :

Տեղի ունեցած վնասաբեր գործի մէջ՝ նաւին տէրը եթէ նաւապետին կանխաւ այդպէս վարուիլու արտօնած չէ, և կամ անկէ երբեք տեղեկութիւն մը ունեցած չէ, նաւի մէջ իր ունեցած բաժինը տեղի ունեցած վնասի փոխարէն ձգելով գործէ եւ պատասխանատուութենէ կրնայ ազատուիլ :

Իսկ եթէ նաւին տէր՝ բուն իսկ նաւապետը ինքն է, ամէն տեսակէտով պատասխանատու է :

Նաւի վերաբերեալ խնդրոց խորհրդակցութեան մէջ նաւի տէրերու ձայնի առաւելութիւնը միշտ անհրաժեշտ պայման է :

Ն Ա Ւ Ա Պ Ե Տ (Գաբուսան)

Նաւապետ իր կամքէն անկախ պատճառէ մը զատ միւս պարագայից մէջ, իր պաշտօնի մէջ գործած թերութեանց առթիւ, տեղի ունեցած վնասի հատուցման պատասխանատու է :

Նաւապետ փոխադրութեան համար ստանձնած ապրանայ մասին՝ տիրոջ բեռնագիր մը (բոնուշվեհրօ) տալու պարտաւոր է :

Նաւապետ մը վաճառականի մը պէս վաւերացեալ տոմարներ պէտք է ունենայ, որոնց մէջ արձանագրէ նաև օրուան օրի վիճակը :

Նաւապետ նաւարկութեան միջոցին նաւի նորոգութեան ծախսերը և կամ ուրիշ անմիջական պէտքերը հայթայթելու համար, դրամի պէտք ունեցած պարագային, նաևու վերաբերեալ և նաևու մէջ գտնուած զանազան գործիքները և ապրանքները, եթէ ասոնք չը գտնուին, բեռցուած ապրանքը գրաւ դնելով պէտք եղած փոխառութիւնը կրնայ ընել . եթէ այս կերպով փոխառութիւն ընելը անկարելի ըլլայ, նոյն իսկ կրնայ ասոնք ծախել . բայց ամէն պարագայի մէջ՝ նաւը նաւահանգիստ հասած միջոցին՝ արժէքը ապրանքի տէրերուն վճարելու պարտաւոր է . իսկ եթէ նաւապետը առանց վերոյիշեալ պէտքերը ունենալու, լոկ շահախնդրական դիտումով մը պարտք յերկրած է, յայնժամ պատժոյ ալ կ'ենթարկուի :

Նաւ մը ո և է կերպով նաւահանգիստ հասած ատեն, նաւապետը՝ նաւաստեաց վիճակի մասին տեղական Տեսչութեան տեղեկագիր մը տալու պարտաւոր է :

* * *

Ն Ա Ւ Ս Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Եսրիեառի սեճային)

Ապրանքի փոխադրութեան և կամ ուրիշ պէտքի մը համար նաւ մը վարձուած միջոցին, երբ անոր մեկնելուն դէմ կառավարական արգելք մը ծագի, այն ատեն պայմանը չեղեալ կը նկատուի :

Նաւ մը վարձուած ատեն շատ աղէկ կ'ըլլայ որ, երկուստեք բեռնագրեր փոխանակեն, որուն մէջ յիշեն

նաև ապրանաց տեսակը, որակը և քանակը, տիրոջ անունը, զրկուելիք տեղի, ստանալիք անձի, նաւի և նաւապետի անունները և միանգամայն վեասի հատուցում ըլլալը թէ ո'չ . ապա թէ ոչ վերջէն մեծ վէճի նիւթ կ'ըլլայ :

Բեռնագիրը ամէնէն պակաս, չորս օրինակ պէտք է խմբագրել, որուն մէկը ապրանք բեռցնող տիրոջ, երկրորդը ապրանքը յանձնուելիք անձին, երրորդը նաւապետին, չորրորդը նաւի տիրոջ պէտք է տրուի . ասոնց հետ միասին մաքսէն առնուած մաքսաթուղթն ալ պէտք է որ ապրանաց հետ միացուի : Այս բեռնագիրը՝ ապրանքը եթէ ապահովագրութեան դրուած է, անոր համար ալ ընդունելի և վաւերական է :

Ապրանքը նաւամատոյց երբ հասնի՝ եւ ստանալիք անձն ալ ստանալու պատրաստ գտնուի, այն պարագային, նաւապետ ապրանքը անոր յանձնելով ստացագիր մը պէտք է ստանայ, իսկ եթէ ստանալիք անձը պատրաստ չէ, կամ դժկամակի ընդունիլ, յայնժամ նաւապետ զայն մաքսին յանձնելու իրաւունք ունի :

* * *

(Ն Ա Ւ Ս Վ Ա Ր Զ Ռ Ի Թ Ի Ի Ն)

Մէկը՝ եթէ նաւ մը ամբողջովին վարձած է, կըրնայ զայն ամբողջովին լեցնել, պակաս մնացած ատեն, նաւապետ՝ մինչև որ ապրանաց տէրէն արտօնութիւն չառնէ, չի կրնար իր հաշուոյն ուրիշ տեղէ ապրանք բերել լեցնել :

Եթէ նաւի մեկնելուն պաշտօնական արգելք մը ծագի, ապրանքի տէրը՝ իր ապրանքը կրնայ ետ առնել : Բեռնագիրը անպատճառ պայման չէ որ միայն յանձ-

նուողի անուան յատուկ գրուի, այլ կրնայ անոր հրամանին ալ գրուիլ և հրամանի մուրհակներու պէս իրարու ծախուել և հրապարակի վրայ շրջաբերիլ :

Նաև մը ամբողջովին վարձողը՝ մինչև որոշեալ օրին, եթէ նաւը չը լեցնէ և կամ որոշեալ քանակէն պակաս լեցնէ, նաւապետ՝ ալևս առանց լրացման սպասելու, կրնայ մեկնիլ և միանգամայն անկէ վնասի հատուցում պահանջել, ինչպէս նաև փոխադարձաբար :

Ապրանք մը՝ եթէ որոշեալ քանակէն աւելի բեռցուած է, նաւապետ՝ միւսներու համեմատութեամբ աւելիին համար վարձք կրնայ պահանջել. բայց եթէ տէրը՝ պակաս լեցնէ, այս պակասի պատճառաւ չի կրնար վարձքէն բան մը զեղչել :

Իսկ եթէ առանց նաւապետի գիտութեան ապրանք մը բեռցուած է, նաւապետը պէտք է որ անգամ մը զայն տիրոջ ազդարարէ, որ դուրս հանէ, բայց եթէ տէրը չը հանէ, յայնժամ վարձք վճարելու պարտաւոր կ'ըլլայ :

Ճամբորդութեան մէջ՝ եթէ նաև մը խիստ նորոգութեան կարօտի, ապրանաց տէրը պարտաւոր է սպասել մինչև անոր նորոգութիւն, եթէ չուզէ ասոր սպասել, կրնայ սակարկուած վարձքը և տեղի ունեցած ծովային վնասը ամբողջովին վճարելով ապրանքը ետ առնել :

Նաև վարձող՝ նաև զեռ չը մեկնած եթէ տեսնայ որ նաւը ճամբորդելու ապահով վիճակի մէջ չէ, կրնայ իր ապրանքները ետ առնել, և նոյն իսկ եթէ այս առթիւ վնաս մը կրած է, կրնայ վնասի հատուցում ալ պահանջել :

Նաև մը՝ նպակադրեալ տեղը հասած միջոցին, եթէ հոն այդ տեսակ ապրանքի մը մուտքը պաշտօնապէս արգիւրուած ըլլալով՝ հարկ ըլլայ վերադառնալ, այն

ատեն նաւապետը մինակ երթին համար իրաւունք ունի վարձք պահանջել՝ վերադարձին համար ո՛չ :

Նաև մը վտանգուած պարագային՝ եթէ իր մէջ գտնուած ապրանքն ալ հետը վտանգուի, նաւապետը այլևս վարձք պահանջելու իրաւունք չ'ունենար,

Նաւապետ՝ նաև մէջ գտնուած ապրանքը իր վարձքի, տեղի ունեցած վնասի հատուցման և այլ ծովային վտանգի տուժի փոխարէն կրնայ կաշկանդել (հապս իքմէք) մինչև որ ստանայ. իսկ եթէ առանց վերոյիշեալ իրաւունքներ ստանալու՝ ապրանքը տիրոջ յանձնէ, մինչև տասնը հինգ օր՝ այն ապրանաց վրայ առաւելութեան իրաւունք մը ունենալով, կրնայ այն ապրանքէն իր իրաւունքը գանձել :

Ապրանք մը ճամբորդութեան մէջ եթէ նաւապետի անզգուշութեան վնասի մը ենթարկուած է, տէրը կըրնայ դատարանին դիմել և տեղի ունեցած վնասը անկէ պահանջել :

Իսկ եթէ առանց առարկութեան այսինքն վնասը ընդունելով՝ առած է իր ապրանք, այլ ևս վնասի հատուցում պահանջելու իրաւունք չ'ունենար :

Ճ Ա Մ Բ Ո Ր Գ (Յօլքի)

Ճամբորդները՝ ամէն տեսակէտով նաւապետի հրահանգին անսալու պարտաւոր են :

Ճամբու անցազիրը եթէ ճամբորդի անուան յատուկ գրուած է, մինչև որ նաւապետի արտօնութիւն չառնուի, զայն ուրիշի չի կրնար փոխանձուիլ :

Նաև մը իր մեկնելու որոշեալ ժամէն վերջ, այլևս ճամբորդին սպասելու պարտաւոր չէ. ճամբորդը պէտք է որ պատրաստ գտնուի անոր մեկնումին :

Նաւը ճամբուն մէջ վտանգուած և կամ մեկնելու արգելուած պարագային, ճամբորդը կրնայ իր պայմանը ջնջել :

Նաւ մը նորոգութեան կարօտած միջոցին՝ ճամբորդ մինչև անոր լրումը սպասելու պարտաւոր է . ապա թէ ոչ կրնայ մեկնիլ՝ առանց կանխաւ տուած վարձքը ետ պահանջելու իրաւունք ունենալու :

Ճամբորդութեան՝ մէջ եթէ ճամբորդին կերակուրը հատնի, իր ստակով նաւապետէն կրնայ կերակուր պահանջել, և փոխադարձաբար :

Ճամբորդը՝ եթէ իր պէտքէն աւելի ապրանք վերցընէ, աւելիին համար վարձք տալու պարտաւոր է :

* * *



Մ Ո Վ Ա Յ Ի Ն Փ Ո Խ Ա Ռ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

(Իսթիգրազը պահի)

Մովային փոխառնութիւն. — Նաւապետին՝ նաւու պէտքերու համար նաւը և կամ իր մէջի ապրանքները գրաւ դնելով ըրած փոխառնութեան կ'ըսուի, որ պարզ փոխառնութեաննց մէջ ինչ որ տոկոսը իր օրինական սահմանէն չ'անցնիր, մինչդեռ հոս երկուստեք հաւանութեամբ ուղած չափով տոկոս կրնան դնել . այս կերպ փոխառնութիւն մը անպատճառ իր պատկանած նաւային վարչութեանն պէտք է վաւերացած ըլլայ . իսկ եթէ իրենց մէջ խմբագրուած և կամ պաշտօնեան բացակայ իրենց մէջ խմբագրուած և կամ պաշտօնեան բացակայ իրենց մէջ խմբագրուած և կամ պաշտօնեան բացակայ իրենց մէջ խմբագրուած և կամ պաշտօնեան բացակայ իրենց մէջ խմբագրուած է, մինչև տասն օր անպատճառ պէտք է վաւերացնել տալ . ապա թէ ո'չ իր ունեցած առաւելութիւնները կը կորսնցնէ . ահա այս և այսպիսի պատ-

ճառներով այս կերպ փոխառնութիւնները բոլորովին տարբեր օրէնքի մը ուղղութեան կը հետեւին :

Մովային փոխառնութեան մէջ՝ նաւը կամ գործիքները և կամ մէջի ապրանքները գրաւ դրուելով փոխառնութիւն կրնայ ըլլալ :

Նաւը՝ անխտանգ կերպով նաւահանգիստ հասած պարագային, փոխատուն իր տուած ստակը հանդերձ պայմանեալ շահով՝ ամբողջապէս կրնայ ստանալ . մինչև ստանալու օրը ասոնք իր քով գրաւ կը նկատուին :

Իսկ երբ նաւը ճամբուն վրայ վտանգուի, ու գրաւներկայացուցած ապրանքը բնական արկածով մը վրտանգուի, այն ատեն փոխատուի առնելիքը կ'ոչնչանայ, զոր այլ ևս փոխատուն բան մը պահանջելու իրաւունք չ'ունենար :

Այս կերպ պարտամուրհակը հրամանի ալ կրնայ գրուիլ . որ իբրև հրամանի մուրհակ հրապարակի վրայ կրնայ շրջիլ :

Փոխառնութիւնը թէպէտ մէկ անգամուան և մէկ տեղ երթալ դալու համար պայմանուած ըլլայ, բայց մի և նոյն պայմանաւ կրնայ երկրորդ անգամուան համար ալ գործածուիլ :

Վտանգուած նաւը և կամ ապրանքը եթէ ապահովագրուած ըլլայ, այն պարագային փոխատուի ստակը չի կորսուիր . միայն թէ մայր գումարէն աւելի չա՛ (այսինքն տոկոս) չի կրնար պահանջել :

* * *

Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

(Սիդուրա)

Մովային գործառնութեանց մէջ նաւը և իր բեռցած ապրանքները ապահովագրութեան կրնան դրուիլ :

որով այն պարագային ապահովագրութեան պայմանին մէջ պէտք է յիշել Ա. թուականը, օրը և ժամը. Բ. ապրանքի տիրոջ անունը, մտկանունը, բնակութիւնը և գործը. Գ. արկածին տեսակը, այսինքն թէ ինչպիսի պարագայի մէջ հատուցում պէտք ըլլալը. Դ. այս արկածի սկզբնաւորութեան և վերջաւորութեան ժամանակը. Ե. նաւի և նաւավարի անունը. Զ. ապրանքի շրկուելիք տեղին անունը. Է. ապրանքի երթալիք նաւահանգիստը. Ը. ապահովագրողի և ապրանքի տիրոջ մէջ այս առթիւ դատ ծագած ժամանակ յանձնաժողովի միջոցաւ թէ դատավարութեա՛մը, լուծուելուն պայմանը. Թ. և վերջապէս երկուստեք հարկ տեսնուած պայմանները :

Ապրանքի տէրը՝ եթէ գործակատար մըն է ու ապրանայ վիճակէն մանրամասն տեղեկութիւն մը չունի, կրնայ զայն հաւանականութեամբ ապահովագրել :

Ապահովագրուած ապրանքի արժէքը, եթէ կանխաւ որոշուած չէ իրեն հաշուեցոյցին (Ֆաթուրայ) կը նայուի, անոր համեմատ կը գնահատուի :

Ապրանք մը երբ անգամ մը ապահովագրուած է, երկրորդ անգամ այլ ևս ուրիշի մը չի կրնար ապահովագրուիլ. ապա թէ ոչ երկրորդ անգամուանը անվաւեր կ'ըլլայ :

Ապահովագրուած ապրանքը տակաւին որոշեալ նաւահանգիստ չը հասած, ճամբուն մէջ ուրիշ ապրանքի մը հետ փոխանակուած ատեն՝ փոխանակուած ապրանքն ալ դարձեալ ապահովագրուած կ'ըլլայ :

Ապահովագրեալ ապրանքը եթէ որոշեալ տեղէն աւելի հեռուն տարուի, սոյն հեռաւորութեան միջոցին մէջ տեղի ունեցած արկածին՝ ապահովագրողը պատասխանատու չէ. բայց եթէ նաւը պարտաւորուած է այդ

տեղեր չըջելէն յետոյ վերադառնալ. այն ատեն ապահովագրողը պատասխանատու կը նկատուի :

Ապրանքի տէրը՝ ապրանքը ճամբայ հանելէն վերջ, եթէ զայն ապահովագրել տայ և դիպուածաւ ապրանքն ալ ճամբու մէջ արկածի ենթարկուի, այն ատեն խնդիրը կը ձիւղաւորի, եթէ արկածը իմանալէն վերջ խաբէութեան դիտաւորութեամբ ապահովագրել տուած է, այն պարագային յիշատը պահանջելու իրաւունք չ'ունենար. իսկ եթէ անդիտակցաբար ապահովագրել տուած է, կրնայ յիշատ պահանջել. իսկ եթէ հասած աղէկ կամ գէշ անստոյգ լուրի մը վրայ հաւանականութեամբ ապահովագրել տուած է, այն ատեն դարձեալ յիշատը պահանջելու իրաւունք կ'ունենայ :

* * *

ԱՐԿԱԾՆԵՍԱԿ ԱՊՐԱՆՔԻՆ ՉԵՌՆԹԱՓ ԸԼԼԱՍ

(ԹԼԻԲԻ ԷՇԵԱ)

Ապրանք մը ու է կերպով ճամբուն մէջ արկածուած միջոցին, եթէ յիշատը բովանդակ արժէքի $\frac{3}{4}$ էն աւելի ըլլայ, ապրանքի տէրը ուզէ՝ ամբողջ ապրանքը ապահովագրողին ձգելով՝ արժէքը կը պահանջէ, ուզէ կրնայ մինակ յիշատուած մասին արժէքը պահանջելով մնացեալները ետ առնել :

Ապրանքի տէրը՝ պատահած արկածի, հեռաւորութեան համեմատ, վեց ամսէն առաւել մինչ երկու տարի պէտք է կամ ապրանքէն ձեռնթափ ըլլայ, և կամ տեղի ունեցած յիշատը պահանջէ :

Ապրանքի տէրը՝ արկածը իմանալուն պէս մինչև երեք օր պէտք է եղելութիւնը ապահովագրողին հաղորդ

դէ, և ապա անոր համեմատ կարգադրութիւն մը ընէ :
 Ապրանքի տէրը եթէ ճամբորդութեան մէջ ինք
 միասին գտնուի, արկածի ատեն ըստ կարելւոյն արկածին
 առաջըր առնող միջոցներ կրնայ հայթայթել, և և անոր
 չը յաջողած պարագային՝ տեղի ունեցած ծախսերը երդ-
 մամբ (այսինքն ճշդութեան մասին պէտք է երդուէ),
 կրնայ ապահովագրողէն պահանջել :

Այս առթիւ ապահովագրողի և ապրանքի տիրոջ
 մէջ եթէ դատ մը ծագի, դատարանը խնդրոյ ստուգա-
 բանութեան թափանցելէն առաջ, ապահովագրողէն նախ
 պահանջուած գումարը կանխիկ ուղելով՝ առժամանակ-
 եայ կերպով ապրանքի տիրոջ կը յանձնէ, բայց որպէս
 ղի պահանջատէրը ապագային անիրաւ ելած միջոցին՝
 առած ստակը դիւրին ըլլայ ետ վերադարձնել, այս
 մասին դատարանը անկէ ապահով երաշխաւոր մը կ'առ-
 նէ, անկէ վերջ նորէն խնդրոյ ստուգաբանութեան կը
 մտնայ :

Ճամբուս վրայ ապրանքը եթէ ծովահէններէն (գուր-
 սան) կողոպտուի, ապրանքին տէրը և կամ նաւապետը
 կրնան անոնց յարմար բան մը տալով ապրանքը փրկել
 և ի վերջոյ զայն ապահովագրողէն պահանջել :

* * *

Ծ Ո Վ Ա Յ Ի Ն Վ Ն Ա Ս

(Ա վ ա ռ ի յ է , խ ա ս ա ռ ա թ թ ր պ ա հ ռ ի յ է)

Ծովային վնասը երկու կերպ է . Ա. Մեծ և ընդ-
 հանուր (խասարաթը ոսմուսիյի վի ճեսիմն) : Բ. Սովո-
 բական և մասնաւոր (խասարաթը ատիյի վի խուսուսիյի) :
 Ա. Մեծ և ընդհանուր վնաս . — Նաւը փոթորկի

հանդիպած միջոցին՝ նաւու փրկութեան և միւս ապրա-
 նաց ապահովութեան համար, նաւապետի կողմէ ծով
 նետուած ապրանաց առթիւ տեղի ունեցած վնասն է.
 այս վնասը նաւին կէսի արժէքն ալ միասին ընկերաց-
 նելով ապրանաց տէրերու և նաւապետին վրայ և ապ-
 րանաց արժէքի համեմատութեամբ կը բաժնուի . զոր
 օրինակ, ենթադրենք որ տեղի ունեցած վնասը 100
 Օսմ. ոսկի ըլլայ, նաւը արժէ 200 լիրա, չը վնասուած
 ապրանքներէն մին արժէ 100 լիրա, միւսն ալ 100
 լիրա, վնասած ապրանքն ալ 100 լիրա . արդ համեմա-
 տական հաշուի դնելով, նաւուն կէսը կ'արժէ 100 լիրա,
 որով վնասի 1/4ը՝ որ է 25 ոսկի՝ նաւի տիրոջ կը պատ-
 կանի, մնացեալ 75 լիրա վնասէն 25 լիրան մէկ ապ-
 րանքի տիրոջ, 25 լիրան միւս ապրանքի տիրոջ, և 25
 լիրան ալ միւս բուն վնասուած ապրանքի տիրոջ, որով
 ըսել է թէ բուն վնասուած ապրանքի տիրոջ ապրանքը
 թէ և 100 լիրա էր, բայց 25 լիրա իր բաժին վնասը
 զեղչելէն վերջ, մնացեալ 75 լիրան միայն կրնայ ետ
 պահանջել :

Բ. Սովորական մասնակի վնաս . — Ո և է ապրան-
 քի մը մինակ իրեն հասած վնասն է . որուն ոչ նաւի
 տէր և ոչ ալ միւսներ մասնակցելու պարտաւոր չեն :
 Բնական է որ այս տեսակ վնաս մը բնական պատճառէ
 մը և ինքնաբերաբար յառաջ եկած պէտք է ըլլայ, իսկ
 եթէ պատահած վնասը նաւապետի անզգուշութենէն և
 կամ թէ նաւի անկանոնութենէն յառաջ եկած է, այն
 ատեն նաւին տէրը տուժելու պարտաւոր է . բայց եթէ
 վտանդի մը առթիւ նաւ թեթեւեղելու դիտաւորու-
 թեամբ ծով ձգուած է և կամ ոչնչացուցուած է, այն
 պարագային վնասը ընդհանուրին կը պատկանի :
 Երկու նաւ իրարու բաղխած միջոցին, եթէ այս

բողիսուսը դիպուածաւ եղած է, վնասը մինակ վնասուող նաւին կը պատկանի, միւս նաւը տուժելու պարտաւոր չէ. իսկ եթէ բողիսուսը երկուքէն մէկու նաւապետի անզգուշութենէն յառաջ եկած է, այն ատեն տեղի ունեցած վնասը անզգուշութիւն ընող կողմը տուժելու պարտաւոր է, և եթէ երկու կողմի նաւապետներէն որու անզգուշութենէն տեղի ունեեալը անորոշ ըլլայ, յայնժամ երկու վնասեալ նաւերու արժէքը նկատի առնելով, մէկէն միւսի վնասը և փոխադարձաբար տուժել կը տրուի :

Ծովային վնասի հատուցումը պահանջելու համար, եթէ վնասը մեծ և ընդհանուր արկածի մը առթիւ տեղի ունեցած է, պէտք է որ նաւի բովանդակ ապրանաք գնի մէկ հարիւրերորդէն աւելի ըլլայ. այսինքն նաւը եթէ արժէ 100 ոսկի և մէջի պարունակած ապրանքը արժէ 200 ոսկի, ամբողջի արժէքը կ'ընէ 300 ոսկի, մէջի գտնուած ապրանաք ու է մէկուն պատահած վնասը մինչև որ 3 առ 10% ոսկիէն աւելի չըլլայ, վնասի հատուցում չի կրնար պահանջել :

Ու է վտանգի մը առթիւ, նաւապետը եթէ պէտք զգայ ծով ապրանք նետել, պէտք է որ ապրանաք տէրերու (եթէ ներկայ են) և իր նաւաստիներէն գլխաւորներու կարծիքը ստանայ. եթէ ասոնց մէջ համաձայնութիւն մը չը գոյանայ, իրեն և իր գլխաւոր նաւաստիներու կարծիքը վեր դասելով, ըստ այնմ կըրնայ վարուիլ :

Ծով նետուելիք ապրանքները պէտք է սկսիլ նախ՝ ծանր կշիռ ու քիչ արժէք ունեցող ապրանքներէն և հետզհետէ աստիճանաբար դէպի սուղը երթալ :

Ապրանքը ծով նետելէն վերջ, նաւապետը տեղեկագիր մը պէտք է խմբագրէ և ներկայ եղողներուն ստո-

րագրել տայ, անկէ վերջ նաւը ու է նաւահանգիստ մը հասած միջոցին անմիջապէս տեղական կառավարութեան հաղորդէ և քննութիւն խնդրէ :

Տեղական կառավարութիւնը՝ նաւապետի ղեկուցումին վրայ՝ տեղի ունեցած դէպքը քննելու և վնասներու մասին տնօրէնութիւն մը ընելու համար, անմիջապէս քննիչներ կը կարգէ. իսկ եթէ նաւը ընկերութեան մը կը պատկանի, անոր քննիչներն ալ կը միանան : Այս քննիչները պաշտօն կ'ունենան նաև իւրաքանչիւր դիմողի վնասը և վնասի պարագան քննել և զարժանը անօրինել :

* * *

ԺԱՄԱՆՅՔ ԵՒ ԱՆԼՍՅԵԼԻ ԵՂԱԾ ԴԱՏԵՐԸ

(Միւրիւրի գէման վէ մեամու օլմեհան ատվար)

Ծովային փոխառութեան (խսիգրագը պահրի) առթիւ տեղի ունեցած դատերը, մինչև հինգ տարի լսելի են, անկէ վերջ անլսելի կ'ըլլան :

Նաւի շինութեան, պէտքի և կերակուրի վերաբերեալ տրուած ապրանաք արժէքը՝ մինչ երեք տարի կրնայ պահանջուիլ, անկէ վերջ այլևս անլսելի կ'ըլլայ :

Նաւի և նաւաստիներու վարձքը, մինչև մէկ տարի կրնայ ուղուիլ, անկէ վերջ անլսելի է :

Եթէ այս ժամանակամիջոցի մէջ՝ գործի տէրը դատի դիմած է, սակայն չը հետապնդելու համար խնդիրը վճռական կերպարանք մը ստացած չէ. միւրիւրի գեմանը վերջընթեր գործողութեան թուականէն կը սկսի թանիլ :

Ապրանքի տէրը՝ իր ապրանքին վնասուած ըլլա-

լը տեսնելով հանդերձ, եթէ առանց վնասի հատուցման բողոք (փրօքստ) ընելու և կամ թէ առանց պարզ կերպով բողոքելու, ուղղակի կամ անուղղակի հաւանութեամբ զայն ընդունէ, այլևս ո՛չ նաւապետէն և ո՛չ ալ ապահովագրողէն վնասի փոխարէն չի կրնար պահանջել :

Վերոյիշեալ պարագայից առթիւ վնասի հատուցման պահանջումը (փրօքստ) 48 ժամուան մէջ պէտք է ընել :

Պաշտօնական փրօթէստէն վերջ 21 օր նորէն խընդրագիր մըն ալ պէտք է տալ գործի պատկանած դատարանին, և հակառակորդ կողմը դատի կոչել, ապա թէ ոչ՝ այս ժամանակը անցընելէն ետքը, այլևս փրօթէստին կարեւորութիւն չի մնար :

Բաղխումի արկածին և այլ դէպքերու առթիւ՝ ապրանքի տիրոջ եւ կամ ճամբորդին ու նաւապետի մէջ տեղի ունեցած վէճերը, Տեղային կամ Նաւային Վարչութեան (յիման տայիրեսի) մէջ կրնան հաշտութեամբ լուծուիլ. հոն համաձայնութիւն չը գոյացած պարագային՝ երկուստեք կրնան դատարան դիմել :

9.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

(Ուսույր մուհաֆեւաթը Հուգուգիյէ)

Դատարանին բողոքուած մէն մի խնդրոյ մասին՝ զատ զատ խնդրագիր պէտք է տալ . ապա թէ ոչ քանի մը իրարմէ տարբեր խնդիրներ միացնելով, մէկ բողոքագիր տալ անընդունելի է :

Ամէն մէկ դատը բողոքեալի (միւստայի ալիյի) ընակած տեղի դատարանին պէտք է բողոքել . իսկ եթէ բողոքեալը առժամանակեայ կերպով գտնուի հոն, այն ատեն բողոքողը ուզէ՝ անոր գտնուած առժամանակեայ տեղւոյն դատարանին կը դիմէ, ուզէ՝ բողոքեալի բուն ընկալւայրի դատարանին դիմելով՝ հոն դատի կը կոչէ: Զոր օրինակ, մէկ մը Վան փոխառնութիւն և կամ գործողութիւն մը ընելէն վերջ երբ Պոլիս գայ և նոյն իսկ շատ տարիներ ալ Պոլիս հաստատուած ըլլայ . բողոքողը ուզէ բողոքեալը Վան կը կոչէ, ուզէ փոխանորդ մը կարգելով Պոլսոյ մէջ կը բողոքէ: Մէյ մըն ալ վէճի նիւթ եղող առարկան (մեկնալի իստաա), ո՛ւր գտնուի և կամ, թէ ստակ և թէ ուրիշ ո և է բան մը և կամ խոստում մը, ուրտեղ որ տալ խոստացուած է անպատճառ՝ այն տեղի դատարանին պէտք է դիմել :

Խնդրոյ մը դատավարութեան առթիւ, եթէ բուն խնդրէն ուրիշ նոր տարբեր խնդիր մը ծագի, ու ծագած նոր խնդիրը առանց լուծուելու բուն խնդրոյ

լուծումը անկարելի ըլլայ, այն ատեն դատարանը՝ նախ ծագած նոր խնդիրը կը լուծէ և ապա բուն խնդրոյն կ'անցնի :

Ինչպէս նաև դատարանը՝ ինքնակի և կամ բողոքեալի առարկութեան վրայ, եթէ խնդրոյ լուծումը իր ձեռնհասութենէն վեր գտնայ, գործը իրմէ կը մերժէ, և եթէ խնդրոյն մէջ պատիժ հրաւիրող նենգութիւն և կամ խարդախութիւն (հիլլէ, սախաքարըզ) նշմարէ, այն ատեն գործը Պատժական դատարանին կը ղրկէ : Գործը այլևս Պատժական ճիւղի մէջ կ'անցնի՝ Հուգուգի մէջ կանկ կառնէ, մինչև որ Պատժական Ատենին մէջ խնդիրը չը վերջանայ, Հուգուգի մէջ գործին չի կրնար նայուիլ :

Դատարանին խնդրագիր տրուելէն անմիջապէս վերջ, դատարանը՝ որոշեալ օր մը երկուստեք դատավարութեան գալու համար երկու կողմին ալ կոչնագիր (ճիւլցամ) կը ղրկէ. դատարանի դէտը (միւսպաշիր) կոչնագիրը տանելով, անոնց կը հաղորդէ (քեպլիդ իտեր) եթէ իրենք պատրաստ են՝ իրենց կը յանձնէ. իսկ եթէ իրենք ներկայ չեն տան և կամ թաղապետին կը յանձնէ. իսկ եթէ կոչուած անձը պաշտօնեայ մըն է՝ անոր մեծին կը յանձնէ, որոյ մէկ օրինակն ալ թաղապետին (մահայե մըխարի) վաւերացնել տալով (քաստիք իքտիքերք) ետ կը վերադարձնէ ու դատարանին կը յանձնէ :

Դատավարութեան որոշեալ օրը՝ եթէ բողոքողը չը ներկայանայ, իր տուած խնդրագիրը կը մերժուի (խաքիտաք քետտ օլուսուր, վի եախուտ մուվագաքէն հագքք մուհարքեմեհին սուգուքքնա գարար վերիլիր) . այսինքն բողոքողը մինչև որ կրկին բողոքագիր և ծախս չը տայ, չի կրնար վերստին դատը շարունակել :

Իսկ եթէ որոշեալ օրին բողոքեալը չը ներկայանայ,

դատարանը անոր բացակայութեան փոխանորդ մը (վիքիլի մուսախախար) կը դնէ և դատը կը նայի անոր ներկայութեան, և անոր համեմատ բացակայութեան (չլիեապէն) վճիռ կուտայ :

Հոս՝ հարկ է ըսել որ Շէրիէի դատարանին մէջ, մի և նոյն եղանակաւ բողոքեալին երեք անգամ կոչնագիր կը ղրկուի. եթէ ասոնց վրայ ալ չը գայ, չորրորդ անգամ ծանուցագիր (մուխքիքի) կը ղրկուի. այս անգամ ալ եթէ չը գայ՝ այն ատեն բացակայութեամբ կը դատուի, բացակայութեան փոխանորդ մը կարգելով : Հոս բողոքող կողմը եթէ չը գայ, Նիզամիլի պէս խնդրագիրը չի մերժուիր, երբ որ ուզէ, կրնայ գալ իր դատը շարունակել :

Հուգուգի դատավարութեան ընթացքին մէջ, բողոքեալը՝ եթէ խնդիրը խոստովանի, դատարանը անոր խոստովանութեանը վրայ վճիռ կուտայ. եթէ ուրանայ, դատաւորը բողոքողէն հաստատութիւն՝ ապացոյց կը պահանջէ. խնդիրը երբ հինգ հազար ղրշ. էն վեր է՝ այս հաստատութեան ապացոյցը գրաւոր պէտք է ըլլայ. իսկ եթէ անկէ պակաս է, վկայութիւն կրնայ ընդունուիլ. եթէ բողոքողը ո'չ գրաւոր ապացոյց ունի, և ո'չ ալ վկայ, բողոքեալին կրնայ երդում առաջարկել :

Բացառիկ ըլլալով՝ մերձաւոր ազգականներու մէջ՝ ինչպէս նաև գրեւ կարգալ չը գիտցող գիւղի մը մէջ, տեղի ունեցած դործառնութիւնք ալ եթէ 5000 ղրշ. էն վեր ըլլան նոյն իսկ, առանց գրաւոր ապացոյցի՝ վկայութիւն կրնայ ունկնդրուիլ :

Բողոքեալը՝ երբ խնդրոյ էութիւնը խոստովանի, բայց փոխարէն վճարած ըլլալը առարկէ, այդ առարկութիւն ընդունելի կրնայ ըլլալ՝ այս անգամ հաստատութիւնը իրեն կը պատկանի, եթէ դատը թուղթի վրայ յենեալ է (սեհետե միւսքեհիտեհն), առարկութեան

հաստատութիւնն ալ թուղթով պէտք է ըլլայ, իսկ եթէ առանց թուղթի է, վկայ կրնայ բերել. մէյ մըն ալ բողոքեալը որչափ որ ստորագրութիւնը իմս է, բայց արժէքը առած չեմ կամ փոխ անուամբ (մուկագաա) է առարկէ, այդ պարագային վկայ չընդունուիր կամ թուղթ պէտք է ներկայացնէ և կամ բուն բողոքողին (իքրարընա քեազիպ, վի եա մուկագաաքէն օլմատըղընա) երդում առաջարկէ, այսինքն իր պահանջի ճշմարտութեան մասին բողոքողը պէտքէ երդում ընէ :

Բողոքողը և կամ թէ բողոքեալը, երկուքն մէկը եթէ իր ստորագրութիւնը ուրանայ, յայնժամ դատարանի միջոցաւ գրաքննիչ յանձնաժողով մը կը կազմուի, որոյ մէկ անդամը բողոքող կ'ընտրէ, միւսն ալ բողոքեալը. յետոյ երկուքը միանալով համահաճութեամբ երրորդ մը կ'ընտրեն. իսկ եթէ երրորդի ընտրութեան մէջ իրենք չը համաձայնին՝ դատարանը ինք կ'ընտրէ. այս յանձնաժողովը՝ ուրացող անձի ուրիշ տեղ գտնուած վաւերական թուղթերը և այլ գրութիւնները կը բերէ. իրեն ալ գիր գրել կուտայ, եւ վերջապէս (քարպիգի խաղըռ ու խարքմ) պէտք եղած քննութիւնները կատարելէն ետք, իր տեղեկագիրը դատարանին կը մատուցանէ. դատարանն ալ ըստ այնմ կը վճռէ :

Գրաքննիչ յանձնաժողովի տուած որոշումը չը յարգող կողմը, կրնայ ասոր դէմ բողոքելով նորոգ քննութիւն պահանջել, եւ նոյն իսկ անդամներու պաշտօնանկութիւն պահանջել՝ ուրիշ մը ընտրելու պայմանաւ :

Գրածոյ թուղթեր (եվրագ) երկու կերպ են՝ պարզ եւ վաւերացեալ. պարզ անոնք են՝ որոնք գործի տէրերու մէջ կը խմբագրուի, առանց նօտարին (մուգապիլաք մուհարրիքին) վաւերացնել տալու. երկրորդ վաւերացեալ թուղթեր անոնք են՝ որոնք նօտարի վաւերացնել կը տրուի, ստորագրող անձը վաւերացեալ թուղթի մը մէջ եղած իր ստորագրութիւնը չի կրնար ուրանալ, եթէ ուրանայ, նշանակութիւն չունենալով դատարանը անմիջապէս վճիռ կուտայ :

Գրածոյ թուղթեր (եվրագ) երկու կերպ են՝ պարզ եւ վաւերացեալ. պարզ անոնք են՝ որոնք գործի տէրերու մէջ կը խմբագրուի, առանց նօտարին (մուգապիլաք մուհարրիքին) վաւերացնել տալու. երկրորդ վաւերացեալ թուղթեր անոնք են՝ որոնք նօտարի վաւերացնել կը տրուի, ստորագրող անձը վաւերացեալ թուղթի մը մէջ եղած իր ստորագրութիւնը չի կրնար ուրանալ, եթէ ուրանայ, նշանակութիւն չունենալով դատարանը անմիջապէս վճիռ կուտայ :

* * *

ՌԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՃԻՌԻ ԳԷՄ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

(Հիււմի դիեապի ալէյիցեէ իյքիւագ)

Գատարանի տուած վճիռը, թէ՛ ներկայութեան (վիճահէն) ըլլայ թէ՛ բացակայութեան (դիեապիէն)՝ անպատճառ չանող կողմը այս մասին տրուած վճռագիրը (իլալ) երկու օրինակ առնելով՝ (եթէ անձինք շատ են՝ վճռագրի օրինակն ալ նոյնչափ օրինակ պէտք է ըլլայ) մէկ օրինակը միւս կողմին հաղորդէ (քեպիլի իքմէք), միւս օրինակն ալ իր քով պահէ, վասնզի մինչև որ անոր չ'հաղորդէ՝ անոր գործագրութիւնը չի կրնար պահանջել :

Բացակայութեան վճիռ ընդունողը, որ է դատ կորսնցնողը՝ եթէ տրուած վճռին չը համակերպէ, վըճռագիրը իրեն յանձնուած օրէն սկսեալ՝ տեղւոյն հեռաւորութեան համեմատ, մինչև 31 օր՝ կրնայ ասոր դէմ իր ունեցած առարկութիւնները (իյքիւագաք) գրաւորապէս դատարանին զեկուցանել, ու նորոգ դատաւարութիւն պահանջել :

Գատարանը՝ այս առարկութեան (իյքիւագը ալի հիւքմ) վրայ, երկու կողմը՝ նորոգ դատաւարութեան կը կոչէ. երկուստեք ունկնդրելէն վերջը՝ կամ նախորդ բացակայութեան վճիռը կը հաստատէ, և կամ թէ զայն չ'նշեցով՝ նորոգ վճիռ կուտայ :

Առարկութիւն ընողը (միւքիլիք) եթէ այս անգամ

ալ դատավարութեան չը ներկայանայ, տուած խնդրագիրը կը մերժուի (խսթխտաց րէտտ օյուուուր) . որով վերջէն այս մասին այլեւս երբեք առարկութիւն մը, բողոք մը ընելու իրաւունք չ'ունենար. եթէ միւս կողմը՝ որ է բուն բողոքողը (մխթերիզ իւյ ալէյն) չի գայ, այս անգամ ալ անոր բացակայութեան վճիռ կը տրուի:

Բացակայութեան վճռին դէմ, իր օրինական ժամանակամիջոցի մէջ եթէ առարկութիւն ըլլայ, անոր դործադրութիւնը կը դադրի՝ մինչեւ դատի վախճանը:

Երկուքի դատավարութեան մէջ՝ երկու կողմէն մէկը և երբեմն ալ դատարանը ինքնաբերաբար՝ եթէ գործին մէջ ուրիշ երրորդի մը (շախախ սալխա) առնչութիւն նշմարէ, կրնայ զայն կոչել և դատի խառնել: Ինչպէս նաև այն երրորդ անձը, երբ դատին մէջ իր շահուն դպչող կէտ մը նշմարէ, կրնայ բուն դատի գլխունուած դատարանին դիմել, խնդրագիր մը տալով, ինքն ալ դատին խառնուել (տախիլի տալա օյմագ):

Վճիռները երկու կերպ են, մէկը անմիջական ու առժամանակեայ (իճրայի մուվագաթին), և միւսը պարզ (առի):

Դատարանը՝ բանի մը վերահաս վտանգի առաջքն առնելու համար, անմիջական որոշում կրնայ տալ. ուրուն վրայ Իճրայի կողմանէ շահող կողմէն երաշխաւոր մը կառնուի և այդ վէճի եղած նիւթը առժամանակեայ կերպով իրեն կը յանձնուի մինչև խնդրոյն վախճանը:

* * *

Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն (Խսթինաճ)

Նախնական դատարանէն (պիտայիք մահքիմեսի) տրուած հինգ հազար զրշ. էն վեր արժող և կամ տարե-

կան հինգ հարիւր զրշ. վարձք բերող կալուած, ապրանքի մը և կամ գին որոշող (գիյմէթի դայրի մուային) բանի մը յանձնուելու, խանութի մը, տան մը և այլ տեղի մը պարպելու (թախիլի) տաթիւ տրուած վճիռներ կրնան վերաքննուել (գապիլ խսթինաճ տիլիք):

Անկէ պակաս դատեր վերաքննութիւն չեն կրնար ըլլալ: Դատի մը վերաքննութիւնը պահանջել կարենալու համար պէտք է որ հակառակորդ կողմէն վրձնագրին օրինակը իրեն հաղորդուած ըլլայ, վերաքննութիւն պահանջողը պէտք է որ (տեղի հեռաւորութեան համեմատ) մինչև 61 օր իր առարկութիւնները երկու օրինակ գրելով վերաքննիչ ատեանին յանձնէ, որոյ մէկ օրինակը միւս հակառակորդին կը շրկուի:

Վերաքննութիւն պահանջողը դատարանին խնդրագիր մատուցանելէն առաջ՝ պէտք է որ միւս կողմի այս առթիւ ենթակայ ըլլալիք մլասը և դատական ծախսերը տուածելու համար նօտարի միջոցաւ վաւերացած երաշխաւոր մը ցուցնէ: Եթէ երաշխաւոր չունենայ՝ կրնայ նոյնչափ ստակ եւ կամ աւանդ ձգէ դատարանի մնտուկը, ապա թէ ոչ՝ առանց երաշխաւորութեան վերաքննութիւն չի կրնար պահանջել:

Ո և է տեսակ վճիռի մը դէմ, վերաքննութեան բողոք եղած պարագային՝ նախկին վճռի զօրութիւնը մինչև խնդրոյ վախճանը առժամանակեայ կերպիւ կը դադրի:

Դատարանը՝ երկուստեք առարկութիւնները ունկնդրելէն վերջ, եթէ մէջ բերուած առարկութիւնները օրինաւոր չը գտնայ, նախնական դատարանի տուած վճիռը կը հաստատէ (թաստիգ իտիք):

Իսկ եթէ առարկութիւնները բանաւոր գտնայ նախորդ վճիռները կը ջնջէ, ինք նորէն դատավարութեան

կը ձեռնարկէ և ըստ այնմ զարժանը կը վճռէ: Այս պարագային մէջ՝ ճիշդ նախնական դատարանին պէս դրեապիսն և այլ ամէն գործողութիւններ կրնայ կատարել:

* * *

ՎԵՐԱԿԱՅՈՒՄ (Եյասէի մուսափէմ)

Վճիռի մը վրայ բաւական ժամանակներ անցնելէն յետոյ երբ նորա յենակէտ եղող (եսպայի միւսիւպիսի) ապացոյցին կեղծ և կամ շինծու ըլլալը և կամ սխալ անձի և սխալ հիման մը վրայ որոշում տրուած ըլլայ, և կամ թէ տրուած վճիռը գումարէն աւելի կամ պակաս և կամ սխալ տրուած ըլլալը երեւան գայ՝ այն պարագայից մէջ վնասուող անձը կրնայ նորոգ բողոք ընել ու դատ բանալ:

Դատի վերակոչումը՝ անկէ առաջ տրուած վճռագրի գործադրութեան արգելք մը չի կրնար ըլլալ:

Դատի վերակոչում պահանջող՝ բողոքեալի ապագայի կրելիք վնասի հատուցման ապահովութիւն մը ըլլալու համար, դատարանի սնտուկին 500 ղուրուշ աւանդ պէտք է ձգէ:

Յետ դատավարութեան եթէ վերակոչում պահանջող շահի նախորդ տրուած վճռագրի տրամադրութիւն ջնջելէն զկնի աւանդ ձգած ստակն ալ ետ կառնէ:

Բողոքարկուն եթէ դատը չի շահի, վերոյիշեալ աւանդ եղած ստակը, իբրև վնասագին բողոքեալին կը տրուի:

Գործ մը անգամ մը վերակոչմամբ (իյաստիքէն) դատավարութիւն կատարուելէն վերջ, այլ ևս ինչ պատճառաւ ալ որ ըլլայ, վերստին չի կրնար վերակոչում պահանջուիլ:

* * *

ՎՃՈՒՍԱԲԵԿՈՒԹԻՒՆ (Թէմիզ քալասը)

Նախնական դատարանէն, ինչպէս նաև վերաքննիչ ատենէն տրուած ամէն կերպ վճիռները, ինչպէս նաև բացակայութեան վճիռներ (այս բացակայութեան վրձիւրը, իրեն 31 օր առարկութեան ժամանակամիջոցը լրացնելէն վերջ մինչև 90 օր Թէմիզ կրնան ըլլալ. որով ըսել է թէ բացակայութեան տրուած վճռի մը վճռաբեկութեան դատ վարելու միջոցը 120 օր է) 90 օրուան ժամանակամիջոցի մէջ կրնայ վճռաբեկութեան բողոքել:

Տեղի հեռաւորութեան համեմատ այս ժամանակամիջոցն ալ նոյնչափ երկայն կըլլայ:

Դատ մը թէմիզ ընելու համար ճիշդ վերաքննութեան (իսքիմաֆ) պայմաններուն համեմատ, թէմիզ կրնայ ընել և միւս կողմի վնասի հատուցման համար ալ երաշխաւոր պէտք է ցուցնէ:

Վճռաբեկութեան համար տրուած խնդրագիրը, եթէ օրինական պայմաններէ թերի ըլլայ, զայն լրացնելու համար դատարանէն խնդրարկուին քանի մը օր ալ ժամանակ կը տրուի:


Վճռաբեկ ատենի մէջ, միւս դատարաններու պէս դատավարութիւն չի կատարուիր, այլ երկուստեք եղած առարկութիւնները զբաւորապէս կը կարգացուի:

Դատարանը՝ երկուստեք թուղթերը կարգալէն վերջ, եթէ տեղի ունեցած բողոքը բանաւոր գտնայ՝ տրուած վճիռը կը բեկանէ (նազզ իսիք) գործի լրացում, և դատավարութիւնը վերստին իր պատկանած դատարանին կը վերադարձնէ. այսինքն վճիռը եթէ նախնական դատարանէն դրուածէ նախնական դատարան

նին և եթէ վերաքննիչ ատենէն տրուած է վերաքնն-
նիչ ատենին կը վերադարձնէ :

Վճուարեկ ատենը որ դատարանի վճիռը որ բեկած
է, երկուստեք հոն կերթան, նորոգ դատավարութիւն
կը կատարուի. թերի եղած կողմերը կուղղուի և շատ
անգամ ալ դատին գոյնը բոլորովին կը փոխուի : Անոր
համեմատ նոր վճուագիր մը կը տրուի :

Դատարանի տուած այս երկրորդ վճուագրի տրա-
մագրութիւնը չի յարդող կողմը կրնայ վերստին վըճ-
ուաբեկ ատենին (քեմիզ մահքեմեսի) դիմել :



Դ.

ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

(ճեզա գանուռչերի)

Պատիժը երեք տեսակ է : Ա. Թեթև յանցանք (գա-
պանաք) : Բ. Ծանր յանցանք և ոճիր (անհնա) : Գ.
Ոճիր և եղեռն (անայեք) :

Ա. Թեթև յանցանքի պատիժը 24 ժամ և առ առա-
ւելն մինչև մէկ շաբաթ բանտարկութիւն և կամ թէ
փոխան բանտարկութեան առ առաւելն մինչև 100 շրշ.
տուգանք (անգայի նագոյի) է :

Բ. Ծանր յանցանքի և կամ ոճիրի (անհնա) պա-
տիժը՝ մէկ շաբաթէն առ առաւելն մինչև երեք տարի
բանտարկութիւն և մէկ ոսկիէն աւելի տուգանք է .
երբեմն ալ գործի ծանրութեան համեմատ, ասոնց հետ
միասին ալ առժամանակեայ աքսոր (նեֆի մուվագգաք)
և պաշտօնազրկութիւն (մեմուրիէրտեմ քարտ) կրնայ
վճուուիլ :

Գ. Ոճիր և եղեռնի (անայեք) պատիժը, գլխա-
տոււմ (իտամ), ցմահ բանտարկութիւն (մխեպետտեմ
քիւրեք), 15 տարի բանտարկութիւն (մուվագգաքեմ քիւ-
րեք), մշտատե աքսոր (նեֆի մխեպպետ), յաւէտ պաշ-
տօնի զրկում (մխեպպետեմ մեմուրիէրտեմ մահրուսիէք)
և քաղաքայիութեան իրաւունքէն զրկում (հուգուգը
մետեմիյտեմ իսգաք) է :

Կ Ա Շ Ա Ռ Ք (Րիւզլէք)

Ով որ իր գործը յաջողցնելու համար՝ պաշտօնէի մը նուէր մը տայ, կաշառք կը համարուի. տուողը, առնողը և միջնորդողը երեքն ալ հաւասարապէս միեւնոյն պատժոյ կենթարկուին, և կաշառք առնուած բանին կրկինին չափ ալ տուգանք կ'առնուի:

Ասոնցմէ ով որ անմիջապէս դայ կառավարութեան հաղորդէ, ինք պատժէ կ'ազատուի:

* * *

ՍՈՒՏ ԵՐԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

(Եալան եւմին վէ եալան օսեառք)

Առեւտրական դատերու մէջ (տավիի ատիետէ) սուտ վկայութիւն (եալան շահատէք) ընող անձը, վեց ամիսէն մինչև մէկ տարի բանտարկութեան կ'ենթարկուի. եթէ ստակ առնելով սուտ վկայած է, առած ստակի կրկինն ալ տուգանք կ'առնուի:

Բռնի կերպով սուտ վկայութիւն ընել տուողը և կամ թէ բռնի կերպով վկայութեան էտ կեցնող անձը, սուտ վկային կրած պատիժը ինք կը կրէ:

Ինչպէս նաև առեւտրական գործոց մէջ՝ դատարանի մէջ սուտ երդում ընող անձը, վեց ամիսէն պակաս չըլլալու պայմանաւ՝ գործին համեմատ բանտարկութեան կ'ենթարկուի:

* * *

ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ (ԼՔրիւս)

Ով որ մէկու մը վրայ ամբաստանութիւն ընէ, բայց յետ դատավարութեան ամբաստանութեան սուտ ըլլալը

հաստատուի, զայն զրպարտողը ենթադրենք թէ ամբաստանութիւնը ապացուցուած ըլլար, ամբաստանեալը ինչ պատժոյ որ պիտի ենթարկուէր՝ անիկա՝ (զրպարտողն) ալ նոյն պատժոյ կ'ենթարկուի:

* * *

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ ԳԷՇԻ ԳՈՐԾԱԾԵԼ

(Էմնիյէրի սուի իսքիմալ իրմէ)

Ով որ անչափահաս տղայի մը ի վնաս, զանազան խաբեպատիր միջոցներ գործածելով ձեռքէն մուրհակ մը և կամ բան մը առնէ, երկու ամիսէն մինչև երկու տարի բանտարկութիւն կրելէն և տեղի ունեցած վնասը տուժելէն յետոյ՝ մէկ Օսմ. լիրայէն պակաս չըլլալու պայմանաւ տուգանք կը կրէ. եթէ այս չարութիւն ընողը տղայի խնամակալ և ասոր նման պաշտօն ունեցող անձ մըն է աւելի ծանր պատժոյ կ'ենթարկուի:

Ով որ իրեն վստահութեամբ յանձնուած զմուռալ (մեօնիւրլի) անգիր թուղթը, ի չափ իրեն և ի վնաս յանձնողին՝ ուղած կերպով լեցնէ և ասոր նման իրեն յանձնուած վստահութիւնը գէշին գործածէ, վեց ամիսէն պակաս չըլլալու պայմանաւ, բանտարկութիւն և հինգ լիրայէն 50 լիրայի չափ տուգանք կը կրէ:

Ուզուած ատեն վերադարձնելու պայմանաւ՝ փոխանորդի՝ աւանդի՝ և այլ անուամբ պահպանութեան համար մէկու մը յանձնուած բանը, եթէ զայն պահողը ի վնաս տիրոջ՝ ոչնչացնէ, կամ չը յանձնէ, և այլ այս կերպ վնաս մը հասցընէ, վնասը տուժելէն ետքը՝ երկու ամիսէն մինչև երկու տարի բանտարկութեան կը դատապարտուի:

Յիշեալ չարութիւն ընողը՝ եթէ ապրանքի տիրոջ սպասաւոր, գրագիր և վերջապէս թոշակաւոր մէկ ծառան է, նոյնպէս մնաօր տուժելէն յետոյ, մէկ տարիէն պակաս չըլլալու պայմանաւ՝ գործին համեմատ բանտարկութիւն կը կրէ :

* * *

Ս.ՃՈՒՐԳԻ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՅ ՄԷՋ ԽՈՌՎՈՒԹԻՒՆ

(Միւլգսեէէ վէ ումուր քիմաւթէ Քէաս գաւթսրանլար)

ժողովրդեան մէջ տեղի ունեցած առեւտրական աճուրդի և այլ գործոց մէջ, թէ խօսքով (գալլիէն) և թէ գործով (ֆիլլիէն) խռովութիւն և շփոթութիւն հանողներ, 15 օրէն մինչև երեք ամիս բանտարկութիւն և մէկ Օսմ. լիրայէն 100 Օսմ. լիրայի չափ տուգանք կը կրեն:

Ով որ շահախնդրական նկատումով սուտ լուրեր հրատարակէ, և քանի մը հողի մէջերնին համաձայնութիւն գոյացնեն ապրանքնին աւելի սուղի ծախելու, պակաս արժեքով գնելու և կամ ապրանաց և արժէթուղթերու ազատ շրջաբերութեանց դէմ համաձայնութիւն կազմեն, մէկ ամիսէն մէկ տարուան չափ բանտարկութիւն և հինգ լիրայէն 50 լիրայի չափ ալ տուգանք կը կրեն :

Ով որ արծաթի, ոսկիի փորձը (այլար) նենգէ, գոհարի և աղամանդի տեղ պարզ զարդաքարեր դնելով յաճախորդ խաբէ, և կամ պակաս կշիռ և չափ գործածէ, և այլ այս կերպ խարդախութիւնները ընէ՝ երեք ամիսէն երեք տարիի չափ բանտ և երեք արծաթ մէծիտէն պակաս չըլլալու պայմանաւ տուգանք կը կրէ :

* * *

Վ.ԽՃԱԿԱՆՆԻ ՈՒԹՈՒՆ (Ռիեանգօ)

Բարեպաշտական հաստատութեանց ինպատ կազմուած վիճակահանութիւններէ ի զստ՝ ժողովրդեան մէջ վիճակահանութիւն խսպառ արգելեալ ըլլալով, տեղի ունեցած պարագային՝ կառավարութեան կողմէ նիւթը գրաւուելէն յետոյ՝ հեղինակներուն մէկ ամիսէն մինչև վեց ամիս բանտարկութեան վճիռ կը տրուի :

* * *

ՄՆԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՍՐԵՐԱՅՈՒԹԻՒՆ

(Եճլաս վէ ԶՈՒՆՏՐԵՆԸ)

Ըստ վաճառականական օրինաց՝ խարդախութեամբ սնանկութիւն (նիլիլի իֆլասիէթ) պատրաստողներ, ինչպէս նաև անոնց օգնողներ, ոճրագործութեան պատիժ կը կրեն (մուվազգաթէն քիւրէթ ձեզասը կեօրիւլլի) . այսինքն երեք տարիէն աւելի բանտարկութիւն կը կրեն:

Թերութեամբ (քազիլրաթլը) սնանկացողները՝ մէկ ամիսէն մինչև երկու տարի բանտարկութիւն կը կրեն . (պէտք է գիտնալ որ՝ այն կերպ սնանկի մը համար բանտարկութիւն պահանջել չը պահանջելու իրաւասութիւնը առնելիքի տէրերու կամքէն կախում ունի) :

Խարեպատիր միջոցներ հեղինակելով՝ մէկու մը ձեռքէն ստակ, մուրհակ, ապրանք և այլ բաներ շորթող անձը (տօլանտընճի) երեք ամիսէն մինչև երեք տարի բանտարկութիւն կը կրէ :


* * *

ՆՅՆԳՈՒԹԻՒՆ (Սախթէքարլըգ)

Ով որ կառավարական թուղթ (Էվրագ) , զմուռ (մեօնիւր) , նշան (քամդա) , հրամանագրեր (Էմրնամէ) և այլ այս կերպ բաներ նենգէ և կեղծէ և կամ ընեղ տայ և կամ թէ զայն գիտնալով չըջարերութեան անէ , տասը տարիէն պակաս չըլլալու պայմանաւ բանտարկութիւն կը կրէ :

Ով որ առեւտրական գործոց մէջ կեղծ պարտաժուրհակներ և կեղծ գրաթուղթեր (Էվրագ) պատրաստէ և ընկերութեան մը յատուկ եղած՝ կնիք և նշաններ (մեօնիւր վէ քամդա) և այս կերպ բաներ նենգելով (քապիտ խտրէք) գործածէ և կամ թէ անոր նենգեալ ըլլալը գիտնալով հանդերձ՝ զայն գործածէ , ձեռք բերուած բաները գրաւուելէն և այս առթիւ միւս կողմի տեղի ունեցած վնասը տուժել տալէն յետոյ՝ երեք տարի բանտարկութեան կը դատապարտուի :

Ով որ յիշեալ նենգութեանց և դաւադրութեանց մէջ մեղսակցութիւն ունենայ , միեւնոյն պատիժը ինքն ալ կը կրէ . բայց եթէ գործը դեռ նախնական վիճակի մէջ՝ ինքը անմիջապէս դայ զայն կառավարութեան հաղորդէ , ինքը պատժական պատասխանատուութիւնէ կ'ազատուի :



ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(Իճրա սայիրէսի)

Գործադիր վարչութիւնը գլխաւորապէս երկու տեսակի կը բաժնուի : Ա. Պատժական (ձեգայի) : Բ. Իրաւանց (հուգուգիէ) : Պատժական վճիռներու գործադրութիւնը պատժական գործադիր վարչութեան (գապըքա , ձեգա իճրա տայիրէսի) կը պատկանի . իսկ եթէ վճիռին մէջ անձնական իրաւունք (հուգուգ : շախսիյէ) կայ , միայն այն մասը իրաւանց ճիւղի գործադիր վարչութեան (հուգուգ իճրա տայիրէսի) կը յանձնարարուի : Մինակ մայրաքաղաքին համար ըլլալով՝ իրաւանց գործադիր մասը երեք ճիւղի կը բաժնուի :

Ա. Շէրիէի ճիւղ , որ Շէրիէի դատարանէն և Պատրիարքարաններէն տրուած վճիռները կը գործադրէ :

Բ. Առեւտրական գործադիր ճիւղ (քիճարէք իճրա տայիրէսի) , զոր Ա. , Բ. Առեւտրական դատարաններէն և Ծովային Առեւտրական դատարանէն տրուած վճիռները կը գործադրէ :

Գ. Քաղաքային գործադրութեան ճիւղ (ցիգամիյէ վէ Էախտո հուգուգ իճրա տայիրէսի) , Իրաւանց (հուգուգ) Ա. և Բ. դատարաններէն տրուած վճիռները կը գործադրէ :

Ասոնցմէ զատ՝ դատարան գտնուած արուարձաններու մէջ , մէկմէկ ալ գործադիր վարչութիւններ կան :

Վերոյիշեալ երեք ճիւղ գործադիր վարչութիւններու օրէնքները իրարու յարեւման են . անոնցմէ միայն Շէրիէի ճիւղի օրէնքը մասամբ մը տարբեր է . ասոր համար պատեհ պարագային պիտի խօսիմ : Իսկ գաւառաց համար՝ այս երեք ճիւղն ալ միացուած և մէկ գործադիր վարչութեան վրայ կեդրոնացած են :

Իրաւունք շահող անձը , իր ի ձեռին ունեցած վճռագիրը՝ պարտապանը (մետեուս) որ քաղաքը որ գտնուի՝ այն տեղի Գործադիր վարչութեան կրնայ գործադրութեան դնել . այս օրէնքը պարտաւորիչ չէ . կրնայ բուն վճռագիրը առած տեղի մէջ ալ գործադրութեան դնել :

Մէկ մը վճռագիր գործադրութեան դնել կարենալու համար՝ նախ պէտք է որ մէկ օրինակը բողոքեալին հաղորդէ , երկրորդ՝ եթէ վճիռը ներկայութեան (վիճահեճ) արուած է անմիջապէս . իսկ եթէ բացակայութեան (դըլայակն) արուած է, 31 օր սպասելէն վերջ յետոյ գործադրութեան դնէ :

Գործադիր վարչութիւնը՝ անմիջապէս պարտապանին ղեկուցադիր մը (իխպարնամե) կը ղրկէ :

Եթէ պարտապանը՝ յիշեալ վճռագրին դէմ իրմէ վեր դատարանին դիմած ըլլալը յայտնէ , և այս մասին այն դատարանէն յետաձգման գիր մը (քիսիբ իճրա իլմուխայէրի) բերէ Գործադիր իշխանութեան ցուցնէ , այն ատեն Իճրան մինչև այն տեղի դատավարութեան վախճանը՝ խնդրոյ գործադրութիւնը յետաձգելու պարտաւոր է : Իսկ եթէ պարտապանը դիմած դատարանէն այս կերպ յետաձգման գիր մը չը կարենայ բերել, Գործադիր վարչութիւն՝ այլ ևս առանց դատի վախճանին սպասելու, իր գործողութիւնը կը շարունակէ : (Պէտք է գիտնալ որ յետաձգման գիրը դատարանը երեք պա-

րագայի մէջ կուտայ : Ա. Ղիեապի իլամի մը դէմ իյթիրազ եղած ժամանակին : Բ. Գործը կալուածական խնդիրի մը վերաբերեալ եղած պարագային : Գ. Բողոքողը եթէ ապագային դատը կորսնցուցած ատեն՝ դատին գումարը և ծախսեր վճարելու համար երբ երաշխաւոր մը ցուցուցած ըլլայ) :

Պարտապան մը իր պարտքը վճարելու դժկամակած միջոցին , վճռագրի մը գործադրութիւնը երկու կերպ կ'ըլլայ : Ա. Պարտապանի կալուած , և կամ ապրանք գտնալ ծախել : Բ. Բանտարկել :

Ա. — Ապրանք կամ կալուած գտնալ ծախել . պահանջին տէրը պարտապանի ապրանաց վրայ արգելում մը (հաճ) պէտք է դնէ : — Թէև այս հաճ՝ դատի մէջ և կամ իլամը իճրային դնելէն և տակաւին իխպարնամի ութ օր ժամանակամիջոցը դեռ չը լրացած՝ կրնայ դրուիլ, բայց այդ միջոցին աւելի ծախուց կարօտ է : —

Ապրանք կամ կալուած մը յետագայ պարագաներու մէջ չի կրնար ծախուիլ՝ (ա) Դատարանի որոշումով կալուածի հասոյթէն պարտապանին յատկացած ապրուստը : (բ) Իրեն և իր ընտանեաց համար պէտք եղած կարասիները : (գ) Արհեստի գործիքները : (դ) Երկրագործին գործիքը և կենդանիները , և տակաւին շտեմարան չը շեցուած երկրագործական հասոյթները . և եթէ ընկեր կայ , ընկերին բաժինը : (ե) Մառի վրայի պտուղը : (զ) Պաշտօնեաներու ամսականի 1/4 էն աւելի մասը : (է) Պաշտօնէից պաշտօնական զգեստները : (ը) Կալուածի մը հասոյթը՝ եթէ երեք տարուան մէջ պարտք վճարէ , այդ կալուած չի կրնար ծախուիլ : Յիշեալները արգելման տակ չեն կրնար առնուիլ , և պարտքի դիմաց չեն կրնար ծախուիլ : Ինչպէս նաև պարտապանի բնակարան (մեսքեճ) , և երկրագործին պէտք եղած

գետին (արագի) չեն կրնար ծախուիլ . ասոնցմէ զատ դատարանի որոշմամբ պարտապանի անհրաժեշտ եղած ապրուստ և պիտոյքը չի կրնար ծախուիլ :

Ծախուած բանը եթէ կալուած է՝ Յ1 օր անուրդի (միւզայիտե) մէջ կը շրջի : Իսկ եթէ ապրանք է՝ երեք օրուան մէջ կը ծախուի , վերջին գինը որին վրայ որ մնայ (սօս բէյ քիմտե քեքարուր իտերսե), ան ապրանքին տէր կ'ըլլայ :

Գործողութեան վերջին պարագային՝ Գործադիր վարչութիւնը անգամ մըն ալ պարտապանին զեկուցագիր կը Ղըկէ . եթէ պարտապանը իր պարտքը վճարէ՝ նախորդ գործողութիւնները չեղեալ նկատելով , ապրանքը վերստին իրեն կը վերագարձեն . բայց եթէ չը վճարէ , ալեւս առանց հարցնելու զայն կը ծախէ , ստակ կ'առնէ և այս մասին ալ Կալուածական տեսչութեան (տեճփեր խագանի) կը գրէ , որ արձանագրութիւնը գնողին անուան դարձնեն :

Ծախուած բանի մը գինէն (ա) Դատական ծախսերը կը հանուի : (բ) Պարտապանի (մետլան) տուրքերը . (գ) Տեղի և ծառաներու վարձքերը կը հանուի , և ապա մնացեալը պահանջատէրերուն կը տրուի :

Եթէ առնելիքուորները շատուոր են և գոյացած ստակը պարտքը չը գոցէ , այն ատեն համեմատական հաշուով (դուրեմարեկ) կը բաժնուի :

Պահանջատէրերը մնացած առնելիքնին որ ատեն որ պարտապանի կարողութիւն գտնեն , կրնան առնել :

Բ. — Բանտարկութիւն (հապս) . պահանջատէրը՝ եթէ պարտապանի արտաքուստ շօշափելի կարողութիւն մը չը գտնայ , բայց միանգամայն ներքնապէս տալու կարողութիւն ունենալը գիտնայ , կրնայ պարտապանի բնական թաղէն և կամ պատկանած արհեստաւորներէն

պարտապանին նոյն գումարը մէկ անգամէն (տեճարեկ) վճարելու կարողութիւն ապացուցանող , վկայագիր մը ձեռք բերելով Գործադիր վարչութեան ներկայացնել : (Պէտք է գիտնալ որ այդպիսի վկայագրի մը մէջ՝ էն նուազ երկու վկայ պէտք է ըլլայ . վկայներու պատուաւորութիւնն ալ իրենց թաղապետը և կամ արհեստապետ (եսնամ քեքխոտասի) վաւերացնէ , և վկայագրին մէջ անհրաժեշտ կերպով տեճարեկ բառ բացորոշապէս պէտք է գրուած ըլլայ) : Իճրան ասոր վրայ պարտապանը կը դատապարտէ կամ այդ ստակը վճարելու եւ կամ բանտարկուելու :

Պահանջատէր՝ պարտապանը բանտարկել ուզած միջոցին , անոր իբրև ապրուստ օրական հինգ դուրուշ պէտք է վճարէ , և մէկ ամսական ալ կանխիկ . այս կերպով մինչև երեք ամիս միշտ օրական հինգ դուրուշ վճարելով կրնայ բանտարկել տալ . անկէ ետքը այլևս վճարելով կրնայ բանտարկել տալ : Միայն մինչև վերջ երեք չի կրնար բանտարկել տալ : Միայն թէ որ ատեն որ անոր շօշափելի կարողութիւն մը գըտնայ , իր պահանջը՝ հանդերձ տեղի ունեցած ծախսերով , տոկոսով և վճարած օրականներով կրնայ ստանալ :

Որբերու պահանջի , կնոջ և զաւակաց վճարուելիք ապրուստի (նաճագա) և կառավարութեան և բարեպաշտական հաստատութեան առնելիքի համար բանտարկուող անձին՝ օրական հինգ դուրուշ չի տրուիր , և երեք ամիսէն աւելի չի բանտարկուիր :



Բ Ա Ռ Ա Գ Ի Ք Ո Յ Կ



Ա.

Աճուրդ , միւզայեհե	مزاید	Անպարտ կացուցանել , իպ-
Ամուսին , զեվեհե , զարբ	زوجه , قارى , قارين	րա խզա իքմեհ ابراسته اتمك
Ամուսնական , զեվեհեհե	زوجيه	Ապահովագիր , քեհմինար-
Անձ երրորդ , շախար սայիս	شخص ثالث	նամک
Անմեղադրելի , մազուր	معذور	— գրութիւն , սիզուրբա
Անմեղադրութիւն , մա'-	معذورت	سيفورطه
զուրիէք	معذورت	Ապացոյց , տիլիլ , իմարեհ ,
Անմիտ	سفيه	իսպար دليله اماره اثبات
» մսխող }	սեփին	Ապրուստ , նաֆագա
Աննպաստ , ալեյնիսեհ	عليه	نفقه
Անորոշ , դայրբ մուսային	غير معين	Առանձնակի , միւնեհեհեհե
Անչափահաս , սաղիր	صغير	منفرداً
— չխարուող , սաղիրբ միւ-	صغير	Առաջնորդ , բեհպեհ , զա-
մեյիզ	صغير	ղուզ
— խարուող , սաղիրբ դայրբ	صغير غير مميز	Առաւելութեան իրաւունք ,
միւմեյիզ	صغير غير مميز	حق امتياز
Անպարտագիր , իպրանամհ	ابرانامه	հազգբ իմթիյազ
		Առարկութիւն , իյթիրազ
		اعتراض
		Առաքեալ , բեսուլ , միւրսել
		رسول , مرسل
		Առաքելչ , միւրսիլ , կեհնեհ-
		رسول , كوندون
		բեհ

Առժամանակեայ, մուվա-
 գաթեն **موقتاً**
 Արգիլել խօսքէ և արարքէ,
 գավլ վէ քեսարուճսան
 հանր իք. قول وتصرفدن جرایمك.
 Արգելումն ապրանաց,
 հանգ **حجز**
 — նախադուշական հանգ
 ինքիտարի **حجز احتیاطی**
 — յետ վճար հանգ ինրայի
حجز اجرائی
 Արգարացի, հագիգի **حقیقی**
 Արեան գին, սիլէք **دیت**
 Արհեստաւոր, հանաճ, սա-
 նաքեար **اصناف، صنعتکار**
 Արկած, գազա, մուխարե-
 րե, ավարիէի **قضاء، مخطره**
 խասարաք **اواریه، خسارات**
 Աւանդ, հմանեք, վէսի-
 եայ **امانت، ودیعه**
 Աւանդ, սեփօգիք **دیوزیت**
 Աւանդատու, մուսի **مودع**
 Աւանդապահ, վէսի **ودیع**
 Աւանդատու, հմանեքնի **امایحی**
 Աքսոր, նեճի, սիւրկիւն
فقی، سورکون
 Աքսորել, նեճի, սիւրկիւն
 իքմեք **فقی، سورکون ایتمک**

Աքսոր առժամանակեայ,
 նեճի մուվագգաք **فقی موقت**
 — մշտատու, նեճի մու-
 եպպեք **فقی مؤبد**

F.

Բաժնեթուղթ հսկամ, սեհիմ
اسهام، سهم کاغدی
 Բաժանում, քազսիմ **تقسیم**
 — ժառանգութեան
 քազսիմի քերեքե **تقسیم تزک**
 Բանտարկութիւն, հապս,
 ֆիւրեք **حبس، کورک**
 — ցմահ, մուեպեքեն
 ֆիւրեք **مؤبداً کورک**
 Բարեպաշտական, վազճ
 — կալուած, ազարաքը
 մեւզուճեք **عقارات موقوفه**
 — կալուածոց նախարա-
 րութիւն, Էվզաճի Հիւ-
 մայուն նեզարեքի նեղի-
 լիսի **اوقاف، هیون نظارت جلیله سی**
 Բարոյապէս, մանեկն **معنواً**
 Բեւ, համուլէ **جمله**
 Բեռնադիր, համուլէ սե-
 նեքի, ֆոնուս **جمله سندی،**
 մեքթո **قوشمنظو**

Բեկանել, նազգ իքմեք **نقض ایتمک**
 Բնաջինջ ընել, մահվ, իլ-
 դա իքմեք **محوه، الغا ایتمک**
 Բնակարան, իգամեքլեան,
 մեքեք **اقامتگاه، مسکن**
 Բողոք, դատ, սաւլայ **دعوی**
 Բողոքող, սաւլանի **دعواچی**
 Բողոքարկու, միւսսայի
 շախս **مدعی شخص**
 Բողոքեալ, միւսսային ալէյն
 մեքի **مدعی علیه**
 Բուն, սալ **اصل**
 Բուն ինքը, սալի **اصیل**

Գործարանապետութիւն,
 ֆաբրիգանըրզ **فابریقه جیلق**
 Գտնուած բան, լուգարայ **لغظه**
 Գրել, քահրիք իքմեք **تحریر ایتمک**
 — ժառանգութիւն, քահ-
 րիքի քերեքե **تحریر تزک**
 Գրաքննութիւն, քադպիգը
 խադ ու խաքեմ **تطبیق خط وخاتم**

G.

Գեշ գործածել, սուլի իս-
 քիմալ **سؤ استعمال ایتمک**
 — վստահութիւնը — **امنیقی**
 Գիր, թուղթ, վարագա **ورقه**
 Գիրեր, թղթեր, ելրագ **اوراق**
 Գլխատում, իսամ **اعدام**
 Գնում, իքքիրա **اشترا**
 Գողութիւն, սրգաք, խըր-
 սրզըրզ **سرقت، خرسزلق**
 Գոյք, ապրանք, ետեայ, մալ
 ալ **اشیاء، مال**
 Գործադիր վարչութիւն, ին-
 րա սայրեքի **اجرا دائره سی**
 Գործարան, ֆապրիգա **فابریقه**

Դատավարութիւն, մուհա-
 քեմ **محاکمه**
 Դատարան, մահեքեմ **محکمه**
 Դատարան՝ առեւտրական
 ծովային, մահեքեմի քի-
 նարեքի պահրիյե **محکمه تجارت بحریه**
 Դատարան առեւտրական,
 մահեքեմի քիճարեք **محکمه تجارت**
 — նախնական, պիսայեք
 մահեքեմի **یادایت محکمه سی**
 — պարզ, իրաւանց, հու-
 գուզ մահեքեմի **حقوق محکمه سی**
 — վերաքննիչ, իսքիճաճ
 աստինաֆ **استیناف محکمه سی**
 — վճարեկ, քեմիզ **تمیز محکمه سی**

Դատարան պատժական ,
 Գեղա جزا محکمه
 — վարչական , մեհաբիմի
 միլիտի محاکم ملکیه
 — զինուորական , մեհաբիմի
 աստերիեک محاکم عسکریه
 — կրօնական , Երեիեک
 Դուրս , դատարան طشره
 Դրացիական իրաւունք ,
 հազգը շուճա حق شفہ
 Դրոշմաթուղթ , փուլ پول

Ե.

Եղեռն , նիւստեթ جنایت
 Եղեռնագործ , ճանի جانی
 Երաշխաւոր , Բեճիլ کفیل
 Երաշխաւորութիւն ,
 Բեճալեթ کفالت
 — բաճարցակ , Բեճալեթի
 մուլլագա کفالت مطلقه
 — չափաւոր Բեճալեթի
 — պայմանեալ մուլլագեթ
 Երեք արուարձաններ , պի-
 Լաթ սեյեսک بلاد نکه
 Երկուստեք , դարաճեյն طرفین

Զ.

Զեկուցում , իխթար , քեպ-
 լիլ , իխպար իքմեک
 اخطاره , تبليغ , اخبار (1)
 Զեկուցանել , տես Զեկու-
 ցում
 Զրկել , դարս իքմեک , մահ-
 րում իքմեک طرد ايتک
 Զրկումն քաղաքացիական
 իրաւանց , հուզուզը մե-
 Ենիլեթսեկն մահրումլիլեթ
 حقوق مدنيتدن محروميت
 Զրպարտութիւն , իճքիրա افترا

Ը.

Ընդհ. դատախազ , միւսսայի
 ումումի مدعی عمومی
 Ընդհանուր , ումումի عمومی
 Ընդհ. փոխանորդ , վեֆիլի
 ումումի وکیل عمومی
 Ընդհ. փոխանորդութիւն ,
 վեֆեալեթի ամմեک وکالت عامه
 Ընդօրինակութիւն , գօրեայ
 قويا
 Ընկերութիւն , Երեթ شرکت
 Ընկ. հաւաքական , ֆոլլեֆ.
 քիճ Երեթեթի شرکتی
 — շահակցական , գօման-
 Եթեթ Երեթեթի قوماندیت شرکتی

Ընկ.անանուն , անօնիմ Եր-
 Բեթի آنونیم شرکتی
 — գարզ , Երեթեթի ասթեթ
 شرکت عادیه
 — հաւասար , Երեթեթի մու-
 Յալեթեկ شرکت مقاوضه
 — անհաւասար , Երեթեթի
 իւնան شرکت عنان
 — կալուածական , Երեթեթի
 Եմվալ شرکت اموال
 — վարկով , Երեթեթի վիւ-
 ճիւն , شرکت وجوه
 — արհեստական , Երեթեթի
 սեկնայի شرکت صنایعیه
 — գործակցական , Երեթե-
 քի քեգապիլ شرکت تقابل
 — Երկրագործական , Երեթե-
 քի միւլարաա شرکت مزارعه
 — գործակցական , Երեթեթի
 միւսարեպեک شرکت مضاربه
 Ընկեր , Երեթی شریک
 Ընկալագիր , մագպուզ իվ-
 ու խապեթի مقبوض علم و خبری

Թ.

Թաղապետ , մահիլե մուլլա-
 քարի محله مختاری

Ժ.

Ժամանակային , վազբա
 միւլգաճեկն , وقته مضافا

Ժառանգորդ , վարիս وارث
 — կորուսեալ , վարիսի
 դայիպ وارث غائب
 Ժամանականց } միւլիւրի
 Ժամաւարտ } գեման
 مرور زمان
 Ժառանգագրել , քահիլի
 քեթեթ իքմեک تجریر زکة ايتک
 Ժողով , մեկիս مجلس
 — Պատրիարքարանի , բաթ-
 րիֆսանե մեկիսի بطریقخانه مجلسی
 — Հիւպատոսարանի , գօն-
 սօլաթօ մեկիսի قونسولاتو مجلسی

Ի.

Իրաւունք , հագ , հուզուզ
 حق , حقوق
 — անձնական , հուզուզը
 Եախսիլ حقوق شخصیه
 — ընդհանուր , հուզուզը
 ումումի کفالت عمومی
 Իրաւարար , հաթեմ حکم
 Իրաւաթոնութիւն , սուլն صلح
 — ջօնքօրտաթօ , ֆօնֆօ-
 սաթօ قونقورداتو
 Ինքնապաշտպանութիւն ,
 — պաշտպանողական , միւ-
 սաթաա مدافه

L.

Հռութիւն, սիւքիւք سکوت

Խ.

Խարերայ, օտանքրերը

Խարող « طولا ندرجی »

Խարերայութիւն, օտանքրերը, հիլեքեարլըգ

طولا ندرجیاق, حيله كارلق

Խարդախութիւն, հիլլե حيله

Խարեւ, իղֆալ էք. اغفال ايتك

— ստախօս քեազիպ کاذب

Խնդիր, մեսեկէ مسئله

դատարանդիր, մեցայի

խսսա منشا ادعا

Խնդրարկու, միւքքեքի مستدعى

Խնամակալ, վեյի, վասի وصى, ولي

Խօսքով, գավլեց, շիֆանեց

قولاً, شفاهاً

Խօստովանութիւն, իգրար,

իլլիբաֆ اقرار, اعتراف

Խորհրդակցութիւն, իսքի-

շարէ, միւքսքքէ

استشاره, مذاكره

Խորհրդակց, միւքսպիր,

միւքքեար مشاور, مستشار

Մ.

Մախս, մեսարիֆ, մասրաֆ

مصارف, مصرف

— դատական, մեսարիֆի

մուհաֆէմէ مصارف محاکمه

Մանուցազիր, մուխքէքէ

مخطره

— իխպարնամէ اخبارنامه

Մովային, պահրիէ بحريه

Կ.

Կաշառք, բիւքլէք رشوت

Կալուածական տեսչութիւն

սեֆքէր խազանի նեգարէքի

دفتر خاقان نظارت جليله

Կալուած, հմվալի դայրը

մեցգուլէ اموال غير منقوله

հմլազ, ազար املاك, عقار

Կեղծօրէն մուվազաա مواضعه

Կեղրոն, մեքէգ سرکز

— վաճառատեղի, քիմա-

րէքկեան سرکز بجاگاه

Կտակ, վասիէք وصيت

Կրօնական, շէրիէ شرعيه

— դատարան, մահֆէմէի

շէրիէ, محکمه شرعيه

Կրող, համիլ, حامل

Հ.

Հակառակորդք, միւքիխա-

սիմէյն متخاصمين

Հակառակորդ, միւքսայի

ալլիյն مدعى عليه, معترض

Հաշուեկշիւ, պիլանջօ

بلانچو

Հաշուեյարդար, միւքիլգ ميز

— փոխանորդ, սինքիک

Հաղորդել, քէպլիլգ էքմէք

تبليغ ايتك

Հանգուցեալ, միւքիվէֆա

متوفى

Համեմատական, դուրեմա-

քեն, նիսպի غرماً تا, نسبي

Հաստատութիւն, իսպար

اثبات

Հաւաքարար, միւքքեմաէն

مجمعاً

Հեղինակութիւն, } սուլն, صنع

— յօրինում } امر

Հրաման, հմر امر

Հրամայող, ամիր امر

Հրամայեալ, մեմուր مأمور

Հրամանագիր հմրնամէ

امرنامه

Մ.

Միաբանութիւն, իքքի-

ֆազ اتفاق

— իւնիօն اونيون

Մակդիր, իւնվան عنوان

Մենաշնորհ, իւքքիեազ امتياز

Միբերանոց, մաղազայ مغازه

Միջնորդ, սմսար, շէլալ

سمسار, دلال

— միւքիվէսիք, متوسط

— մունետիկ, շէլալ دلال

Մեծամանութիւն, հֆսէ-

րիէք اكثریت

Մուրհակ, սեցէس سند

— հրամանի, հմրէ մուհա-

րէք սեցէսի مره محرر سندى

— պարզ, աքի սեցէس دادى سند

— վաւերացեալ, մուսաս-

սազ սեցէسز مصدق سندى

— պաշտօնական, սեցէսի

րէսմի سند رسمى

— բաց, աշրգ պօնօ آجيق بونو

— հրամայութեւթ, քէսիլլէ

հմրի, շէք تاديه امرى, چك

— բնակավայրի, իգամք-

կեան սեցէسز اقامتگاه سندى

Մեղսակից, ֆա'իլի միւք-

քէրէք, فاعل مشترك

Միջամուխ ըլլալ, սախիլի

داخل دعوى اولى ساقل

Միանգամէն, շէֆաքէն دفعة

3.

Յափշտակել, ղասպ էքմէք

غصب ايتك

Յափշտակող, ղասիպ

غاصب

Յափշտակեալ, մաղսուպ

منصوب

Յանձնարարել, հեկվալի էք-

մէք حواله ايتك

Յանձնարարութիւն, սիւսա-
րիւ, հեղալիك
Յանձնակատար, գօնիսի-
օննի

Յետաձգման գիր, քեկիսի
իճրա իլմուխապերի

Յանձնառութիւն, քեանիւս
— ստանձնում, իլքիգամ

Յանցանք, գապահար
— ծանր, նիւննա

Յատկանիշ, մարգա, ալա-
մէք

Յետադարձ, բերեք
Յենակէտ, իսքինասկեան

Յենլով, իսքինասեան
Յենեալ, իսքինասեհրեհ

Յօրինում, սուն

Ն.

Նախնական դատարան, պի-
սայեք մանեհեհի

Նաւ, —

Նաւողչէք } ցալլ ٴٴٴ
Նաւավարձք } ցալլին ٴٴٴ

Նաւաստի, քայնա

Նաւային վարչութիւն, ի-
ման ցալլեհի

Նենգեալ, սախքե

Նենգութիւն, սախքեհար-
լըգ

Նիւթապէս, մասեքեհն

Նուազուրդ, միւնագասայ

Նուէր, հիպի

Նօտար, մուգավիլար մու-
հարրիքի

Շ.

Շղթայարար, միւքեհլեհ-
լին

Ո.

Ոճիր, հիւննա
— ծանր, հիւնայեք

Որբ, եքիմ
Ուղեւորութիւն, սիեանեք

— Նաւով, սեյր ու սեհեհ
հքիլեհ

Չ.

Չափահաս, պալիղ
անշափահաս, դայրը

պալիղ

Պահանջ, մարլուպար, ա-
լանագ

Պահանջատէր, պաւնագլու,
ցային, սահա-

Պարզ, աշի, պասիղ, սասե

Պարտք, սեյն, պօրն, զիսեք-

Պայմանաւոր, շարդա մու-
ալլագ

Պայման, շարդ, մուգավիլե
Պայմանաժամ, վասե, հեհլ

Պայմանագիր, մուգավիլե-
նամե

Պատիժ, նեգա
Պարպեղ, քախիլի

Պատասխանատու, մեհուլ,
գամին

Ս.

Սեղանաւոր, սարաճ
— գամպիեօ

Մանկիկ, միւնիլիս

— արդարացի, միւնիլիս
հագիգի

— թերութեամբ, քագսի-
րաքի միւնիլիս

— խարդախ, հիլիլի միւն-
իլիս

Ստացուածք, հմվալի մեհ-
գուլի

— անշարժ, հմվալի դայրը
մեհգուլի

Ստուգել, քահգիգ Ե՛՛՛՛
— պարտքը, քահգիգի սիւ-
լիւն

Ստանձնել, քեանիւս
— յանձնառութիւն, իլքի-
գամ

Ստանալ, ախգ ու գապգ իք.
աչդ զիս Ե՛՛՛՛

— քեհլիլում

Վ.

Վարկ, իլքիպար
Վաճառական, քիւնար

Վաճառում, պիլ, քիլուխք
բիւց, քրօչտ

Վարձք, իւնեք
— կալուածի, ինարե

Վարձու տալ, ինար երմեք
 ايجار اتمك ضرر زيان
 Վերահաստատել, իպգա
 ابقا ضمانت
 Վերաքննութիւն, իսրինաճ,
 իյ սեյի ռուեք երմեք
 استيناف، اعاده روتت اتمك
 Վերաքննիչ ատեան, իսրի-
 նաճ մահեմեքի
 استيناف محكمه سي
 Վերակոչում, իյասեի մու-
 հաբեմեք
 اعاده محاكمه
 Վճիռ ջնջել, բեկանել,
 նազզ, ֆեպս
 تقض، فسخ
 Վճուարեկութիւն, նազզ
 تقض
 Վճուարեկ ատեան, բեմիզ
 մահեմեքի
 تميز محكمه سي
 Վիճելի, մուարազալի
 معارضه لي
 Վճուազիր, իլամ
 اعلام
 Վաւերագիր, իլննեք
 حجت
 Վաւերացնել, ատեք
 تصديق اتمك
 — սահ ֆեթիսե իրմեք
 صح كشيده اتمك
 Վճիռ, իլեմ
 حكم
 — բացակայութեան, իլեմ-
 մի ղիեապի
 حكم غيابي
 — ներկայութեան, իլեմի
 حكم وجاهي
 Վիճանի
 حكم وجاهي
 — առժամանակեայ, ինրաի
 اجراءى موقت
 մուվազգաք

Վնասազին, զարար զիեան
 ضرر زيان
 Վնասի հատուցման պահանջ
 փրոքեսո
 پروتستو
 Վնաս, զարար զիեան, խա-
 սարաք
 ضرر زيان، خسارات
 — ծովային, ալարիե
 آواريه
 Վստահութիւն, հմնիեք
 امنيت
 — գէշ գործածել, հմնիե-
 քի սուի իսրիմալ երմեք
 امنيتي سؤ استعمال اتمك

Վստահելի, հմն
 امين
 Վստահեալ, միւքեմեմե
 متأمنا

S.

Տեղեկագիր, բափօք
 رابورط
 Տոմար, Տեքթեք
 دفتر
 — օրական, եվմիե Տեքթե-
 քի
 يومية دفتری
 — մայր, պիլանցօ Տեքթեքի,
 անա Տեքթեքի
 بلانچو دفتری، انا دفتری
 — ընդօրինակութեան, զօ-
 փի Տեքթեքի,
 قويه دفتری
 Տնօրէն, միւսիք
 مدير
 Տուգանք, նեզայի նազսի
 جزای تقدي

8.

Յնորած, մաքուն
 معنوه
 Յոպ, միւսրիճ
 مسرف


Փ.

Փորձեալ, աեար
 عيار
 Փաստ, Տեղիլ, իսպաք, հմարե
 دليل، اثبات، اماره
 Փոխանուն, նամի միւս-
 քեար
 نام مستعار
 Փոխաւանդ, իյարե
 اعاره
 Փոխարէն, պեճել, մուզա-
 պիլ, ըվազ
 بدل، مقابل، عوض
 Փոխիսակի գործածութիւն,
 մուհաիյե
 مهابه
 Փոխանորդեալ, փոխանորդ-
 կարգող, միւվեֆիլ
 موكل
 Փոխանորդութիւն, վեքեա-
 լիք
 وكالت
 Փոխանորդ, վեֆիլ
 وكيل
 — բացարձակ, վեֆիլի
 وكيل مطلق
 — բացակայութեան, վեֆի-
 լի մուսախիսար
 وكيل مسخر

Փոխանակագիր, փօլիչայ
 پولچه
 Փոխանցել, նիքօ, Տեվր եք-
 մեք
 جيرو، دور اتمك
 Փոխանցող, նիւանքա, Տեվր
 کسکين دور ايدن
 Փոխհմանեք, իարե
 اعاره امانت، اماره
 Փոխանունութիւն, իսրիսանե,
 իսրիգրազ
 استقراض، استدانه
 — ծովային, իսրիգրազը
 պահրիյե
 استقراض بحريه
 Փոխատուութիւն, իսանե,
 իգրազ
 اقراض، ادانه
 Փոխադրութիւն, նազզ
 نقل
 Փոխադրող, հմանեքնի
 امانتي

Ք.

Քաղաքական, նիլամիե
 نظاميه
 Քաշող, ֆեթիսեմի
 كشيده جى
 Քաշեալ կողմ, մուխաքապ
 مخاطب
 Քաշուող »
 کيله
 Քիլե, ֆիլե, բօնկաքօ
 پونکياپو
 Քիլեչափ, բօնկաքօ
 پونکياتو



Ա.

Ա.	Մահժամէի Շէրիեէ (Կրօնական Դատարան) .	1
Բ.	» Հուզուզ (Իրաւանց Դատարան) .	5
Գ.	Ճէզա Մահժամէսի (Պատժական Դատարան) .	6
Դ.	Մէհաքիմի Իտարէ (Վարչական Դատարան) .	7
Ե.	» Ասքէրիեէ (Զինուորական Ատեան) .	7
Զ.	Բաթրիգիսանէ Մէճլիսի (Պատրքքն. Ժողով) .	7
Է.	Գօնսուլաթօ Մէճլիսի (Հիւպատոսարանի Ժողով) .	8
Ը.	Թիճարէթ Մահժամէսի (Առեւտր. Դատարան) .	8
	Պիրինճի Թիճարէթ. Ա. Առեւտր. Դատարան .	9
	Իքինճի » Բ. » »	9
	Թիճարէթ Պահրիյէ. Ծովային Առեւտր. Դատ .	10
	ՎԱՃԱՌԱԿԱՆ (Թիւճնար)	12
	Օրհաչիւ (եէվմիէ) . (բ) Մայր հաչիւ (պէոյիւք	
	սէֆթէր . (գ) Նամակներու ընդօրինակու-	
	թեան տետր (գորիեայ)	17
	ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (Շիրֆէր)	18
(ա)	Գուլէթթիֆ . (բ) Գոմանտիթէր, Անօնիմ 18, 20,	24
	Շիրքէթի Մուֆալէզէ, — Ինան, — Էմվալ .	25
—	Թէգապիւլ (սէնայի), — Վիւճուճի, — Միւ-	
	տարէպէ	26
—	Գարզ, — Պէզաս, — Միւզարրա, — Մէ-	
	սաքաթ, — Միւք	27, 28
	Վաճառական ընկերաց մէջ ծագած վէճեր	28
	(Պէյն էչչիւրէքեա վազը օլան մուարազա հազ-	
	զընտա)	28
	Իրաւարարագրի օրինակ (Թահքիմնամէ)	32

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ (Գօմխոսիօնըրզ)	34
ՓՈԽԳԻՐ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ (Փօղիչսա	36
ՎԷ ԻՐ ՍԿՂԲՈՆՆԵՐ	43
ՀՐԱՄԱՆԵՒ ԵՒ ՊԱՐՁ ՄՈՒՐ ՀԱԿՆԵՐ (Էմրե- մուհարրեք վե ասի սեկեասք)	46
ՓՐՈԹԷՍ ԵՒ ՎՆԱՍԱՊԱՀԱՆՁ (Փրօթես վե զարար զիեան) և իր սկզբունքը	49
ՓՈԽԱՆՁՈՒՄ ԵՒ ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ (Ճիւրօ վե ֆեփայեք) և իր սկզբունքը	50
(ա) Մնձնական երաշխաւորութիւն (Քէֆալէթի նէֆայէ)	51
(բ) Դրամական երաշխաւորութիւն (Քէֆալէթի մալիյէ)	58
ՄՆԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐ ՍԿՂԲՈՒՆՔԸ (Իֆ- չասիեք վե հանր)	61
Հստ ինքեան արգելեալ անձինք. Դատաւոր վճի- ռով արգելեալ անձինք	65
Մնանկ, Լայն	67
ՓՈԽԱՆՈՐԴՆԵՐ ԵՒ ՍԻՆՏԻՔ (ՀԱՇՈՒԵ- ՅԱՐԴԱՐ) ԵՒ ԻՐ ՍԿՂԲՈՆՆԵՐ	69
Փոխանորդութիւն Մէճէլլէի օրինօք	74
Առաքեալ (բէսուլ). Հրաման (էմր)	76
Սինաիք	80
Ապրանայ Արձանագրութիւն (Թահրիբի էմվալ)	81
Մնանկի պարտքերուն արձանագրումը (Թահրի- բի տիւլին)	84
Համաձայնութիւն (Քօնքօրտաթօ) և Իրաւախօ- հութիւն (սուլհ), և իրենց սկզբունքները	87
Իրաւախօհութիւն (սուլհ)	88
Անպարտացում (Իպրա)	91
Քօնքօրտաթօ	91

Քօնքօրտաթոյի ջնջումը (Ֆէսիս վէ իլգասը)	96
Միաբանութիւն կամ Իւնիօն (Իթթիֆազ վէ իւնիօն)	97
Մնանկին երաշխաւորները կամ առնչութիւն ու- նեցողները (Միւֆիլսին քէֆիլլէրի վէ ես սայր միւթթահիլէրի)	100
Մենաշնորհալ առնելիքի տէրերու մասին (Իմ- թիյազլը ալաճագլըլար հագգընտա)	101
Ամուսնական իրաւունքներ և իր սկզբունքը (Հուգուզը զէվճիեաթ)	102
Մնանկի մը կալուածի վաճառումը (Էշեայի դայր մէնգուլէսին ֆիրուլթի հագգընտա)	106
Աւանդ (Էմանէթ). Մնանկի քով գտնուած աւան- դի յետակոչում (Իսթիրտասը էշեայ)	106
Փոխաւանդ (Իյարէ)	110
Մնանկութեան որոշման դէմ բողոք (Իֆլաս հիւքմի սուտուրընտա մուղայիրիէթի)	111
ԹԵՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԽԱՐԴԱԽՈՒԹԵԱՄԲ ՍԸ- ՆԱՆԿՈՒԹԻՒՆ և իր սկզբունքը (Թագսի- րաքը վե հիլիլի իֆչասիեք հագգընտա	112
Արդարացի (հագգիլ) և Թերութեամբ (թագսի- րաթլը միւֆիլս)	114
Խարդախ կամ կեղծ մնանկ (հիլէլի միւֆիլս)	115
Մնանկութեան մեղսակիցները (Ղայրիլէր թարա- ֆընտան իրթիքեապ օլընան ճիւնհա)	116
Պատուոյ վերակոչում (Իյատէի իյթիպար	116
Ք.	
ԾՈՎԱՅԻՆ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ	118
Նաւու տէրեր. Նաւապետ (զարուտան)	121
Նաւավարձութիւն (իսթիճարի սէֆային)	122
Նաւավարձք (նալլ)	123
Ճամբորդ (եօլճի)	125

Ծովային փոխառնութիւն (Իսթիզրազը պահրի) . 126
 Ապահովագրութիւն (սիկուրթա) 127
 Արկածեալ ապրանքէ ձեռնութաի ըլլալ (թէրքի էշեա) 129
 Ծովային շէաս (Ավարիէ, Խասարաթը պահրիյէ) 130
 Փամանցք և անլսելի եղած դատերը 133
 (Միւրիւրի ղէման վէ մէսմու օլմեան տավլար)

Փ.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ (Ուսուչը Մուհաֆեմարը Հուզուզիյե) 135
 Բացակայութեան վճուի ղէմ առարկութիւն . . 139
 (Հիւքմի դիեապի ալէյի՛նատ էյթիբազ)
 Վերաքննութիւն (Իսթիմաֆ) 140
 Վերակոչում (Իյատէի մուհաքէմէ) 142
 Վճուարեկութիւն (Թէմիզ) 143

Պ.

ՊԱՏՃԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ (ձեզա Գանուզիերի) 145
 Կաշառք (բիւշվէթ). Սուտ երգում և սուտ վկայութիւն (Եալան եէմին վէ եալան շահատէթ).
 Զրպարտութիւն (իֆթիրա) 146
 Վստահութիւն գէշի գործածել 147
 (Էմիիյէթի սուի իսթիմալ իթմէք)
 Աճուրդի և առեւտր. գործոց մէջ խռովութիւն . 144
 Վիճակահանութիւն (Բիեանգօ) 149
 Մնանկութիւն և իսաբեբայութիւն 149
 (Իֆլասիէթ վէ սօլանաբըճըրք)
 Նենգութիւն (Սախթաքեարըք) 150

Ե.

ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (Ինրա սալիքսի) 151
 ԳՐՈՇՄԻ ՕՐԷՆՔ (Թալիպ Եիզալիսալեալի) . 156
 ԲԱՌԱԳՐՔՈՅ 159



Վ Ի Ռ Ա Կ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
7	26, 28	կը նայի, կրնայ	կը նային, կրնան
39, 40	28, 14	վճարելիք	քաշուող
44	15	Մէճէլէի	Մէճէլլէի
46	3	կ'ուտայ	կու տայ
47	19	դիմացիի	դիմացինի
49	6	15 օր	մինչև 15 օր
51	24	Պայմանաւոր	Բ.—Պայմանաւոր
57	1	փոխանձողը	փոխանցողը
60	18	(դուրիմա)	(դուրեմա)
64	25	ստանայ	ուրանայ
68	13	միջնորդաբար	միջնորդարար
76	24	շարժական	շարժական
79	2	ծախսած	ծախսած
91	9	բացակայութիւն	բացակայութեան
134	10	վերջ 21 օր	21 օր վերջ
159	2	استه	استا
160	16	موقفه	موقوف

JULY 1864

DATE	DESCRIPTION	AMOUNT
July 1st
July 2nd
July 3rd
July 4th
July 5th
July 6th
July 7th
July 8th
July 9th
July 10th
July 11th
July 12th
July 13th
July 14th
July 15th
July 16th
July 17th
July 18th
July 19th
July 20th
July 21st
July 22nd
July 23rd
July 24th
July 25th
July 26th
July 27th
July 28th
July 29th
July 30th

75

« Ազգային գրադարան



NL0218354

38.145

Հեղինակին կնիքը չը կրող օրինակը
կեղծ է

Պ. Կոչարյան

Պիս 15 Ղրբ.

Մեծարանակ ուզողները պետք է դիմեն Հե-
ղինակին գրասենեակը, Կ. Պոլիս Սուլթան Համալ.
Թեքուզգը Խան, Թի. 13:

معارف نظارت جلیله سنک و مطبوعات داخله مدیریت علیہ سنک
۳۴۰ نومرولی رخصتیه طبع اولنمشدر .